

ԳՈՐ ԳԵՎՈՐԳՅԱՆ

**ԵԳԻՊՏՈՍԻ ԱՐՏԱՔԻՆ
ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԱՐԱԲԱԿԻ
ՈՒՂՈՒԹՅՈՒՆ ԵԱԽԱԳԱՀ
ԴՈՍԻ ՄՈՒԲԱՐԱՔԻ ԻՇԽԱՆՈՒԹՅԱՆ
ԱՌԱՋԻՆ ՏԱՄԱՍՅԱԿՈՒՄ
(1981-1991)**



ՀՀ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱ
ԱՐԵՎԵԼԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԲԱՍՏԻՈՆԻ

✓

ԳՈՐ ԳԵՎՈՐԳՅԱՆ

ԵԳԻՊՏՈՍԻ ԱՐՏԱՔԻՆ
ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԱՐԱԲԱԿԱՆ
ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆԸ ՆԱԽԱԳԱՀ ՀՈՍՆԻ
ՍՈՒԲԱՐԱՔԻ ԻՇԽԱՆՈՒԹՅԱՆ
ԱՌԱՋԻՆ ՏԱՍՆԱՄՅԱԿՈՒՄ
(1981-1991)

ԵՐԵՎԱՆ
ՀՀ ԳԱԱ «ԳԻՏՈՒԹՅՈՒՆ» ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ
2018



NATIONAL ACADEMY OF SCIENCES OF THE REPUBLIC OF
ARMENIA
INSTITUTE OF ORIENTAL STUDIES

GOR GEVORGYAN

**ARAB DIRECTION OF FOREIGN
POLICY OF EGYPT WITHIN THE
FIRST DECADE OF PRESIDENT
HOSNI MUBARAK's RULE (1981-1991)**

YEREVAN
“GITUTYUN” PUBLISHING HOUSE OF THE NAS RA
2018

НАЦИОНАЛЬНАЯ АКАДЕМИЯ НАУК РА
ИНСТИТУТ ВОСТОКОВЕДЕНИЯ

ГОР ГЕВОРГЯН

АРАБСКИЙ ВЕКТОР ВНЕШНЕЙ
ПОЛИТИКИ ЕГИПТА ПЕРВОЙ
ДЕКАДЫ ПРАВЛЕНИЯ ПРЕЗИДЕНТА
ХОСНИ МУБАРАКА
(1981-1991)

ЕРЕВАН
ИЗДАТЕЛЬСТВО «ГИТУТЮН» НАН РА
2018

Տպագրվում է ՀՀ Գիտությունների ազգային ակադեմիայի
արևելագիտության ինստիտուտի գիտական խորհրդի որոշմամբ

Պատասխանատու խմբագիր

ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ, պատմական գիտությունների
դոկտոր, պրոֆեսոր Ն.Հ. Հովհաննիսյան

Գևորգյան Գոռ

Գ 479 Եզիպտոսի արտաքին քաղաքականության արարական ուղղությունը
նախազահ Հոսնի Սուլթանի կառավարման առաջին տասնամյակում
(1981-1991 թթ.)/Գ. Գևորգյան.- Եր.: Գիտություն, 2018.- 232էջ:

Մենագրությունը նվիրված է Եզիպտոսի արտաքին քաղաքականության արարական ուղղության ուսումնասիրությանը նախազահ Հոսնի Սուլթանի կառավարման առաջին տասնամյակում (1981-1991 թթ.):

Աշխատանքում կարևորված է Եզիպտոսի դերակատարությունը միջարարական հարաբերությունների հարթակում և տարածաշրջանային հիմնախնդիրների հաղթահարման գործընթացներում: Թեմայի ուսումնասիրությունն արժեքավոր է նաև նշված ժամանակահատվածում եզիպտա-իսրայելական, իսրայելա-ամերիկյան հարաբերությունների, ինչպես նաև տարածաշրջանային գործընթացներն ավելի համապարփակ և խորը գնահատելու տեսանկյունից: Մենագրության մեջ ներկայացված են փաստեր ու գնահատականներ, որոնք կարևոր են Հայաստանի Հանրապետության արտաքին քաղաքականության մերձավորարևելյան ուղղության մշակման տեսանկյունից:

Գիրքը նախատեսված է քաղաքագետների, մերձավորարևելյան տարածաշրջանով գրադպող մասնագետների, ուսանողների և ընթերցող լայն շրջանակների համար:

Published by the decision of the Scientific Council of the Institute of Oriental Studies of the National Academy of Sciences of the Republic of Armenia

Editor in-chief
Arax Pashayan, PhD, Associate Professor

This research is devoted to the study of the pan-Arab upheavals also known as the Arab Spring which has started since the end of December 2010 and continues up to day in a number of Arab countries. The emerged nationwide movements were targeted at transforming already exhausted themselves various tribal, social and political institutions- heritage from the Medieval, as well as trying to establish modern political systems, to transform state institutions and form modern advanced values system. The process of pan-Arab was researched by the examples of Tunisia, Egypt, Yemen, and Libya. The preference was given to those countries where the Arab Spring caused the change of power.

The book may be of interest to: political analysts, experts, students, Middle East specialists, and a wide range of readers.

Печатается по решению ученного совета Института востоковедения
Национальной академии наук РА

Ответственный редактор

Член-корреспондент НАН РА, доктор исторических наук, профессор
Н.О. Оганесян

Монография посвящена изучению арабского вектора внешней политики Египта в первой декаде правления президента Хосни Мубарака (1981-1991 гг.)

В работе освещается ключевая роль Египта в межарабских отношениях и в процессах урегулирования региональных проблем.

Исследование темы важно также с точки зрения более системного и всеобъемлющего анализа египетско-израильских, израильско-американских отношений и региональных процессов. В монографии представлены факты и оценки, которые важны с точки зрения планирования развития ближневосточного вектора внешней политики Республики Армения.

Монография рассчитана на политологов, специалистов по ближневосточному региону, студентов и широкий круг читателей.

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ	13
ԳԼՈՒԽ ԱՌԱՋԻՆ	
ԵԳԻՊՏՈՍԻ ՎԵՐԱԴԱՐՁՆ «ԱՐԱԲԱԿԱՆ ՀՆԱՏԱԼՔ» (1981-1989 թթ.)	
1.1 Եգիպտոսը և արաբական աշխարհը (1978-1981 թթ.)	25
1.2 Եգիպտոսի արտաքին քաղաքական նոր հայեցակարգի ձևավորումը (1980-ականների սկիզբ)	51
1.3 Եգիպտոսի դիրքորոշումը իրաք-իրանյան պատերազմի նկատմամբ և «արաբական ընտանիք» Եգիպտոսի վերադարձի առաջին փուլը (1980-1984 թթ.)	60
1.4 Եգիպտոսի քաղաքական դերի վերարժնորումն արաբական աշխարհում և «արաբական ընտանիք» վերադարձի երկրորդ փուլը (1984-1989 թթ.)	73
ԳԼՈՒԽ ԵՐԿՐՈՐԴ	
ԵԳԻՊՏՈՍԻ ԴԻՐՔՈՐՈՇՈՒՄԸ ՊԱՂԵՍԻՆՅԱՆ ՀԱՐՑԻ ՆԿԱՏՄԱՄԲ (1981-1991 թթ.)	
2.1 Եգիպտոսը, պաղեստինյան հարցը և 1982 թ. Իսրայելական «Խաղաղություն Գալիլեյին» ռազմական գործողությունները Լիբանանում	81
2.2 Եգիպտոսի դիրքորոշումը պաղեստինյան հարցի նկատմամբ (1983-1991 թթ.)	97
ԳԼՈՒԽ ԵՐՐՈՐԴ	
ԵԳԻՊՏՈՍԸ ԵՎ ԻՐԱՔԱ-ՔՈՒԿԵՅԹՅԱՆ ՃԳՆԱԺԱՄԸ (1990-1991 թթ.)	
3.1 Եգիպտա-արաբական հարաբերություններն իրաքարուվելյան ճգնաժամի նախօրեին	124
3.2 Իրաքի հարձակումը Քուվեյթի վրա. «Փոքրիկ անապատում» ռազմական գործողությունը և Եգիպտոսը	132

3.3 Եզիպտոսը և ուժերի նոր հարաբերակցությունն արա- բական աշխարհում Իրաքի դեմ 1991 թ. պատերազմի ավարտից հետո	145
ՎԵՐՋԱԲԱՆ	155
.....	160
Summary	184
Резюме	
ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԱՂԲՅՈՒՐՆԵՐԻ ԵՎ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ	211

CONTENTS

PREFACE	13
CHAPTER ONE	
<i>THE RETURN OF EGYPT TO THE "ARAB FAMILY" (1981-1989)</i>	
1.1 Egypt and the Arab World (1978-1981)	25
1.2 Formation of a New Foreign Policy Concept of Egypt (the early 1980's)	51
1.3 Egypt's Position on the Iraqi-Iranian War and the First Phase of the Return of Egypt to the "Arab Family" (1980-1984)	60
1.4 Re-estimation of Egypt's Political Role in the Arab World and the Second Phase of the Return of the "Arab Family" (1984- 1989)	73
CHAPTER TWO	
<i>EGYPT'S POSITION ON PALESTINE ISSUE (1981-1991)</i>	
2.1 Egypt, the Palestinian Issue and the 1982 Conflict; Israeli "Peace to Galilee" Military Operations in Lebanon	81
2.2 Egypt's Position on Palestinian Issue (1983-1991)	97
CHAPTER THREE	
<i>EGYPT AND IRAQI-KUWAITI CRISIS (1990-1991)</i>	
3.1 Egypt-Arab Relations on the Threshold of the Iraq-Kuwaiti Crisis	124
3.2 Iraq's Attack on Kuwait; " Desert Storm" Military Operations and Egypt	132
3.3 Egypt and the New Correlation of Forces in the Arab world, after the End of the 1991 War against Iraq	145

CONCLUSION	155
SUMMARY IN ENGLISH	160
SUMMARY IN RUSSIAN	184
LIST OF SOURCES AND LITERATURE	211

СОДЕРЖАНИЕ

ВВЕДЕНИЕ	13
ГЛАВА ПЕРВАЯ	
ВОЗВРАЩЕНИЕ ЕГИПТА В “АРАБСКУЮ СЕМЬЮ” (1981-1989 ГГ.)	
1.1 Египет и арабский мир (1978-1981 гг.)	25
1.2 Формирование новой внешнеполитической концепции Египта (начало 1980-х)	51
1.3 Позиция Египта в отношении ирако-иранской войны и первый этап возвращения Египта в “арабскую семью” (1980-1984 гг.)	60
1.4 Переоценка политической роли Египта в арабском мире и второй этап возвращения Египта в “арабскую семью” (1984-1989 гг.)	73
ГЛАВА ВТОРАЯ	
ПОЗИЦИЯ ЕГИПТА В ОТНОШЕНИИ ПАЛЕСТИНСКО- ГО ВОПРОСА (1981-1991 ГГ.)	
2.1 Египет, палестинский вопрос и израильская военная операция в Ливане “Мир Галилее” 1982 г.	81
2.2 Позиция Египта в отношении палестинского вопроса (1983-1991 гг.)	97
ГЛАВА ТРЕТЬЯ	
ЕГИПЕТ И ИРАКО-КУВЕЙТСКИЙ КРИЗИС (1990-1991 ГГ.)	
3.1 Египетско-арабские отношения накануне ирако-кувейт- ского кризиса	124
3.2 Вторжение Ирака в Кувейт. Военная операция “Буря в пустыне” и Египет	132

3.3 Египет и новый паритет сил в арабском мире после окончания войны в Ираке в 1991 г.	145
ЗАКЛЮЧЕНИЕ	155
SUMMARY	160
РЕЗЮМЕ	184
СПИСОК ИСПОЛЬЗОВАННЫХ ИСТОЧНИКОВ И ЛИТЕРАТУРЫ	211

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Միջարաբական հարաբերությունները միջազգային հարաբերությունների կարևոր քաղաքիչն են: Առանց այդ հարաբերությունների ուսումնասիրության դժվար է ճիշտ ըմբռնել տարածաշրջանային զարգացումները: Այս տեսանկյունից դրանց ուսումնասիրությունն ունի ոչ միայն գիտական, այլև քաղաքական և գործնական կարևոր նշանակություն:

1973 թ. արաբ-խրայելական պատերազմից հետո, Եգիպտոսի արտաքին քաղաքականության մեջ ի հայտ եկան Խրայելի հետ համաձայնության զայր միտումներ, որոնք հանգեցրին 1978 թ. թեմփիլիոյան համաձայնագրերին, իսկ այնուհետև 1979 թ. Եգիպտա-խրայելական անջատ հաշտության պայմանագրի ստորագրմանը: Եգիպտոսի նախագահ Անվար Սադաթի (1970-1981) քաղաքականությունը դժգոհության ալիք առաջացրեց արաբական Արևելքում, որի արդյունքում Եգիպտոսն արաբական աշխարհում հայտնվեց քաղաքական մեկուսացման մեջ: Սակայն 1980 թ. հոկտեմբերի 6-ին՝ Անվար Սադաթի սպանությունից հետո, Եգիպտոսի նորընտիր նախագահ Հուսեի Մուտարաքի արտաքին ծկուն քաղաքականության շնորհիվ Եգիպտոսը կարողացավ վերականգնել իր երբեմնի ազդեցիկ և կայուն դիրքերն արաբական աշխարհում:

Եգիպտոսի 1981-1991 թթ. պատմությանը բնորոշ են քաղաքական նոր մոտեցումները, որոնք առանձին դեպքերում ձեռք էին բերում տարածաշրջանային կարևոր նշանակություն: 1981-1991 թթ. Եգիպտոսին հաջողվեց, պահպանելով Խրայելի հետ խաղաղ գոյակցության և վերջինիս հետ թեմփիլիոյան համաձայնագրերով ամրագրված հարաբերությունները, հաղթահարել քաղաքական մեկուսացումն արաբական աշխարհում, ինչպես նաև հնարավորինս հակագել Խրայելի ազրեսիվ քաղաքականությանը: 1980-ականների վերջին սերտ հարաբերություններ հաստատելով արաբ-խրայելական հակամարտության մեջ ներ-

գրավված կողմերի հետ՝ Եզիպտոսը փորձեց միջնորդի դեր ստանձնել մերձավորարևելյան հակամարտության կարգավորման գործում՝ իր արտաքին քաղաքականության մեջ մեծ տեղ հատկացնելով պաղեստինյան հարցի խաղաղ կարգավորմանը:

Եզիպտոսի հավասարակշռված և կառուցողական դիրքությունը 1980-1988 թթ. Իրաք-իրանյան պատերազմի, 1982 թ. Լիբանանում խրայելական ազրեսիայի, 1990 թ. Իրաքի՝ Քուվեյթ ներխուժման հարցում, ինչպես նաև անմիջական մասնակցությունն Իրաքի դեմ միջազգային կոռալիցիայի ուազմական գործողություններին, նպաստեցին արաբական աշխարհում Եզիպտոսի քաղաքական դերի վերաբերմանը, ինչպես նաև վերջինիս «արաբական ընտանիք» վերջնական վերադարձին:

Եզիպտոսի արդի շրջանի պատմության ուսումնասիրությունը գրեթե անհնար է առանց նշված ժամանակաշրջանում Եզիպտոսի արաբական քաղաքականության հետազոտության, որի շնորհիվ է լ ավելի տեսանելի են դառնում մերձավորարևելյան տարածաշրջանի հիմնահարցերի հետ կապված մի շարք իրողություններ, հստակեցվում է դրանց նկատմամբ Եզիպտոսի դիրքորոշումը: Թեմայի ուսումնասիրությունը կարևոր է նաև նշված ժամանակաշրջանում տարածաշրջանային գործընթացներն ավելի համապարփակ ու խորը գնահատելու տեսանկյունից: Առանց այս իրողությունների ուսումնասիրության անհնար է ճիշտ ընկալել ու նորովի գնահատել Հոսնի Մութաքարի նախագահության շրջանում Եզիպտոսի արտաքին քաղաքականության արաբական քաղադրիչը:

Հարկ է նշել, որ 2011 թ. Եզիպտոսում «արաբական գարնան» արդյունքում տեղի ունեցած հեղափոխությունից և իշխանափոխությունից հետո Հոսնի Մութաքարի իշխանության առաջին տասը տարիների ընթացքում նրա արտաքին քաղաքականության արաբական ուղղության ուսումնասիրությունն առանձին կարևորություն է ստանում: «Արաբական գարնան» դեպքերից հետո Մերձավոր Արևելքում ստեղծված աշխարհաքաղական միանգամայն նոր իրավիճակում Եզիպտոսի 1980-ա-

կանների արտաքին քաղաքականության արաբական ուղղության վերագնահատումը խիստ կարևոր է:

Նշենք, որ մենազրության մեջ հանգամանորեն ուսումնասիրվում են մի քանի կարևոր խնդիրներ, որոնցից են՝ Եգիպտահարայելական հարաբերությունները 1978-1981 թթ.՝ քեմփենիդյան համաձայնազրերի ստորագրումից մինչև Եգիպտոսի նախագահ Անվար Սադաթի սպանությունն ընկած ժամանակահատվածը՝ և արաբական աշխարհում Եգիպտոսի մեկուսացումն ու դրա պատճառները: Հետազոտության առանձին առարկա է նաև 1981 թ. Եգիպտոսի նախագահի պաշտոնը ստանձնած Հոսնի Մուբարաքի արտաքին քաղաքական նոր հայեցակարգի, Եգիպտոսի արաբական քաղաքականության ակտիվացմանը նպաստող գործոնների ու իրողությունների ուսումնասիրությունը:

Հետազոտության խնդիրներ են նաև Հոսնի Մուբարաքի արտաքին քաղաքական նոր հայեցակարգին, Եգիպտոսի արաբական քաղաքականության ակտիվացմանը նպաստող հանգամանքներն ու իրողությունները: Ոչ պակաս կարևոր է եղել պարզաբանել Կահիրեի դիրքորոշումը 1980-1988 թթ. իրաք-իրանյան պատերազմի, 1982 թ. Լիբանանում իսրայելյան ազրեսիայի, 1990 թ. Իրաք՝ Քուվեյթ ներխուժման, ինչպես նաև Իրաքի դեմ 1991 թ. միջազգային դաշինքի ռազմական գործողությունների հարցում: Եվ, վերջապես, կարևոր է խնդրո առարկա ժամանակաշրջանում պահեստինյան հարցի Եգիպտոսի դիրքորոշման և առհասարակ 1980-ականների վերջին արաբական աշխարհում ձևավորված ուժերի նոր հարաբերակցության ուսումնասիրությունը:

Նշենք, որ 1981-1991 թթ. Եգիպտոսի արաբական քաղաքականությունը մեզանում դեռևս չի դարձել հասուլ ուսումնասիրության թեմա: Մինչ այժմ առաջնահերթությունը տրվել է 1952-1981 թթ. Եգիպտոսի պատմության առանձին խնդիրների ուսումնասիրությանը: Մենազրության մեջ փորձ է արվում համակողմանիորեն ուսումնասիրելու Եգիպտա-արաբական հարաբերությունները, ինչպես նաև արաբական աշխարհում ընթացող քաղաքական գործընթացների նկատմամբ Եգիպտոսի դիրքորո-

շումը 1981-1991 թթ.: Նորովի է մեկնաբանվում քեմփիդեկիոյան համաձայնագրերի և Եզիպտա-խրայելական հաշտության պայմանագրի կարևորությունը Եզիպտոսի տեսանկյունից, ինչպես նաև արաբական աշխարհում Եզիպտոսի մեկուսացման հարցը:

Մենագրությունն ընդգրկում է 1981-1991 թթ. Ժամանակահատվածը, որը համընկնում է նախագահ Հոսնի Մութարաքի իշխանության առաջին տասնամյակին: Ըստրությունը պայմանավորված է այն հանգամանքով, որ 1981 թ.՝ Անվար Սադարի սպանությունից հետո, իշխանության եկած Հոսնի Մութարաքի ձկուն արտաքին քաղաքականության շնորհիվ 1981-1991 թթ. Եզիպտոսը դուրս եկավ արաբական աշխարհում քաղաքական մեկուսացումից՝ միաժամանակ կարևոր դերակատարություն ստանձնելով արաբական և տարածաշրջանային հիմնախնդիրներում:

Այս ենախոսության մեթոդաբանական հիմքը 1981-1991 թթ. Եզիպտոսի քաղաքական, սոցիալ-տնտեսական իրավիճակի, եզիպտա-արաբական հարաբերություններով պայմանավորված խնդիրների, տարածաշրջանային իրադարձությունների հետ կապված հարցադրումների և տեսակետների քննական մեկնությունն է և փաստերի համեմատական-համադրական վերլուծության սկզբունքը:

Մենագրությունը գրվել է հայերեն, ռուսերեն, անգլերեն, գերմաներեն և արաբերեն՝ տարաբնույթ աղբյուրների և ուսումնասիրությունների հիման վրա: Հեղինակը հնարավորություն է ունեցել ծանոթանալու ՀՀ ԳԱԱ արևելագիտության ինստիտուտի գրադարանի, Հիմնարար գրադարանի, Հայաստանի ազգային գրադարանի, Ռուսաստանի գիտությունների ակադեմիայի արևելագիտության ինստիտուտի, Աֆրիկայի ինստիտուտի, Հասարակական գիտությունների գիտական տեղեկատվության ինստիտուտի գրադարանների, Մուկվայի պատմության պետական գրադարանի, Ս.Ի. Ռուբոմինոյի անվան Համառուսաստանյան արտասահմանյան գրականության պետական գրադարանի, ինչպես նաև Կահիրեի համալսարանի Ասիական հետազոտություն-

ների կենտրոնի և «ալ-Ահրամ» ռազմավարական հետազոտությունների կենտրոնի գրադարանների ֆոնդերում պահպող զիտական նյութերին և մասնագիտական գրականությանը:

Ուսումնասիրությանը նպաստել են պաշտոնական հրատարակությունները, հայ և օտարազգի հետազոտողների՝ քննարկվող թեմային նվիրված արժեքավոր աշխատանքները, ինչպես նաև քաղաքական գործիչների հայտարարությունները, հուշերը, պարբերականները և տեղեկատունները:

Մենագրության համար սկզբնադրյուր են ծառայել Եգիպտոսի և այլ երկրների արտաքին գործերի և տեղեկատվության գերատեսչությունների հրատարակած տարեկան հուշագրերը¹, հաշվետվությունները², Եգիպտոսի քաղաքական գործընթացների և տնտեսական զարգացման մասին տարբեր լեզուներով տեղեկատունները, Եգիպտա-խրայելյան և Եգիպտա-ամերիկյան, իրաքա-իրանյան, իրաքա-ռուսկերյան և իրաքա-ամերիկյան հարաբերություններին վերաբերող փաստաթղթերն ու համաձայնագրերը³, Պաղեստինին վերաբերող միջազգային փաստա-

¹ زياره المسادات لـ إسرائيل، وثائق وتعليقـات إسرـائيلية، بيـروـت، 1978.

² The Egyptian Point of View on International Issues, Egyptian Moves in International Arena Arab Republic of Egypt, Ministry of Information, 1981-1985, Cairo 1985; Ghali B.B., Egyptian Diplomacy in 1982-1989, Cairo 1989; The Middle East and North Africa, L., 2001; The New York Review of Books, N.Y., 1982; Sipry: Yearbook, 1990; Performance Report: Egypt and the Palestinian Question 1945-1988, Ministry of Foreign Affairs, Cairo 1988; Statement of the Tripoli Summit Conference JPS, N 27, Vol. 7, Spring, Tripoli, 1978; World Labor Report, Geneva, 1984; TACC Атлас, М., 1977-1990; TACC БПИ, М., 1982-1990; Арабская Республика Египет, Справочник, М., 1990; Государство Израиль, Справочник, М., 1986.

³ A Framework for Peace in the Middle East Agreed at Camp David. Office of the White House Press Secretary, September, 18, Wash., 1978; United States Policy Statement Series, 1979; The Egyptian-Israeli Peace Treaty. - The White House, Monday, March 26, Wash., 1979; White Paper on Normalization of Relations between the Arab Republic of Egypt and State of Israel, Cairo, 1984; Selections from Iraq-Iran Dispute Baghdad: External

թղթերի ժողովածուն և բյուլետենները⁴, ԽՍՀՄ-ի մերձավորական քաղաքան քաղաքականության առնչվող փաստաթղթերի և նյութերի ժողովածուն⁵:

Այսու կարևոր աղբյուրը եզիստական և արաբական զանազան պարբերականներն են, որոնցից հարկ է նշել արաբական «ալ-Ախրամ», «ալ-Ահրամ», «ան-Նահար», «աս-Ախյաս», «ալ-Քարաս», «աս-Սաֆիր», «ադ-Դուսթուր», «ալ-Ջումհուրիյա», «ալ-Ճուրիյա», «ալ-Վատան ալ-Արաբի», «աշ-Շարկ ալ-Առաստ», գերմանական «Շայհգել», «Ճորիզոն», որոնցում տեղ են զտել Եզիս-

Information Department Ministry of Culture and Information, 1983; The Memorandum of the Deputy Prime Minister and Minister of Foreign Affairs of Iraq Tariq Aziz to the Secretary General of the Arab League, 15, July Baghdad, 1990; The Message of the Minister of Foreign Affairs of the State of Kuwait to the Secretary Arab League Gazili Qusebi, 18, July El-Kuwait, 1990; U.S. Policy in the Persian Gulf. Hearing the Committee on Foreign Relations U.S. Senate. 102nd Congress, 1st Session. January 8, 1991, Wash.: U.S. GPO, 1991; Consideration on Draft Resolution "The Situation in the Persian Gulf". Making Before the Committee on Foreign Affairs. House of Representatives, 102nd Congress, 1st Session. On the Committee, Resolution 1, January 9, 1991, Wash.: GPO: 1991, p. 64; The UN Security Council and Iraq, Why it Succeeded in 1990, Why it didn't in 2003, and Why the United States Should Reddem it, by James M. and O'Sullivan D., <http://www.americandiplomacy.org>.

⁴ Lukas Y., Documents on the Israeli-Palestinian Conflict (1967-1983), N.Y., 1985; Palestine P.L.O., Information Bulletin, N 51, August-September, Algier, 1986; Палестинская проблема. Документы ООН, международных организаций и конференций, М., 1984; ООН, Палестинский вопрос 1979-1990, Нью Йорк, М., 1991; Палестинская Декларация Национального Совета Палестины, 19 сессия – "Сессия Интифады и Национальной Независимости, Алжир, 1988; Палестинские документы: 280 избранных документов 1839-1987гг. М., 1989; Итоговый документ 18-ой сессии Национального Совета Палестины, Алжир, 1988.

⁵ СССР и ближневосточное урегулирование 1967-1988 (Документы, материалы), М., 1988; История международных отношений и внешней политики СССР, т. 3, М., 1987; Материалы 26 Съезда КПСС, М., 1981.

տոսի արտաքին քաղաքականությանն առնչվող նյութեր, Եգիպտոսի նախագահների և պաշտոնատարների հայտարարություններ, միջարաբական համաձայնագրերի ու պայմանագրերի տերսութեր և դրանց առնչվող վերլուծական նյութեր:

Աստենախոսության մեջ բարձրացվող տարրեր հարցերի լուսաբանմանը մեծապես նպաստել են արաբագետ Ն. Հովհաննիայանի՝ Մերձավոր և Միջին Արևելքի պատմության տարրեր ժամանակահատվածներին վերաբերող արժեքավոր աշխատություններն ու հոդվածները⁶: Զարկ է նշել, որ հայ արևելագիտությունը լավագույնս ուսումնասիրել է Մերձավոր Արևելքի, մասնավորապես արաբական երկրների պատմությանն ու արտաքին հարաբերություններին, ինչպես նաև սոցիալ-դասակարգային և տնտեսական համակարգերին վերաբերող առանցքային հարցերը, ինչի օրինակ են Վ. Բայրությանի, Շ. Կարամանուկյանի, Գ. Նովիկովայի, Ե. Արգարյանի, Ռ. Կարապետյանի, Լ. Հարությունյանի, Ա. Փաշայանի, Ա. Հովհաննիայանի, Պ. Սարաջյանի, Վ. Սամվելյանի աշխատանքները⁷:

⁶ Օգանեսյան Հ.Օ., Национализация "Ирак Петролиум Компани" и поддержка арабскими странами Ирака (1972-1973 гг.), Մերձավոր և Միջին Արևելքի երկրներ և ժողովուրդներ, հ. 17, Եր., 1998; Օգանեսյան Հ.Օ., Отношение Иракской Республики со странами Арабского Востока, Ер., 1985; Հովհաննիայան Ն.Հ., Իրաքի դիրքորոշումը պաղեստինյան պրոբлемի նկատմամբ, Մերձավոր և Միջին Արևելքի երկրներ և ժողովուրդներ, հ. 14, Եր., 1987; Հովհաննիայան Ն.Հ., Լիբանանի ճգնաժամը և Լիբանանի հայ համայնքի դիրքորոշումը, Եր., 1982:

⁷ Բայրության Վ., Իրանն այսօր, Եր., 1999; Կարամանուկյան Շ.Լ., Արաբական Պետությունների Լիզայի դերը արաբական երկրների հակամագերիալստական պայքարում, Եր., 1988; Նովիկովա Գ., Նասերի գաղափարախոսության մի քանի ասպեկտները, Մերձավոր և Միջին Արևելքի երկրներ և ժողովուրդներ, հ. 15, Եր., 1989; Արգարյան Ե., Ներքաղաքական իրադրությունը Եգիպտոսում 1967-1970 թթ., Մերձավոր և Միջին Արևելքի երկրներ և ժողովուրդներ, հ. 14, Եր., 1987; Կարապետյան Ռ., Արաբական երկրների նոր և նորագույն պատմություն, Եր., 2003; Կարապետյան Ռ., Միջիա-ամերիկյան հարաբերությունները, Եր., 2003:

Քննարկվող հիմնախնդիրների բազմակողմանի վերլուծությանը նպաստել են մասնավորապես խորհրդային և ռուս հետազոտողների արժեքավոր աշխատությունները, Մերձավոր և Միջին Արևելքի պատմության հարցերի վերաբերյալ տպագրված մենագրությունները և ժողովածուները⁸:

բությունները (1967-1996 թթ.), Եր., 2000; Կարապետյան Ռ., Սիրիամերիկյան հարաբերությունները և խաղաղության գործընթացը Արաբական Արևելքում, Եր., 1999; Կարապետյան Ռ., Սիրիա և Իսրայել չօգտագործված հնարավորությունները և ապագա հեռանկարները խաղաղության հաստատման համար (1991-2001 թթ.), Մերձավոր և Միջին Արևելքի երկրներ և ժողովուրդներ, հ. 20, Եր., 2001; Հարությունյան Լ., Պաղեստինյան քաղաքական և ուզմական կառուցները Լիբանանում 1958-1975 թթ., Մերձավոր Արևելք, Եր., 2002; Հարությունյան Լ., Սիրիայի և Իսրայելի գործոնը լիբանական ճգնաժամում (1975-1990 թթ.), Արևելք, Եր., 2001; Հովհաննիսյան Ա., ԱՄՆ-ի քաղաքականությունը իսրայելա-պաղեստինյան հակամարտության հանդեպ, Եր., 2001; Հովհաննիսյան Ա., Սիրիայի ուզմական միջամտությունը լիբանանյան հակամարտությանը 1976 թ., Մերձավոր և Միջին Արևելքի երկրներ և ժողովուրդներ, հ. 16, Եր., 1996; Սամվելյան Կ., Իրանաիրաքյան պատերազմի հասարակական-քաղաքական արձագանքները, Մերձավոր և Միջին Արևելքի երկրներ և ժողովուրդներ, հ. 18, Եր., 1999; Սամվելյան Կ., ՄԱԿ-ի սանկցիաները Իրաքի նկատմամբ, Մերձավոր և Միջին Արևելքի երկրներ և ժողովուրդներ, հ. 21, Եր., 2002; Սամվելյան Կ., ՄԱԿ-ը և Իրաքի դեմ ԱՄՆ-ի ուզմական գործողությունների հարցը, հ. 22, Եր., 2003; Սարաջյան Դ.Հ., 1973 թ. արաբա-իսրայելյան պատերազմը և արաբական առաջադիմական ուժերի դիրքորոշումը, Մերձավոր և Միջին Արևելքի երկրներ և ժողովուրդներ, հ. 9, Եր., 1978; Փաշայան Ա., Խաղամական Կոնֆերանս Կազմակերպությունը. Կառուցվածքը և հիմնական նպատակները, Մերձավոր և Միջին Արևելքի երկրներ և ժողովուրդներ, հ. 19, Եր., 2000:

⁸ Александров И.А., Монархии Персидского Залива: этап модернизации, М., 2002; Борисов Р.В., США: ближневосточная политика в 70-е годы, М., 1982; Валькова Л.В., Ближневосточный конфликт: проблемы урегулирования, М., 1988; Валькова Л.В., Саудовская Аравия: нефть, ислам, политика, М., 1987; Гусаров В.И., Экономическая независимость Арабских

Խորհրդային և հետխորհրդային շրջանի հեղինակների շարքում հարկ է նշել Ա. Բորիսովի, Ա. Վասիլիսի, Օ. Գերասիմովի և Ա. Կյազելիսի, Ա. Եգորինի, Ա. Զախարովի և Օ. Ֆումբի, Ե. Պիրլինի, Ի. Զվյազելսկայայի, Վ. Կիսելյովի, Լ. Մեղվեդկոյի, Ե. Պրիմակովի, Վ. Տիտորենկոյի, Ա. Էպշտեյնի, Ա. Վիլյասովի և Ա. Ումերովի արժեքավոր աշխատությունները⁹:

стран, М., 1993; Дмитриев Е., Палестинская трагедия, М., 1986; Ден Кон-Шербок, Дауд эль-Алами, Палестино-израильский конфликт: две точки зрения, М., 2002; Корнилов А.А., Между войной и миром: о процессе принятия внешнеполитических решений в государстве Израиль (1948-1993гг.), Нижний Новгород, 1994; Киселев В.И., Палестинская проблема в международных Отношениях: региональный аспект, М., 1988; Кини А.Г., Внешняя политика Арабских стран и Израиля, М., 1999; Компоненты арабо-израильского мира в 1990-е годы, Нижний Новгород, 1992; Мирский Г.И., Ливан в 1980-ые годы; Зейналов М.П., В блокадном Ираке, М., 2001; Мухсин Мухаммед Салих, Палестинский вопрос: его история и развитие до 2000 года, М., 2002; Михайлов Г.М., Западный берег реки Иордан и Сектор Газа под гнетом израильских колонизаторов, М., 1985; Ниязматов Ш.А., Ирано-иракский конфликт: исторический очерк, М., 1989; Новейшая история Арабских стран Азии, М., 1989; Шарипов Р.М., Панисламизм сегодня: идеология и практика Лиги Исламского Мира, М., 1986; Шарипов У.З., Персидский залив: нефть - политика и войны, М., 2000; Шарипов У.З., Политика и нефть в Персидском заливе 70-80-ых годов, М., 1994; Арабский мир: три десятилетия независимого развития, М., 1990.

⁹ Борисов А.Б., Роль Ислама во' внутренней и внешней политике Египта, М., 1991; Видясов М.Ф., Умеров М.Ш., Египет в последней трети 20 века, М., 2002; Герасимов О.Г., Князев А.Г., Египет: десять лет после Насера, М., 1980; Князев А.Г., Египет после Насера 1970-1981гг., М., 1986; Князев А.Г., Египет 80-ых годов, М., 1986; Егорин А.З., Абдель-Хамид Х.А., Война за ближневосточный мир, М., 1999; Егорин А.З., Египет нашего времени, М., 1998; Захаров А., Фомин О., Кэмп-Дэвид: политика обреченная на провал, М., 1982; Пырлин Е.Д., Сто лет противоборства: генезис, эволюция, современное состояние и перспективы решения палестинской проблемы, М., 2001; Пырлин Е.Д., Трудный и долгий путь

Եզիպոսի պատմության և արար-իսրայելյան հակամարտության հետազոտմանն առնչվող տարբեր խնդիրներին նվիրված արևմտյան ուսումնասիրողների աշխատությունների շարքում անհրաժեշտ է առանձնացնել Ս. Թեվերի, Բ. Թիբիի, Ե. Վեյցմանի, Ս. Սփեյզալի, Ի. Տարեզի, Հ. Բիյենենի, Զ. Քուլիի, Ա. Դրյուզալի, Ա. Հիներուշի, Զ. Բժեզինսկու, Չ. Շերցոգի, Ք. Մաթեոսի և այլոց աշխատությունները¹⁰.

Առանձնահատուկ արժեք են ներկայացնում Եզիպոսի արարական քաղաքականությանը և արար-իսրայելյան հակամարտությանը նվիրված հետազոտությունները, որոնց շարքում

к миру: взгляд из Москвы на проблему ближневосточного урегулирования, М., 2002; Звягельская И.Д., Конфликтная политика США на Ближнем и Среднем Востоке, М., 1990; Медведко Л.И., К Востоку и Западу от Суэца, М., 1980; Медведко Л.И., Мины под оливами, М., 1984; Медведко Л.И., "Седьмая" ближневосточная война, М., 1993; Медведко Л.И., Этот Ближний бурлящий Восток, М., 1985; Примаков Е., Война которой могло не быть, М., 1991; Титоренко В.Е., Формирование внешней политики Египта после Г.А.Насера (1970-1993гг.), М., 1994; Эпштейн А.Д., Бесконечное противостояние, М., 2003.

¹⁰ Bzhezinski Z., Power and Principle, Memoirs of the National Security Adviser, London, 1983; Cooley J.K., Payback: American's Long War in the Middle East, Brassey's (USA), 1991; Drysdale A., Hinnebusch A.R., Syria and the Middle East Peace Process, N.Y., 1991; Speigal S.L., The Other Arab-Israeli Conflict: Making American's Middle East Policy, from Truman to Reagan, Chicago 1983; Tareq I., Iraq and Iran: Roots of Conflict, Syracuse Univ. Press, 1982; Taylor A.R., The Arab Balance of Power, Syracuse Univ. Press., 1982; The Politics of Change in the Middle East, Wash., 1993; The Iraqi Aggression on Kuwait, The Truth and Tragedy, Center for Research and Studies in Kuwait, L., 1994; Matteus K., The Gulf Conflict and International Relations, L., N.Y., 1993; Ahdel H.J., Der Libanon Krieg und seine Vorgeschichte, Bdttter für Documents und Internationalen Politik, Кцлн, 1983; Schlicht A. Libanon Zwischen Býrgerskring und Internationale Konflikt, Bonn, 1986; Zu Hasans Besuch Präsident Mubarak, zur Aufnahme Diplomaticscher Beziehungen, Bonn, 1984.

հարկ է նշել Ռ. Քոհենսի, Ս. Սադարի, Մ. Շաֆեի, Մ. Գևոների, Վ. Քուանդրի, Զ. Հասկինսի, Ք. Իբրահիմի, Ս. Ջիյուիսի, Ա. Լեշի և Ս. Թեւլերի, Ս. Մաքերմորի, Թ. Պարկերի, Զ. Թրիփի, Ս. Թեյլորի, Բ. Գալիի, Ռ. Ապդայրի, Պ. Կալվոկորեսի, Գ. Կոնցելմանի, Ա. Ռուրիի, Գ. Քրեմերի հետազոտությունները¹¹:

Աշխատանքին մեծապես նպաստել են արար հեղինակներ Ն. Հառլաքմայի¹², Տ. Հադդադի¹³, Սալիմ Ազ-Զֆիի¹⁴, Մահմուդ Ալ-

¹¹ Cohen R., Culture and Conflict in Egyptian-Israeli Relations: A Dialogue of Deaf, Wash., 1990; El-Sadat A. In Search of Identity, London, 1978; Haskins J., Leaders of the Middle East, Wash., 1985; Heikal M., Autumn of Fury, The Assassination of Sadat, London, 1983; Heikal M.H., Imaginary Peace, Secret Negotiations between Arabs and Israel, Cairo, 1996; Ghali B.B., Achievements of Egyptian Diplomacy 1987, Cairo, 1988; Ghali B.B., Egypt's Road to Jerusalem, Cairo, 1998; Ibrahim K.M., The Camp David Accords, A Testimony, L., 1986; Jiryuis S., Arab World of the Opposition to Sadat-JPS, L., 1978; Lesch A.M., Tessler M., Israel, Egypt and the Palestinians: From Camp David to Intifada, Indian Univ. Press, 1989; McDermot A., Egypt from Nasser to Mubarak. A Flawed Revolution, L., 1988; Parker T., The Road to Camp David. U.S. Negotiating Strategy towards the Arab-Israeli Conflict, N.Y., 1989; Quandt W., The United States and Egypt, The American Univ. Press, Cairo, 1990; Tripp Charles, Owen Rojer, Egypt under Mubarak, Routledge, L. and N.Y., 1989; Vatikiotis R.J., Relations between Egypt and Israel 1977-1982, Arab and Regional Politics in the Middle East, L., 1984; Taylor A.R., The Arab Balance of Power, Syracuse Univ. Press., 1982; Krämer G., Dgypten unter Mubarak: Identität und Nationales Interesse, Baden-Baden, 1986; Hinnebusch R., Ehteshami A., The Foreign Policy of Egypt, The Foreign Policy of Middle East States, L., 2002; Апдейк Р.Дж., Саддам Хусейн, Ростов-на-Дону, 1999; Гали Б.Б., Путь Египта в Иерусалим, М., 1999; Кальвокоресси П., Мировая политика после 1945 года, т.1, М., 2000; Концельман Г., Арафат: от Террориста к человеку мира, Ростов-на-Дону, 1997; Рубби А., Палестинский марафон, М., 2001.

¹² ح. ثابت، أزمة منظمة التحرير الفلسطينية، نicosia، 1984.

¹³ طريق حداد، الإنقاذ الأردني الفلسطيني 1947-1988م، عمان، 1988.

¹⁴ سالم الذيبي، الإنقاضية، بيروت، 1991.

Յուսուֆի¹⁵, Խալիդ Ալ-Հասանի¹⁶, Աբդ Ալ-Վաֆիի և Աբու Տահայի¹⁷ քննարկվող թեմային նվիրված արժեքավոր ուսումնասիրությունները:

¹⁵ محمد اليوسفي، فلسطين الثورة، عدد 739.

¹⁶ خالد الحسن، الإنقاذية، تونس، 1988.

¹⁷ عبد الوهبي أبو طه، الإنقاذية، بيروت، 1989.

ԳԼՈՒԽ ԱՌԱՋԻՆ

ԵԳԻՊՏՈՍԻ ՎԵՐԱԴԱՐՁՆ «ԱՐԱԲԱԿԱՆ ԸՆՏԱՆԻՔ» (1981-1989 թթ.)

1.1. ԵԳԻՊՏՈՍՈ ԵՎ ԱՐԱԲԱԿԱՆ ԱՇԽԱՐՀԸ (1978-1981 թթ.)

1948 թ.¹⁸ Իսրայել պետության հոչակումից հետո, սկսված արաբ-իսրայելական հակամարտության մեջ Եգիպտոսն ուներ հանգուցային դերակատարում: 1970 թ. Եգիպտոսի նախագահի պաշտոնը գրադեցրեց Անվար Սադաթը, որը, ի տարբերություն նախորդ նախագահի, Իսրայելի հետ հարաբերություններում ավելի փոխգիշումային մոտեցման կողմնակից էր: Նա համոզված էր, որ Մերձավորաքենան հակամարտության կարգավորման խաղաքարտերի 99 %-ը զտնվում էր ԱՄՆ-ի ձեռքում¹⁹, ինչը նշանակում էր, որ խաղաղությունը տարածաշրջանում պետք է հաստատվեր և դեկավարվեր ԱՄՆ-ի կողմից²⁰: ԱՄՆ-ի հետ համագործակցելու Սադաթի պատրաստակամությունն ավելի ակնհայտ դարձավ 1973 թ. արաբ-իսրայելական շորրորդ պատերազմից հետո²¹: Այդ պատերազմից հետո թե՛ արաբական աշ-

¹⁸ Князев А.Г., Египет после Насера 1970-1981 гг., М., 1986, с. 127; Նովիկով Գ.Վ., Նասերի զաղափարախոսության մի քանի ասպեկտները. Մերձավոր և Միջին Արևելքի երկրներ և ժողովուրդներ, հ. 15., Եր., 1989, էջ 27:

¹⁹ Heikal M., Autumn of Fury, The Assassination of Sadat, London, 1983, p. 67.

²⁰ Սարաջյան Պ.Հ., 1973 թ. արաբա-իսրայելական պատերազմը և արաբական առաջադիմական ուժերի դիրքորոշումը, Մերձավոր և Միջին Արևելքի երկրներ և ժողովուրդներ, հ. 9, Եր., 1978, էջ 305; Корнилов А.А., Между войной и миром: о процессе принятия внешнеполитических решений в государстве Израиль (1948-1993 гг.), Нижний Новгород, 1994, с. 21; Bailay S.D., Four Arab-Israeli Wars and the Peace Process, London., 1990, p. 417; Springborg R., U.S. Policy toward Egypt: Problems and Prospects, ORBIS, , vol. 24, № 4, Philadelphia 1981, pp. 804-805.

խարիը և թե՛ Իսրայելը հայտնվեցին աշխարհաքաղաքական, ռազմական, տնտեսական և բարոյահոգեբանական միանգամայն նոր իրավիճակում: Ավելի ակնհայտ դարձան արաբական երկրների քաղաքական, սոցիալ-տնտեսական և ռազմական ոլորտներում գոյություն ունեցող համակարգային խնդիրները:

Մյուս կողմից՝ արաբ-իսրայելական հակամարտությունից դուրս գալու Եզիպտոսի պատրաստակամության հարցում կարևոր նշանակություն ունեցան 1970-ականների կեսերին Եզիպտական հասարակության սոցիալ-քաղաքական կառուցվածքում տեղի ունեցող փոփոխությունները²¹:

Նախազահ Գամալ Աբդել Նասերի մահից հետո (1970 թ.) երկրի նոր դեկավարությունն ակնհայտ շրջադարձ կատարեց դեպի կապիտալիստական զարգացում, որի հետևանքով իր դիրքերը վերականգնեց Եզիպտական բուրժուազիան, որը ձգում էր Արևմուտքի հետ բազմակողմ հարաբերությունների հաստատմանը²²:

Իսրայելի հետ համաձայնության գալու Սահաթի հիմնական փաստարկն այն էր, որ 1967 թ. արաբ-իսրայելական երրորդ պատերազմի պատճառով Եզիպտոսը մարդկային և տնտեսական զգալի կորուստներ էր կրել: Իսրայելի կողմից Սինայ թերակղզու գրավման հետևանքով Եզիպտոսը զրկվել էր թերակղզու նավթահանքերի շահագործման հնարավորությունից: Դադարեցվել էր Սուեզի ջրանցքի շահագործումը²³:

²¹ Владимиров В.В., Политика “открытых дверей” в Египте и местная буржуазия, Народы Азии и Африки, № 2, М., 1982, с. 25.

²² Князев А.Г., Внутриполитическое и идеологическое развитие в поселенцесовском Египте, Азия и Африка сегодня, № 4, М., 1984, с. 1;Տե՛ս Արգարյան Ե. Ա., Ներքաղաքական իրադրությունը Եզիպտոսում 1967-1970 թթ., Սերձավոր և Սիօնին Արևելի երկրներ և ժողովուրդներ, հ.14, Եր., 1987, էջ 8-9:

²³ Беляев И.П., Примаков Е.М., Египет: Время президента Насера, М., 1981, с. 296; Հարկ է նշել, որ Սուեզի ջրանցքի շահագործումից Եզիպ-

Պատմագրության մեջ Խորայելի հետ Եզիպտոսի համաձայնության զալու սկիզբն ընդունված է համարել 1977 թ. նոյեմբերի 19-ը, եթե Սաղաթը կատարեց իր հայտնի այցելությունը Երուսաղեմ²⁴: Հարկ է փաստել, որ Սաղաթի՝ Երուսաղեմ այցելությամբ էլ սկսվեց արարական աշխարհում Եզիպտոսի «մեկուսացման» շրջանը:

Սաղաթը, որքան էլ իր այցելությունը փորձում էր արդարացնել՝ այն չհամարելով անջատողական քաղաքականության դրսևորում, այնուամենայնիվ արարական աշխարհի արձագանքը միանշանակ քացասական էր: Երուսաղեմ այցելելուց օրեր առաջ՝ 1977 թ. նոյեմբերի 9-ին, ելույթ ունենալով Եզիպտոսի Ազգային ժողովի նիստում, Սաղաթը հայտարարել էր, որ ինքը պատրաստ է զնալու թեկուզ աշխարհի մյուս ծայրը՝ նույնիսկ խրայելական քննեսեթ, որպեսզի խրայելցիների հետ իրենց տանը խոսի Եզիպտացիների՝ խաղաղ ապրելու ձգումների մասին²⁵:

Ժամանակի միջազգային մամուլը լայնորեն լրտարանեց Սաղաթի՝ Խորայել կատարած պաշտոնական այցելությունը, որն աննախադեալ էր արար պետական գործի համար: Արաբական որևէ երկրի առաջնորդ չէր համարձակվի այցելել Խորայելի կողմից բռնազավթված և արաբների համար սրբացված մի քաղաք, որտեղ գտնվում էր խալամի երեք զինավոր սրբա-

տուր տարեկան ստանում էր մոտ 800 մլն եզիպտ. ֆունտ: Մանրամասն տե՛ս TACC ԲՓИ, N 16, M. 24.01.1983, c. 29.

²⁴ El-Sadat A. In Search of Identity, London, 1978, p. 302: Cohen R., Culture and Conflict in Egyptian-Israeli Relations: A Dialog of Deaf, Wash., 1990, p. 37; Lukas Y., Documents on the Israeli-Palestinian conflict (1967-1983), N.Y.1985, p. 106-107; Борисов Р.В., США: Ближневосточная политика в 70-е годы, М., 1982, с.176.

²⁵ 10.11.1977 - الْمِرْأَةُ، الْقَاهْرَةُ - Նիստին ներկա Պահեստինի ազատագրության կազմակերպության նախագահ Յասեր Արաֆաթը, չհասկանալով Սաղաթի խոսքերի լրջությունը, Եզիպտոսի նախագահին բուռն ծափահարողներից մեկն էր:

տեղիներից մեկը՝ ալ-Ակսայի մզկիթը: Եթե դրան գումարենք նաև այն փաստը, որ արաբական խւամական աշխարհը թե պաշտոնական, թե հասարակական մակարդակներում ընդհանուր առմամբ մերժում էր Խորայելի գոյության իրավունքը կամ չեր ճանաչում Խորայելի Պետությունը, ապա պարզ կդառնա, թե որքան ոհսկային էր Սահարի այցելությունը Խորայել: Անկախ այն հանգամանքից, թե ինչ կխոսեր կամ ինչ կառաջարկեր Սահարը Խորայելում, արաբական խւամական հանրային տարրեր շրջանակների քննադատություններն անխոսափելի էին լինելու:

1977 թ. նոյեմբերի 20-ին Երուսաղեմում՝ խորայելական քննեսեթում, իր ելույթում Սահարը հիմնականում արեց հետևյալ հարցադրումները.

- Խորայելը պետք է դադարեցնի 1967թ. արաբ-խորայելական պատերազմի ընթացքում բռնազավթած տարածքների օկուպացումը:
- Պետք է ապահովել պաղեստինյան ժողովրդի ինքնորոշման իրավունքը:
- Ապահովել տարածաշրջանի յուրաքանչյուր պետության՝ խաղաղ պայմաններում ապրելու իրավունքը:
- Տարածաշրջանի բոլոր պետությունները պետք է պարտավորվեն պահպանել փոխադարձ հարաբերությունները ՄԱԿ-ի կանոնադրությանը համապատասխան:
- Տարածաշրջանում պատերազմական իրավիճակի դադարեցում²⁶:

Ելույթի վերջում նախազահն ավելացրեց, թե ինքը չի ժամանել Երուսաղեմ՝ Խորայելի հետ անջատ հաշտություն կնքելու նպատակով, քանի որ նման քայլը չի կարող տարածաշրջանում համընդհանուր խաղաղության երաշխիք լինել²⁷: Իրականում Սահարը միանգամայն այլ մտադրություն ուներ: Նա ցանկանում էր պարարտ հող ստեղծել Խորայելի հետ երկխոսության եզրեր գտնելու համար:

²⁶ "زيارة المسادات لـسرانيل"، وثائق وتعليقـات إسرانيلية، بيروت، 1978.

²⁷ Նոյն տեղում:

Սադաթի քայլը միանշանակ չընդունվեց առաջին հերթին Եգիպտոսում: Երկրի վարչապետի տեղակալ և արտաքին գործերի նախարար Իսմայիլ Ֆահիմն, տեղեկանալով Սադաթի՝ Իսրայել մեկնելու մտադրության մասին, 1977 թ. նոյեմբերի 16-ին հրաժարական տվեց²⁸:

Ինչպես և սպասվում էր, Սադաթի՝ Երուսաղեմ կատարած այցելությունը տարակարծություն առաջացրեց արաբական աշխարհում: Եգիպտոսի հարցում արաբական երկրները բաժանվեցին երեք խմբի: Սիրիան, Իրաքը, Լիբիան, ԵԺՀ-ն, Ալժիրը և ՊԱԿ-ը խիստ դատապարտեցին Սադաթի քայլը: Սուդանը, Սարոկոն և Օմանը՝ այսպես կոչված եգիպտական դաշինքը, չդատապարտեցին Եգիպտոսի նախազահի՝ Երուսաղեմ այցելությունը և շարունակեցին նրան աջակցել: Սառույան Արաբիայի գլխավորությամբ Քուվեյթը, Արաբական Միացյալ Էմիրությունները (ԱՄԷ), Բահրեյնը, Կատարը, Շորջանանը, Եմենի Արաբական Հանրապետությունը (ԵԱՀ), Սումալին, Զիբրութին, Լիբանանը, Թունիսը և Մավրիտանիան Սադաթի քայլը համարեցին անօրինական, բայց և շարունակում էին նրա հետ պահպանել հարաբերությունները՝ դրսնորելով փոքր-ինչ ավելի զգուշավորություն²⁹:

Արաբական աշխարհում Սադաթի՝ Երուսաղեմ այցելության հետևանքով ձևավորված քետացման վերոնշյալ պատկերն ընդհանուր առմամբ պահպանվեց մինչև 1979 թ. մարտը: Այդ ընթացքում արաբական վերոհիշյալ խմբերում տեղի էին ունենում որոշ վերադասավորություններ: Մասնավորապես այդ ընթացքում «երկրորդ» խմբից Մարոկոն սկսեց հարել «երրորդ» խմբին, իսկ «երրորդից» Սումալին միացավ «երկրորդ» խմբին³⁰:

²⁸ Герасимов О.Г., Князев А.Г., Египет: десять лет после Насера, М., 1980, с. 42.

²⁹ Taylor A.R., The Arab Balance of Power, Syracuse University Press, 1982, p. 124.

³⁰ Նույն տեղում:

Սադաթի՝ Երուսաղեմ այցելությունը դատապարտելու և նրա հետագա անջատողական գործողությունները կանխելու նպատակով 1977 թ. դեկտեմբերի 2-5-ը Տրիպոլիում (Լիբիա) նախագահ Մուամար Կադդաֆիի անմիջական նախաձեռնությամբ, կայացավ արարական մի քանի երկրների դեկավարների հանդիպում³¹: Հանդիպման մասնակից երկրներից Սիրիան, Եմենի Ժողովրդական Դեմոկրատական Հանրապետությունը (ԵԺԴՀ), Լիբիան, Ալժիրը և Պաղեստինի Ազատազրության Կազմակերպությունը (ՊԱԿ) ներկայացված էին նախազահների մակարդակով³²: Հանդիպման մասնակից երկրները դատապարտեցին Կահիրեի քաղաքական ուղղագիծը, որոշեցին դադարեցնել Եզիդոսությունը (ՊԱԿ) և այլ կարգի շփումները ինչպես միջարաբական, այնպես էլ միջազգային ասոյաններում: Այնուհետև որոշվեց արարական մյուս երկրներից ևս պահանջել մաս կազմել Եզիդոսություն դեմ համարաբական տանդեմին հասնելու նաև Արարական պետությունների լիզայում (ԱՊԼ) Եզիդոսության անդամակցության սառեցմանը, իսկ կազմակերպության գրասենյակը Կահիրեից տեղափոխել մեկ այլ արարական մայրաքաղաք: Նախատեսվում էր ջանքեր գործադրել սառեցնելու Եզիդոսության անդամակցությունը միջարաբական մյուս կազմակերպություններին ևս³³: Տրիպոլիի հանդիպման մասնակից երկրները Սիրիայի նախագահ Հաֆեզ Ալ-Ասադի և ՊԱԿ-ի դեկավար Յասեր Արաֆաթի առաջարկով միավորվեցին Տոկունության և հակագդեցության ազգային ճակատում (ՏՀԱՃ): Փաստորեն ՏՀԱՃ-ի անդամ դարձան Սիրիան, ՊԱԿ-ը, Լիբիան, Ալժիրը և ԵԺԴՀ-ն³⁴:

³¹ Statement of The Tripoli Summit Conference JPS, N 27, Vol. 7, Spring, Tripoli, 1978, p.186-188, Jiryuis S., Arab World of the Opposition to Sadat-JPS, N 26, Vol.7, Winter, L., 1978, p. 24.

³² 07.12.1977 *الجهاد، طرابلس*,

³³ Jiryuis S., նշվ. աշխ., էջ 23:

³⁴ Արարականության Շ.Լ., Արարական Պետությունների Լիզայի դերը արարական երկրների հակամապերիալիստական պայքարում, Եր., 1988, с. 165; The Economist, L., 10.12.1977.

Այս պետություններն այսպիս կոչված երեք «ոչ»-երի կողմնակիցներն են (ոչ Խորայելի ճանաշմանը, ոչ բանակցություններին և ոչ խաղաղությանը): Չնայած այն հանգամանքին, որ Իրաքը հակառակապտական խիստ պատժամիջոցների ընդունման եռանդուն կողմնակից էր, այդուամենայնիվ ՏՀԱՃ-ի անդամ շղարձավ, կապված սիրիա-իրաքյան հակասությունների հետ³⁵:

1977 թ. դեկտեմբերի 5-ին, ի պատասխան ՏՀԱՃ-ի կազմավորմանը, Սահաքը հայտարարեց, որ դադարեցնում է դիվանագիտական հարաբերությունները Ճակատի անդամ-երկրների հետ³⁶: Հաջորդ օրը դիվանագիտական հարաբերությունները Եգիպտոսի հետ խզեցին ՏՀԱՃ-ի անդամ բոլոր երկրները³⁷, միևնույն ժամանակ զրկելով նրան Արարական Ֆեդերատիվ Հանրապետության (ԱՖՀ) նախագահի պաշտոնից³⁸: ՏՀԱՃ-ի անդամ-երկրներն արաքական մյուս պետություններին զգուշացնում էին, որ Սահաքի քաղաքականությանը հետևողները ևս կարժանանան նույն ճակատագրին: Նրանք բոյկոտում էին Եգիպտոսի

³⁵ Иванов В., Межарабская политика Сирии, т. 1, М., 1986, с. 159, Իրաքի պատվիրակը ներկա էր Միայն առաջին նիստին: Իրաքը չէր ցանկանում անդամակցել մի կառույցի, որտեղ գերիշխող դիրքեր ուներ Սիրիան: Տրիպոլիի հանդիպումն Իրաքն առաջարկել էր կազմակերպել հենց Իրաքում, սակայն Սիրիան և Լիբիան չէին համաձայնել, ինչը ևս տարածայնության առիթ էր:Տե՛ս TASS Атлас, №. 49, М., 09.12.1977 с. 41.

³⁶ Моджорян Л.А., Сионизм как форма рассовых дискриминаций, М., 1979, с. 206, Հովհաննիսյան Ա., ԱՄՆ-ի քաղաքականությունը իսրայելա-պաղեստինյան հակամարտության հանդեպ, Եր., 2001, էջ 23:

³⁷ Валькова Л.В., Ближневосточный конфликт: проблемы урегулирования, М., 1988, с. 25. Դիվանագիտական հարաբերությունները Եգիպտոսի հետ դադարեցրեց նաև Իրաքը, թեպես ՏՀԱՃ-ի անդամ չէր:

³⁸ Севастянов Г.Н., Американский экспансионизм, М., 1986, с. 543; Арабский мир: три десятилетия независимого развития, М., 1990, с. 308. ԱՖՀ-ն հիմնվել էր 1971 թ. Բենգազիում Եգիպտոսի, Լիբիայի և Սիրիայի նախագահների հանդիպման ժամանակ: Այն դատապարտված էր քայլայման, չնայած ուղղված էր մասնակից երկրների միջև քաղաքական, տնտեսական և ռազմական ինտեգրացմանը:

քաղաքական և հասարակական այն շրջանակներին, ովքեր Խրայելի հետ շփումներ ունեին, միևնույն ժամանակ ողջունում էին այն ուժերին, որոնք մերժում էին Սադաթի վարչակարգի քաղաքականությունը:

Հարկ է փաստել, որ ինչքան էլ SZX-ի անդամ-պետություններն ակտիվ գործեին, հազիվ թե առանց Հորդանանի, Սաուդյան Արաբիայի և Ծոցի միապետությունների Եզիջտոսի մեկուսացումն արաքական աշխարհում ամբողջական կլիներ³⁹: Հետաքրքիր է նաև, որ Սադաթի Երուսաղեմ այցելության հետ կապված Եզիջտոսում անցկացված հարցախույզի տվյալներով հարցվածների 3,4 %-ը կարծում էր, որ այն Եզիջտոսին խաղաղություն կբերեր, իսկ 1,3 %-ը համոզված էր, որ Խրայելի հետ երկխոսության զնալը կնպաստեր երկրի տնտեսական վիճակի բարելավմանը⁴⁰:

1977 թ. դեկտեմբերի 6-ին Տրիպոլիում կազմավորվեց նաև Համարաքական Ժողովրդական Կոնգրեսը, որի անդամ դարձան արաքական 17 երկրներից շուրջ 210 քաղաքական, հասարակական կազմակերպությունների և ազատազրական շարժումների ներկայացուցիչներ: Վերոնշյալ կոնգրեսի կազմավորմանը զուգահեռ Սադաթը սկսեց Եզիջտոսում բացահայտ հակապահեստինյան քաղաքականություն վարել: Նա արգելեց «Պահեստինի ձայնը» ռադիոկայանի գործունեությունը, Եզիջտոսից արտաքսեց ՊԱԿ-ի պաշտոնական ներկայացուցիչ Աս-Սաուրանին

³⁹ Financial Time, L., 06.12.1977.

⁴⁰ Князев А.Г., նշվ. աշխ., էջ 261; Кудрявцев А., Религиозная ситуация в Египте после Кэмп-Дэвида, Восток и современность, № 1, М., 1982, էջ 12. Եզիջտոսում իշխանության ընդդիմադիր կուսակցությունների մասին մանրամասն տե՛ս և Սերանյան Գ.А., Оппозиционные партии Египта на рубеже 21 века, Арабские страны Западной Азии и Северной Африки, вып. 5, М., 2002, с. 218.

և նրա օգնականներին: Այս ամենի արդյունքում վերջ դրվեց պաղեստինցիների գործունեությանը Եզիպտոսում⁴¹:

Սահարի կարգադրությամբ Եզիպտական մամուլում սկսվեց արար դեկավարների բուռն քննադատությունը⁴²: Այդ ամենի հետ մեկտեղ Սահարը հայտարարեց, որ Կահիրե է հրավիրում պաղեստինյան բռնազավթված տարածքների պաղեստինցի վարչական դեկավարներին՝ քննարկելու Երուսաղեմ կատարած այցից հետո ստեղծված իրավիճակը⁴³:

Եզիպտոսի նախազահն իր այդ քայլով փորձում էր թուացնել Արաֆարի դիրքերը՝ պաղեստինյան հարցի լուծման գործում նվազեցնելով նրա դերը: Արաբական աշխարհի և ՊԱԿ-ի կողմից այդ քայլով դիմումը որպես 1974 թ. ուրաքանչ որոշումների խախտում, որոնց հիման վրա ՊԱԿ-ը Յասեր Արաֆարի գլխավորությամբ ճանաչվել էր որպես պաղեստինյան ժողովրդի միակ օրինական ներկայացուցիչ⁴⁴: Բռնազավթված Նարլուս, Թուվկարմա, Հերրոն և Զենին քաղաքների քաղաքապետները մերժեցին Սահարի հրավերը՝ հայտարարելով, որ պաղեստինցիներին կարող էր ներկայացնել միայն ՊԱԿ-ը⁴⁵:

1978թ. փետրվարի 2-3-ը Ալժիրում տեղի ունեցավ SΣΑΔ-ի անդամ-երկրների երկրորդ հանդիպումը⁴⁶: Մասնակից երկրներն ընդունեցին քաղաքական Հոչակազիր, որում դարձյալ դատապարտում էին Սահարի գործողությունները⁴⁷ և հայտարարում

⁴¹ Захаров А., Фомин О., Кэмп-Дэвид: Политика обреченная на провал, М., 1982, с. 76-77.

⁴² الأهرام، القاهرة، 09.12.1977

⁴³ Захаров А., Фомин О., նշվ. աշխ., էջ 77:

⁴⁴ Documents on the Israeli-Palestinian Conflict 1967-1982, Cambridge, USA, 1984, p. 97.

⁴⁵ Захаров А., Фомин О., նշվ. աշխ., էջ 78:

⁴⁶ The Arab World, vol. 65, March-April, 1981, p. 13.

⁴⁷ Հակաեզիպտական քարոզչությունն ուղեկցվում էր նաև ահարեկչական գործողություններով: 1978 թ. փետրվարի 18-ին Նիկոսիայում պաղեստինցիների կողմից սպանվել էր Սահարի մտերիմ ընկեր Յու-

էին, որ Մերձավոր Արևելքում իրական խաղաղություն կարելի է ապահովել միայն Իսրայելի կողմից արաբական բռնազավթած տարածքներից հեռանալուց՝ պահեստինյան անկախ պետության հոչակումից հետո⁴⁸:

Ի տարբերություն S2UՃ-ի անդամ-երկրների, արաբական մի շարք երկներ ոչ միայն շարունակում էին պահպանել Եգիպտոսի հետ դիվանագիտական հարաբերություններ, այլ նաև վերջինիս օգնություն էին տրամադրում⁴⁹: Սաուդյան Արաբիան շարունակում էր օգնություն ցույց տալ Կահիրեին ոչ միայն «Իսրայելի հետ հակամարտության մեջ գտնվող երկրների օգնության» հիմնադրամի ծրագրով, այլ նաև «Եգիպտոսին Ծոցի երկրների օգնության» հիմնադրամի շրջանակներում⁵⁰:

Հետևելով Իսրայելի հետ մերձեցման իր քաղաքականությանը՝ Սադաթը 1978 թ. սեպտեմբերի 5-17-ը Քեմֆ-Դևիդում (Ա.Ա.Ն) Միացյալ Նահանգների նախագահ Զ. Քարթերի միջնորդությամբ Իսրայելի վարչապետ Մենահիմ Բեղինի հետ ստորագրեց երկու փաստաթուղթ՝ «Շրջանակներ Մերձավոր Արևելքում խաղաղություն հաստատելու համար» և «Շրջանակներ Եգիպտա-իսրայելյան հաշտության պայմանագրի ստորագրման համար»⁵¹: Առաջին փաստաթուղթի համաձայն՝ պահեստինյան հարցի կարգավորման նպատակով պետք է բանակցություններ

սուֆ Աս-Սիրային, որը «ալ-Աիրամ» թերթի գլխավոր խմբագիրն էր: Այս մասին տե՛ս և Գալի Բ.Բ., Путь Египта в Иерусалим, М., 1999, с. 90.

⁴⁸ 05.02.1987 *السفير الجديد*,

⁴⁹ Գևորգյան Գ.Գ., Արաբական աշխարհում Եգիպտոսի մեկուսացման հարցի շուրջ 1970 թ. վերջ - 1980 թ. սկիզբ, Լրաբեր Հասարակական Գիտությունների, № 2 «608» մայիս-օգոստոս, Եր., 2003, էջ 107:

⁵⁰ Валькова Л.С., Саудовская Аравия: нефть, ислам, политика, М., 1987, с. 212. Այդ ֆոնդը հիմնադրվել էր 1976 թ. օգոստոսի 21-ին: *Տես Business Week*, N.Y., 16.01.1978.

⁵¹ A Framework for Peace in the Middle East Agreed at Camp David. Offise of the White House Press Secretary, Sept., 18. 1978, p. 7; Մօդյօրյան Լ.Ա., Մеждународный сионизм на службе империалистической реакции, с. 89.

անցկացվեին երեք փուլերով՝ Եզիպտոսի, Իսրայելի, Հորդանանի, իսկ երրորդ փուլից նաև պաղեստինյան ժողովրդի ներկայացուցիչների մասնակցությամբ։ Ըստ որում նախատեսվում էր, որ Հորդանանի և պաղեստինցիների հրաժարվելու դեպքում նրանց փոխարեն բանակցությունները վարելու էր Սահաթը։ Հարկ է նշել, որ, համաձայն վերոնշյալ փաստաթղթի, բանակցությունները պետք է ընթանային պաղեստինցիներին ինքնավարություն, այլ ոչ թե անկախություն տալու նպատակով⁵²։ Երկրորդ փաստաթղթի համաձայն՝ Իսրայելը և Եզիպտոսը պարտավորվում են երեք ամսվա ընթացքում հաշտության պայմանագիր ստորագրել, որից հետո երկու երկրների միջև պետք է դիվանագիտական հարաբերություններ հաստատվեին։

Հատկանշական է, որ քեմփդեկիոյան համաձայնագրերի ստորագրման հաջորդ օրը հրաժարական տվեցին Եզիպտոսի արտաքին գործերի նախարար Մուհամադ Քամիլը, որը բանակցությունների անմիջական մասնակից էր և Սահաթի մտերիմ ընկերը⁵³, ինչպես նաև պատվիրակության իրավաբանական խորհրդատու, ԱՄՆ-ում Եզիպտոսի դեսպան Նարիլ Ալ-Արաբին։ Պաշտոնանկ արվեց Եզիպտոսի պաշտպանության նախարար զեներալ Ալ-Գամասին⁵⁴։ Նշենք, որ Իսրայելի հետ համաձայնության գալու կապակցությամբ եզիպտական բանակում սկսել էին հակաիշխանական թուցիկներ տարածվել։ Նպատակ ունենալով պահպանել բանակի չեզորությունը՝ Սահաթը պաշտոնանկ արեց նաև մի շարք «կասկածելի» սպաների։ Ալ-Գամասիի պաշտոնանկությունը կապված էր այդ իրողության հետ⁵⁵։

⁵² Ibrahim K.M., The Camp David Accords, A Testimony, L., 1986, p. 128; Heikal M.H., Imaginary Peace, Secret Negotiations Between Arabs and Israel, Cairo, 1996, p. 249.

⁵³ Медведко Л.И., К Востоку и Западу от Суэца, М., 1980, с. 286.

⁵⁴ Медведко Л.И., Этот Ближний бурлящий Восток, М., 1985, с. 260.

⁵⁵ Юрченко В.П., Армия и власть в Египте, Армия и власть на Ближнем Востоке, М., 2002, с. 11.

Քեմփ-Դևիդում Խարայելի հետ համաձայնության գալուց հետո Սաղարն իր պատվիրակության հետ ժամանեց Մարոկկո, սակայն Եզիջտոսի նախագահի՝ թագավոր Հասանից աջակցություն ստանալու հույսերը չարդարացան: Ավելին, ըստ նախնական պայմանավորվածության, Ռաբաթը չէր ժամանել Հորդանանի թագավոր Հուսեյնը: Վերջինս դժողով էր, որ առանց իր հետ համաձայնեցնելու Սաղարթը բանակցությունների ընթացքում նշել էր, որ Հորդանանը ևս համաձայն կլինի Եզիջտա-խարայելան համաձայնագրերի համատեքստին⁵⁶.

Քեմփելիոյան համաձայնագրերի ստորագրմանը հաջորդեց 1978 թ. սեպտեմբերի 20-23-ը Դամասկոսում ՏՀԱՃ-ի անդամերկրների երրորդ հանդիպումը, որի մասնակիցները պահանջեցին արաբական երկրներից դատապարտել Եզիջտոսին և միանալ ՏՀԱՃ-ի կողմից իրականացվող պատժամիջոցներին⁵⁷: Քեմփելիոյան համաձայնագրերը դատապարտեց նաև ՄԱԿ-ի գլխավոր քարտուղար Կ. Վալդիհայմը⁵⁸: Քեմփելիոյան համաձայնագրերի խիստ դատապարտմամբ հանդես եկավ նաև ԽՍՀՄ-ը՝ հայտարարելով, որ այն սպառնում է տարածաշրջանում իրական խաղաղության հաստատմանը⁵⁹: Քեմփելիոյան համաձայնագրերի ըննարկման նպատակով Իրարի նախագահ Ալ-Բարքի նախաձեռնությամբ 1978 թ. նոյեմբերի 2-5-ը Բաղրամում արաբական երկրների զագաթնաժողով գումարվեց, որին չէին մաս-

⁵⁶ Гали Б.Б., նշվ. աշխ., էջ 182-185:

⁵⁷ Աս-Սաուդա, Դամասկոս, 22.09.1978; Խալիլօ Բ.Խ., Օտ плана Роджерса к Кэмп-Дэвиду, Ташкент, 1983, с. 137. Քեմփելիոյան համաձայնագրերը դատապարտեց նաև Իրարը, թեպետև վերջինս ՏՀԱՃ-ի անդամ-երկիր չէր: Տե՛ս և Հովհաննիսյան Ն.Հ., Իրարի դիրքորոշումը պահեստինյան պրոբլեմի նկատմամբ. Մերձավոր և Միջին Արևելիք երկրներ և ժողովուրդներ, հ. 14, Եր., 1987, էջ 105:

⁵⁸ Правда, М., 23.11.1978.

⁵⁹ Правда, М., 23.09.1978.

նակցում միայն Եզիպտոսը, Սուդանը, Օմանը և Սոմալին⁶⁰:

Հանդիպման մասնակից տասը երկրներ՝ Իրաքը, Սիրիան, Եգիպտոսը, Հորդանանը, Քուվեյթը, Լիբանանը, ԱՄԷ-ն, Կատարը, Բահրեյնը, Մավրիտանիան և ՊԱԿ-ը ներկայացված էին նախագահների մակարդակով⁶¹: Գազարնաժողովի մասնակից ՏՀԱՀ-ի անդամ-երկրները դարձյալ կոչ էին անում խստագույնս դատապարտել Սադաթին և կյանքի կոչել Տրիպոլիում 1977 թ. Դեկտեմբերին ՏՀԱՀ-ի անդամ-երկրների կողմից ընդունված որոշումները⁶²: Արաբական բոլոր երկրները դատապարտեցին Սադաթի անջատողական ուղեգիծը, ասկայն պատժամիջոցներին միանալու հարցում Ռիադը և Ծոցի մնացած միապետությունները բացասական դիրքորոշում ընդունեցին: Մասնակիցները Եզիպտոսի հանդեպ պատժամիջոցների ընդունման հարցում չէին կարողանում ընդհանուր համաձայնության գալ⁶³:

Ծոցի միապետությունները Սաուդյան Արաբիայի գլխավորությամբ, կարևորելով Կահիրեի տեղն ու դերը տարածաշրջանում և նպատակ ունենալով հետ պահել Սադաթին Խրայելի հետ համաձայնության գալու հետագա քայլերից, 1978 թ. Նոյեմբերի 6-ին Կահիրե գործուղեցին Լիբանանի Վարչապետ Սալիմ Հոսին⁶⁴: Սակայն Սադաթը հրաժարվեց ընդունել բանագնացին, և վերջինս մի քանի ժամ Կահիրեի օդանավակայանում անցկացնելուց հետո ձեռնունայն վերադարձավ⁶⁵:

⁶⁰ Караманукиян Ш.Л., Место арабской лиги в международных отношениях, Проблемы Современной Советской Арабистики, Ер., 1988, с. 253.

⁶¹ Внешняя политика стран Ближнего и Среднего Востока, М., 1984, с. 242.

⁶² "Le Figaro", 13.12.1978, Оգլափորձված է ըստ՝ Горбатов О., Черкасский Л., Борьба СССР за обеспечение прочного и справедливого мира на Ближнем Востоке, М., 1980, с. 222.

⁶³ Գնորզյան Գ.Գ., Արաբական աշխարհում Եզիպտոսի մեկուսացման հարցի շուրջ, էջ 108:

⁶⁴ .06.11.1978 الكباب، الكريت،

⁶⁵ .29.11.1978 السفير، بيروت، الشهاب، عمان،

Սալիմ Հոսի առաքելության ձախողումից հետո Սադաթին Իսրայելի հետ համաձայնության գալուց հետ պահելու նպատակով պահպանողական վարչակարգերը ևս մեկ քայլ ձեռնարկեցին՝ առաջարկելով Կահիրեին 5 մլրդ դոլար անվերադարձ օգնություն, եթե վերջինս իրաժարվի քեմփենիյան համաձայնագրերից⁶⁶: Սակայն Սադաթը մերժեց նաև այս առաջարկը: Ըստ պաղեստինյան գործիչ Յ.Ա. Ռաֆրոյի՝ Սադաթի այդ քայլը հիասթափեցրեց արաբական այն երկրներին, որոնք դեռ շարունակում էին խոշընդունել հակաեզրակացների կիրառումը⁶⁷: Գազարնաժողովի մասնակից երկրներն իրենց եզրափակիչ հոչակագրում որոշեցին միաձայն իրազործել Տրիպոլիում 1977 թ. մշակված և Եզիջապոսի դեմ ուղղված պատժամիջոցները, եթե Սադաթը ստորագրեր Եզիջապոսի հաշտության պայմանագիրը⁶⁸: Ի հակակշիռ Եզիջապոսի՝ որոշվեց ստեղծել Իսրայելին անմիջական դիմակայող երկրների օգնության հիմնադրամ՝ «Հորդանան, Սիրիա և ՊԱԿ», որը պետք է ֆինանսավորեին Սաուդյան Արաբիան, Լիբիան, Իրաքը, Ալժիրը, Քուվեյթը, ԱՄԷ-ն և Կատարը⁶⁹:

Քեմփենիյան համաձայնագրերը 1979 թ. փետրվարին դատապարտեց նաև Իսլամական աշխարհի լիզան (ԻԱԼ)⁷⁰, որի քարտուղար Մուհամմադ Ալի Ալ-Հարարանիի կողմից պատրաստված համապատասխան փաստաթղթում խիստ քննադա-

⁶⁶ Зверева Л., Некоторые итоги экономического бойкота Египта с арабскими странами, Народы Азии и Африки, М., 1981, № 4, с. 110.

⁶⁷ Parker T., The Road to Camp David. U.S. Negotiating Strategy towards the Arab-Israeli Conflict, N.Y., 1989, p. 136.

⁶⁸ .06.11.1978 العراق، بغداد

⁶⁹ Tibi B., Conflict and War in the Middle East: from interstate War to new Security, N.Y., 1989, p. 142.

⁷⁰ ԻԱԼ-ը հիմնվել է 1962 թ. Սաուդյան Արաբիայում, նատավայրը գտնվում է Մերքայում: ԻԱԼ-ը ֆինանսական մեծ կարողություն ունի և իսլամական աշխարհում գրադարձ է տարբեր ծրագրերի իրականացմամբ:

տության էր ենթարկվում Խորայելի հետ կապված ցանկացած անջատողական քաղաքականություն⁷¹:

Արդարացի լինելու համար պետք է փաստել, որ քեմփենիդյան համաձայնագրերը դատապարտվել են ոչ միայն արաբական այսպես կոչված առաջադեմ վարչակարգ ունեցող երկրների, այլ նաև խորայելական որոշ քաղաքական ուժերի կողմից: Օրինակ, եթե ստորագրվեց Եզիջտա-խորայելական հաշտության պայմանագիրը, խորայելական մի շարք աջ խմբավորումներ ընդհանրապես մերժեցին պաղեստինյան ինքնավարության գաղափարը և, միավորվելով «Գուշ Էմունիմ» դաշինքի դեկավարության հետ, 1979 թ. հոկտեմբերի 8-ին հիմնեցին ազգային նոր ծայրահեղական «Թեհիա» («Վերածնունդ») խմբավորումը: Խմբավորումը հայտարարեց, որ պայքարելու է 1967 թ. գրավված տարածքների, այդ թվում՝ Սինայ թերակղզու լիակատար աներսիայի և քեմփենիդյան ամոթալի համաձայնագրերից հրաժարվելու համար⁷²:

Չնայած այն հանգամանքին, որ Բաղդադի գագաթնաժողովի մասնակից պահպանողական վարչակարգերն արտաքուստ կողմ էին ընդունված հակաեզիջտական որոշումներին, իրականում փորձում էին դրանք շրջանցել:

1978 թ. Վերջին Քուվեյթը, Արու Դաբին, ՕՊԵԿ-ը և Արաբական արժույթային հիմնադրամը Եզիջտոսին տրամադրեցին միայն 56,1 մլն դրամ վարկ⁷³: Մեր կարծիքով տվյալ դեպքում օգնության չափը դեր չէր խաղում, այլ կարենո՞ն այն էր, որ այդ երկրները ցանկանում էին Կահիրէին ցույց տալ, որ իրենք դեռ շարունակում էին Եզիջտոսի կողքին մնալ:

⁷¹ Шарипов Р.М., Панисламизм сегодня: идеология и практика Лиги Исламского Мира, М., 1986, с. 107.

⁷² Смирнов В.Ю., Политические партии Израиля и национальное самоопределение арабского народа Палестины, Народы Азии и Африки, № 5, М., 1980, с. 46.

⁷³ Нефтедоллары и Социально-экономическое развитие стран Ближнего и Среднего Востока, М., 1979, с. 15-116.

Բաղդադի զագաթնաժողովից հետո՝ 1978 թ. նոյեմբերին, Սահաթը, փորձելով եզիպտա-խրայելական հաշտության պայմանագրի հարցի շուրջ համաձայնության եզրեր գտնել Հռ-Ռիյադի հետ, Սաուդյան Արաբիա գործուղեց իր հատուկ բանագնացին: Վերջինիս նույնապես հրաժարվեցին ընդունել⁷⁴: Միևնույն ժամանակ անհաջողության մատնվեցին նաև ամերիկյան բանագնաց Վենսի մաքորային քայլերը, որոնք նպատակ ունեին ներքաշելու արևմտամետ կողմնորոշում ունեցող արաբական մյուս երկրներին քեմփունիյան համաձայնագրերի մեջ: աղբյուր

Անտեսելով քեմփունիյան համաձայնագրերի առկայությունը՝ 1979 թ. Քետրվարին Քուվեյթում գումարվեց ԱՊԼ-ի արտահերթ նիստը, որին հրավիրվել էր նաև եզիպտական պատվիրակությունը: Քուվեյթը նախապես երաշխավորել էր Եզիպտոսի պատվիրակության անվտանգությունը⁷⁵: ԱՊԼ-ի արտահերթ նիստի օրակարգում «Հյուսիսային Եւննի դեմ Աղենի ազրեսիայի» հարցն էր⁷⁶:

Չնայած արաբական իսլամական աշխարհում ձևավորված խոչընդուներին Սահաթը, այնուամենայնիվ, ընտրեց Խրայելի հետ համաձայնության հասնելու ճանապարհ՝ 1979 թ. մարտի 26-ին Վաշինգտոնում Քարթերի միջնորդությամբ Քեզինի հետ ստորագրելով քեմփունիյան համաձայնագրերով նախատեսված Եզիպտա-խրայելական հաշտության պայմանագիրը⁷⁷:

Պայմանագրի առաջին հոդվածի համաձայն՝ Խրայելի և Եզիպտոսի միջև դադարում էր պատերազմական վիճակը, այնուհետև Խրայելը պարտավորվում էր երեք տարվա ընթացքում զորքերը դուրս բերել Սինայից: Պայմանագրի ստորագրման օրից սկսած, ինը ամիսների ընթացքում, երկու երկրների միջև պետք է հաստատվեին դիվանագիտական, տնտեսական և մշակութային

⁷⁴ 14.11.1978، الوطن، القاهرة.

⁷⁵ Гали Б.Б., նշվ. աշխ., էջ 227:

⁷⁶ Նոյն տեղում:

⁷⁷ The Egyptian-Israeli Peace Treaty, United States Policy Statement Series, 1979, The White House, Monday, March 26, 1979, p. 21.

հարաբերություններ: Իսրայելական նավերը Սուեզի ջրանցքով ազատ նավարկելու իրավունք էին ստանում, իսկ Եգիպտոսը պարտավորվում էր շուկայական գներից ցածր գնով նավթ տրամադրել Իսրայելին: Այս ամենի կատարումը երաշխավորում էր ԱՄՆ-ը: Մի քանի ամիս անց Եգիպտոսի ժողովրդական ժողովը ձայների 99 %-ով վավերացրեց Եգիպտա-իսրայելյան հաշտության պայմանագիրը⁷⁸: Պայմանագրի ստորագրումից մեկ ամիս անց՝ 1979 թ. ապրիլի 28-ին, երբ այն ուժի մեջ մտավ, սկսվեցին պաղեստինյան ինքնավարության վերաբերյալ Եգիպտա-իսրայելական բանակցությունները:

1979 թ. մարտի 27-31-ը Բաղդադում կայացավ արաբական երկրների արտաքին գործերի, նավային հարցերով, ինչպես նաև տնտեսական կառույցների նախարարների հանդիպում⁷⁹: Հանդիպմանը ներկա էին արաբական բոլոր երկրների և ՊԱԿ-ի ներկայացուցիչները: Բացակայում էին միայն Եգիպտոսի ներկայացուցիչները:

Հանդիպմանը որոշվեց. Ճիշտ կլինի հենց հոչակագրի տեքստը ունենալ.

1. Դադարեցնել Եգիպտոսի անդամակցությունն ԱՊԼ-ում և նրա բոլոր մասնագիտացված շուրջ 140 կառույցներում: Կազմակերպության նստավայրը Կահիրեից տեղափոխել Թունիսի: ԱՊԼ-ի գլխավոր քարտուղարի պաշտոնում եղիպտացի Մահմուդ Ռիյադին փոխարինեց թունիսցի Շազլի Քիբին: Դադարեցնել Եգիպտոսի հետ դիվանագիտական բոլոր հարաբերությունները: Կահիրեից Ամման տեղափոխել Արաբական տնտեսական և սոցիալական խորհրդի նստավայրը:

⁷⁸ Арабская Республика Египет, էջ 97.

⁷⁹ Валькова Л.В., Саудовская Аравия: нефть, политика, ислам, էջ 149-150; Киселев В.И., Палестинская проблема и ближневосточный кризис, Киев, 1981, с. 155.

2. Դադարեցնել Եգիպտական կառավարությանը ֆինանսական և տեխնիկական օգնության տրամադրումը⁸⁰, տարբեր վարկերի և պարտատոմսերի հատկացումը ինչպես պետական, այնպես էլ միջարարական հիմնադրամի շրջանակներում⁸¹: Դադարեցնել Եգիպտական կառավարության կողմից թողարկված տարբեր տեսակի արժեթղթերի ձեռքբերումը: Դադարեցնել Եգիպտոսի անդամակցությունը Միջարարական ներդրումային բանկում և Արարական արժութային հիմնադրամում:
3. Սառեցնել Եգիպտոսի անդամակցությունը Նավթարդյունաբերող արարական երկրների կազմակերպությունում՝ ОУՊԵԿ-ում: Հրաժարվել Սադաթի կառավարությանը նավթ և նավթամթերք մատակարարելուց: Նավթ տեղափոխող արարական երկրներին արգելել Եգիպտական նավթ տեղափոխել, իսկ արարական նավաշինարարական դոկերին արգելել Եգիպտական նավեր վերանորոգել:
4. Դադարեցնել օդային հաղորդակցությունը Եգիպտոսի հետ: Բոյկոտել Եգիպտական այն կազմակերպությունները, որոնք համագործակցում են Իսրայելի հետ: Դադարեցնել Եգիպտոսի անդամակցությունն Արարական պետությունների միջնորդարանական միությունում⁸²:

⁸⁰ Кукушкин В.Ю., Экономический рост и проблемы накопления, Страны Северной Африки, М., 1986, с. 112.

⁸¹ Зверева Л.С., Основные тенденции внешнеэкономических связей, Страны Северной Африки, М., 1984, с. 183.

⁸² Араслы Э.Г., Межарабские экономические отношения в 60-70-е годы, М., 1985, с. 165; Зверева Л., Некоторые итоги экономического бойкота Египта с арабскими странами, էջ 111; Андреасян Р.Н., Нефть и арабские страны в 1973-1983 гг., М., 1990, с. 154; Գևորգյան Գ.Գ., Արարական աշխարհում Եգիպտոսի մեկուսացման հարցի շուրջ, նշվ. աշխ., էջ 109: Новейшая история арабских стран Азии, М., 1989, с. 345; Валькова Л.В., Саудовская Аравия: нефть, политика, ислам, էջ 111.

Արաբական բոլոր երկրները, բացի Օմանից, Սուդանից և Սումալիից, միացան այդ որոշումներին և 1979 թ. ապրիլ-մայիս ամիսների ընթացքում խօսքին Եգիպտոսի հետ դիվանագիտական հարաբերությունները⁸³: Համաձայն Վերակառուցման և զարգացման միջազգային բանկի տվյալների՝ Եգիպտոսը զրկվեց արաբական երկրների կողմից տարեկան տրամադրվող 2,7 մլրդ դոլար օգնությունից⁸⁴:

Նպատակ ունենալով ամբողջացնել Եգիպտոսի քաղաքական մեկուսացումն արաբական աշխարհում՝ 1979 թ. մայիսի 8-12-ը Ֆեսում Իսլամական կոնֆերանս կազմակերպության՝ ԻԿԿ-ի (այժմ՝ Իսլամական համագործակցության կազմակերպություն) անդամ-պետությունների հանդիպմանը Սաուդյան Արաբիայի նախաձեռնությամբ որոշում ընդունվեց սառեցնել Եգիպտոսի անդամակցությունն իսլամական աշխարհի այդ հեղինակավոր կազմակերպությունում ևս⁸⁵. ԻԿԿ-ում Եգիպտոսի անդամակցությունը սառեցնելու հարցում միասնական չեն Աֆրիկայի մուսուլմանական երկրները: Հանդիպման մասնակից աֆրիկյան վեց պետություններ՝ Սենեգալը, Գարոնը, Գամբիան, Նիգերը, Վերին Վոլտան և Գվինեա Բիսաուն, հայտարարեցին, որ իրենք այդ հարցում դեռ չեն հստակեցրել իրենց դիրքորոշումը⁸⁶: Հակառակիպատական պատճամիջոցների շրջանակներում Էո-Միայնը հրաժարվեց ԱՄՆ-ին վճարել 525 մլն դոլար՝ Եգիպտոսին 50 ռեակտիվ «Ֆ-5» տիպի կործանիչներ տրամադրելու նպատա-

⁸³ Владимиров В., Цена американской "помощи", Азия и Африка сегодня, № 7, М., 1983, с. 8.

⁸⁴ Арабская Республика Египет, էջ 97.

⁸⁵ Krämer G., Ägypten unter Mubarak: Identität und nationales Interesse, Baden-Baden, 1986, S. 1644; Le Monde, 14.05.79, Оценка генерала Ельцина: Арабский мир, նշվ. աշխ., Кудрявцев А.В., Исламский мир и палестинская проблема, М., 1990, с. 103.

⁸⁶ Жданов Н.В., Игнатенко А.А., Ислам на пороге 21 века, М., 1989, с. 260; Меркулов К.А., Ислам в мировой политике и международных отношениях, М., 1982, с. 209.

կով⁸⁷: 1979 թ. հուլիսի 4-ին Բ. Ղալին ժամանեց Մոնրովիա (Լիբերիա)՝ մասնակցելու Աֆրիկյան միասնության կազմակերպության (ԱՄԿ) զազարնաժողովին, որտեղ պետք է քննարկվեր Եգիպտոսի անդամակցության դադարեցման հարցն այդ կազմակերպությունում: Առաջին մի քանի նիստերին Եգիպտոսի դատապարտմամբ հանդես եկան Անգոլան, Մոզամբիկը, Կոնգոն, Սալին և Բենինը: Մի փոքր ավելի մեղմ դիրքորոշմամբ հանդես եկավ Նիգերիան: Հուլիսի 15-ին Մոնրովիա ժամանեց նաև Սադարը⁸⁸: Երկարատև բանավեճերից հետո Եգիպտոսին ի վերջո հաջողվեց պահպանել իր անդամակցությունը ԱՄԿ-ում⁸⁹:

Հակառակ այն հանգամանքին, որ արաբական երկրների մեծ մասը հականգիպտական դիրքորոշում ուներ, ինչը հանգեցրել էր Եգիպտոսի հետ դիվանագիտական կապերի խզմանը և ԱՊԼ-ում ու ԻԿԿ-ում Եգիպտոսի անդամակցության դադարեցմանը, այնուամենայնիվ, արաբական որոշ երկրներ շարունակում էին զգուշությամբ մոտենալ Եգիպտոսի քննադատությանը:

1979 թ. մարտից մինչև 1980 թ. վերջը Եգիպտոսի հանդեպ արաբական երկրների դիրքորոշումը հետևյալն էր.

1. SՀԱՃ-ի անդամ-երկրները՝ Սիրիան, Լիբիան, Ալժիրը, ԵԺԴՀ-ն, ինչպես նաև ՊԱԿ-ը, ծայրահեղ անհանդուժողական կեցվածք էին ընդունել: Նրանց միացել էր նաև Լիբանանը, որը սակայն SՀԱՃ-ի անդամ-պետություն չէր:

⁸⁷ Захаров А., Фомин О., նշվ. աշխ., էջ 130:

⁸⁸ Եգիպտոսի նախազարդ նախրան իր ելույթը հանդիպել էր Գաբոնի, Տանզանիայի, Բուրունդիի, Կամերունի, Սենեգալի, Գվինեայի և Նիգերիայի նախազահների հետ: Սադարի հանդիպումը նրանց հետ կանխորոշեց աֆրիկյան երկրների դրական դիրքորոշումը, Եգիպտոսի հարցի քննարկման նիստի ընթացքում: Մանրամասն տե՛ս Ս. Գալի Ե.Բ., նշվ. աշխ., էջ 296:

⁸⁹ Նույն տեղում:

- Եզիպտական դաշինքը՝ Սուլանը, Օմանը, Մարոկկոն և Սոմալին, շարունակում էր սատարել Սաղաթի քաղաքականությանը:
- Չափավոր մոտեցում ունեցող երկրներն էին Սաուդյան Արաբիան, Հորդանանը, Իրաքը⁹⁰, Քուվեյթը, ԱՄԷ-ը, Բահրեյնը, Կատարը և ԵԱՀ-ն, որոնք պահպանում էին շփումները Եզիպտոսի հետ (բացի Իրաքից):
- Չեզոք դիրքորոշում ունեին Թունիսը, Մավրիտանիան, Ջիբուտին, որոնք ձեռնպահ էին մնում Սաղաթի քաղաքականության քննադատությունից⁹¹:

Եզիպտա-իսրայելյան հաշտության պայմանագիրը դատապարտեցին նաև Իսրայելի և արաբական երկրների կոմունիստական կուսակցությունները⁹²: Եզիպտոսը փորձում էր պահպանել նաև իր անդամակցությունը Զմիացած երկրների շարժման կազմակերպությունում: Այդ նպատակով 1979թ. օգոստոսի 26-ին Բ. Ղալին մեկնեց Հավաննա՝ մասնակցելու օգոստոսի վերջին կայանալիք Զմիացած երկրների շարժման վեցերորդ գագաթնաժողովին⁹³: Կուբայում հանդիպելով երկրի նախագահ Խսիդոր Մալմերկայի հետ Ղալին նշեց, որ Հավաննան, լինելով նախագահող երկիր, շատ բան կարող է անել կազմակերպությունում Եզիպտոսի դիրքերը պահպանելու ուղղությամբ⁹⁴:

Կազմակերպությանը Եզիպտոսի անդամակցության դադարեցման հարցի քննարկման ժամանակ Կահիրեին եռանդուն սատարեցին Զաիրը, Տոգոն, Լիբերիան, Զամբիան, Կոտ Դի-Վուարը, որոնց միացան նաև Նեպալը, Սինգապուրը, Պերուն և

⁹⁰ Իրաքի՝ Եզիպտոսի հանդեպ ավելի մեղմ դիրքորոշում ունենալը պայմանավորված էր 1980 թ. սեպտեմբերին սկսված իրաքա-իրանյան պատերազմով:

⁹¹ Taylor A.R., Աշվ. աշխ., էջ 124:

⁹² Правда, М., 13.05.1979.

⁹³ Артемьев П., Подлинные и мнимые друзья движения неприсоединения, М., 1982, с. 85.

⁹⁴ Նոյն տեղում:

Արգենտինան, իսկ Սուդանը, Մալին, Հարավսլավիան և Հնդկաստանը քվեարկության ժամանակ ձեռնպահ մնացին: Եզիպտոսի օգտին քվեարկել էր նաև Մարոկոն՝ հակառակելով Սիրիային և Իրաքին: Այդպիսով, Եզիպտոսին հաջողվեց պահպանել իր անդամակցությունն այդ կազմակերպությանը, ինչը պայմանավորված էր աֆրիկյան երկրների և Ֆիդել Կաստրոյի գործոնով: Հաշվի առնելով մի շաբթ հանգամանքներ՝ Ֆիդել Կաստրոն շցանկացավ, որ Եզիպտոսի նկատմամբ «հաշվեհարդարը» տեղի ունենար Կուրճայում և հենց իր՝ Կաստրոյի նախագահած նիստին⁹⁵:

1979 թ. դեկտեմբերի 6-ին Եզիպտա-խարայելական հաշտության պայմանագիրը դատապարտեց նաև ՍՍԿ-ի Գլխավոր ասամբլեան⁹⁶: 1981 թ. մայիսի 18-ին ՍՍԿ-ի ԱԽ-Ն մերժեց նաև Եզիպտոսին Սինայում միջազգային ուժեր տեղակայելու խընդրանքը: Սինայում տեղակայվեցին միայն ԱՄՆ-ի, Ֆիջիի, Կոլումբիայի և Ուրուգվայի ստորաբաժանումները: Լատինական Ամերիկայի գորքերի տեղակայումը Սինայում Ղալիի՝ Հարավային Ամերիկա առաքելության արդյունքն էր, քանի որ Եզիպտոսին շատ ավելի անհրաժեշտ էր Սինայում միջազգային գորքերի առկայության ապահովումը, քանի որ հակառակ դեպքում միայն ամերիկյան գորքերի տեղաբաշխումը Սինայում կարող էր խորացնել Եզիպտոսի մեկուսացումն արաբական աշխարհում⁹⁷:

Առաջին հայացքից բավկանին խիստ թվացող հականգիպտական պատժամիջոցները պետք է ըստ եռթյան արաբական աշխարհում փակուղու մեջ դնեին Կահիրեին: Սակայն, հակառակ այս ամենին, հականգիպտական պատժամիջոցներն

⁹⁵ Гали Б.Б., նշվ. աշխ., էջ 304-322, Новое время, М., № 38, 1979.

⁹⁶ Захаров А., Фомин О., նշվ. աշխ., էջ 174:

⁹⁷ Հետազոտություն Սինայում տեղակայված գորքերի կազմը համալրվեց Ավստրալիայի, Կոլումբիայի, Ֆրանսիայի, Իտալիայի, Նիդեռլանդների, Նոր Զելանդիայի ստորաբաժանումներով: Միջազգային ուժերը այդպես էլ չփոխարինվեցին ՍՍԿ-ի գորամիավորներով: Սանրամասն ունի Ghali B.B., Egypt's Road to Jerusalem, Cairo, 1998, p. 415.

արաբական մի շարք երկրների, մասնավորապես Սաուդյան Արաբիայի զիսավորած Ծոցի միապետական իշխանությունների կողմից չէին իրականացվում:

Բաղդադի՝ 1979 թ. խորհրդաժողովին ընդունված հակա-եզիստական որոշումների արդյունքում երկիր ներմուծվող արա-բական կապիտալը զգալի նվազեց, բայց շրադարձեց⁹⁸: Հակա-եզիստական պատժամիջոցների մասնակի լինելու մասին վկա-յում է այն փաստը, որ 1979 թ. ապրիլին Քուվեյթում ՕՍՊԵԿ-ի անդամ-երկրների հանդիպմանը չընդունվեց Իրաքի, Սիրիայի, Ալժիրի և Լիբիայի առաջարկը՝ Եզիստոսի դեմ բոյկոտը տա-րածել նաև Սոււեզի ջրանցքի և Սոււեզ-Ալեքսանդրիա (ՍՈՒԻՄԵԴ) նավթամուղի վրա⁹⁹: Հարկ է նշել, որ ՍՈՒԻՄԵԴ նավթամուղով անցնող նավթի 80 %-ը պատկանում էր Էո-Ռիյադին, որի մի մասը կազմում էին արաբական երկրների վճարումները, 1980 թ. կազմեց 660 մլն դրամը¹⁰⁰: Անտեսելով համարաբական նշանա-կություն ստացած հակաեզիստական որոշումները՝ Սաուդյան Արաբիան շարունակում էր պահպանել օդային կապը Եզիս-տոսի հետ, չէր սառեցրել եզիստական քանկերում պահվող 1 մլրդ դրամի հասնող իր ավանդները, չէր արտաքսել իր երկրում ներգրավված եզիստական աշխատուժը, չէր արգելել իր քաղա-

⁹⁸ Mc Dermott A., Egypt, Middle East Review 1983, 9th ed., Saffron Walden (England), 1987, p. 156.

⁹⁹ Middle East Economic Digest, May, N 22, 30.05.1979, p. 24. ՍՈՒԻՄԵԴ նավթամուղը 320 կմ երկարությամբ կապում է Սոււեզի Ծոցի ափին գտնվող Այն-Սոււինա քաղաքը միջերկրածովյան Սիրի-Կրիր նավա-հանգստի հետ, որը Ծոցի ջրանից Եվրոպա տեղափոխվող նավթային կարևորագույն ճանապարհն էր: Այս մասին մանրամասն տե՛ս Հ. Состоя-ние и перспективы развития транспорта и хранения нефти в странах Ближнего и Среднего Востока и Африки, М., 1981, с. 17.

¹⁰⁰ Судьбы Социалистической Ориентации в Арабском Мире, М., 1983, с. 766, Horizont, Berlin 1981, № 23, S. 23.

բացիներին Եզիպտոսում անշարժ գույք զնել և իրենց գումարները ներդնել Եզիպտական տնտեսության մեջ¹⁰¹:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ Եզիպտոսի տնտեսությունը զգալի չափով կախվածություն ուներ արաբական երկրներում աշխատող Եզիպտացիների գումարային փոխանցումներից, Ծոցի միապետությունները հետամուտ էին, որպեսզի հակառակիպտական պատժամիջոցները չտարածվեին իրենց երկրներում ներգրավված Եզիպտական աշխատուժի վրա¹⁰²: Նշենք, որ 1978 թ. Լիբիայում և Ծոցի միապետություններում ներգրավված 1,5-2 մլն Եզիպտական աշխատուժի հայրենիք փոխանցած գումարի չափը կազմել էր 1,7 մլրդ դոլար¹⁰³: Արաբական աշխարհում ներգրավված Եզիպտական աշխատուժի հայրենիք փոխանցած գումարը 1989-1990 թվականներին կազմել էր 8 մլրդ դոլար և գերազանցել զբոսաշրջությունից, նավթի արտահանումից և Սուեզի ջրանցքի շահագործումից ստացված եկամուտները միասին վեցրած¹⁰⁴: ՏՀԱՀ-ի անդամ-երկրները ևս չեին ցանկանում, որպեսզի Եզիպտոսի դեմ ուղղված պատժամիջոցները տարածվեն ևս Եզիպտական աշխատուժի վրա: ՏՀԱՀ-ի անդամ-երկրներում նշվում էին, որ Եզիպտացիները չպետք է տուժեին Սահարի անշատողական քաղաքականության հետևանքով:

1980 թ. փետրվարին Եզիպտոսի և Խարայելի միջև տեղի ունեցավ դիվանագիտական ներկայացուցիչների փոխանակում¹⁰⁵:

¹⁰¹ Валькова Л.В., Саудовская Аравия: нефть, ислам, политика, № 213, The Financial Times, L., 28.04.80.

¹⁰² Судьбы Социалистической Ориентации в Арабском Мире, № 214:

¹⁰³ "The Financial Times", London, 30.07.1979.

¹⁰⁴ Гусаров В.И., Экономическая независимость арабских стран, М., 1993, с. 243.

¹⁰⁵ White Paper on Normalization of Relations between the Arab Republic of Egypt and State of Israel, Cairo, 1984, p. 78; The Christian Science monitor, Boston, 07.02.1980.

Նպատակ ունենալով խստացնել Եգիպտոսի մեկուսացումն արաբական աշխարհում՝ 1980 թ. ապրիլի 12-15-ը Տրիպոլիս կայացավ ՏՀԱՃ-ի անդամ-երկրների չորրորդ հանդիպումը: Մասնակից երկրները որոշեցին Եգիպտոսի հանդեպ կիրառել ԱՊԼ-ի կողմից Խորայելի հետ համագործակցող երկրների նկատմամբ սահմանված պատժամիջոցները, որոնք նախատեսում էին առևտրական և տնտեսական հարաբերությունների դադարեցում¹⁰⁶: Սակայն, հակառակ այս ամենին, Էո-Շիյազը շարունակում էր ֆինանսական օգնություն ցույց տալ Սուդանին՝ անտեսելով այն հանգամանքը, որ Խարտումը չէր միացել Եգիպտոսի մեկուսացմանն ուղղված համարաբական պատժամիջոցներին¹⁰⁷: Նոյնիսկ Սիրիան, որը ՏՀԱՃ-ի կազմավորման նախաձեռնողներից էր և առավել անհանդուրժողական դիրքորոշում ուներ Սադաթի հանդեպ, շարունակում էր պահպանել Եգիպտոսի հետ առևտրային հարաբերությունները: 1982 թ. երկու երկրների միջև ապրանքաշրջանառության գումարը կազմել էր 0,5 մլն դոլարը¹⁰⁸:

Հաշվի շառներով, որ Եգիպտոսի անդամակցությունը սառեցված էր ԻԿԿ-ում, 1980 թ. հունիսի 27-ին Խալամաբադում տեղի ունեցած ԻԿԿ-ի արտահերթ հանդիպմանը Ծոցի միապետությունների կողմից հրավիրվել էր նաև Սադաթի կողմից լիազորված պատվիրակությունը: ԻԿԿ-ի նիստին քննարկվում էր Աֆղանստանի հարցը՝ կապված խորհրդային գորքերի այդ երկիր ներխուժման հետ¹⁰⁹:

1980 թ. հունվարի 25-ին Խորայելը Եգիպտոսին վերադարձրեց Սինայ թերակղու մի մասը՝ ալ-Արիշը, Ռաս-Մուհամմադ գծից արևմուտք ընկած տարածքի մի հատվածը, որտեղ գտնվում էն Եգիպտական նավթահանքերը: Նշենք նաև, որ 1979 թ. Նո-

¹⁰⁶ Зверева Л., Некоторые итоги экономического бойкота Египта арабскими странами, № 111:

¹⁰⁷ Quandt W., Saudi Arabia in the 1980-s, Washington, 1984, p. 28.

¹⁰⁸ Араслы Э.Г., Աշլ. աշլ., № 176:

¹⁰⁹ Валькова Л.В., Саудовская Аравия: нефть, ислам, политика, № 83-84.

յեմբերին Սադաթը համաձայնել էր Իսրայելին հատկացնել շուկայական գներից ցածր տարեկան 2 մլն տոննա նավք¹¹⁰:

Արարական աշխարհում Եզիպտոսի քաղաքական մեկուսացումը ճեղքվեց 1980 թ. սեպտեմբերի վերջին, երբ նույն թվականին սկսված իրաքա-իրանյան պատերազմի հետևանքով Բաղդադը Սադաթից ռազմական օգնություն խնդրեց: Իրայան զորքերն անկարող գտնվեցին արագ պարտության մատնել Իրանին, իսկ Բաղդադի սպառազինության պաշարներն անսպառ չէին, ուստի արաքական միակ երկիրը, որը կարող էր համապատասխան քանակությամբ գենք տրամադրել, Եզիպտոսն էր:

1981 թ. սեպտեմբերին Բենզազիում (Լիբիա) հավաքված ՏՀԱՀ-ի անդամ-երկրները Մերձավոր Արևելքում աճող ողջ լարվածությունը բարդեցին ԱՄՆ-ի և Իսրայելի վրա, բայց չնշեցին Եզիպտոսը¹¹¹:

Հակված ենք համարելու, որ՝ Եզիպտոսի մեկուսացումն արաքական աշխարհում ամբողջական չէր, այն թերի էր և վերջապես չկրեց տևական բնույթ: Հաշվի չառնելով Եզիպտա-արաքական հարաբերությունների խզման փաստը և այն, որ Եզիպտոսի անդամակցությունը դադարեցվել էր միջարաքական և միջմուսուլմանական մի շարք կազմակերպություններում, արաքական մի խումբ երկրներ Սաուդյան Արաբիայի զիխավորությամբ շարունակում էին կապեր պահպանել Սադաթի վարչակարգի հետ: Ի տարբերություն քաղաքական մեկուսացման Եզիպտոսի տնտեսական մեկուսացումն արաքական աշխարհում շատ ավելի թերի էր կամ գրեթե գոյություն չուներ¹¹²: Չնայած հակա-

¹¹⁰ Z. Bzhezinski, Power and Principle, memoirs of the National Security Advizer, London, 1983, p. 24.

¹¹¹ Journal of Palestine Studies, Vol. XI, Nov., № 2, Winter, 1982, pp. 192-193.

¹¹² Հարկ է նշել, որ Եզիպտոսի նկատմամբ տնտեսական պատժամիջոցները չէին տարածվել արաքական մասնավոր ընկերությունների վրա, որոնց մեծամասնությունը շարունակում էր համագործակցել Եզիպտական պետական և մասնավոր ընկերությունների հետ:

Եզիպտական տնտեսական պատժամիջոցներին՝ Եզիպտա-արաբական առևտրական հարաբերությունները 1979-1982 թթ. գտնվում էին բավականին բարձր մակարդակի վրա: 1979 թ. Եզիպտա-արաբական ապրանքաշրջանառությունը կազմեց 409,2 մլն դոլար, 1980 թ.՝ 470,3 մլն դոլար, 1981 թվականին՝ 311,8 մլն դոլար, 1982 թ.՝ 387,8 մլն դոլար¹¹³:

Արաբական երկրները Եզիպտոսի մեկուսացմանն ուղղված պատժամիջոցները չեն տարածել Եզիպտացիների և, որն ավելի կարևոր է, արաբական աշխարհում ներգրավված Եզիպտական աշխատուժի վրա: Համեմատաբար կարճ ժամանակաշրջանում Եզիպտոսին հաջողվեց վերացնել նաև քաղաքական մեկուսացումը, որը մի կողմից պայմանավորված էր արաբական Արևելքի երկրների զգալի մասում Եզիպտական գործոնի կենսունակությամբ և մյուս կողմից՝ Մերձավոր և Միջին Արևելքում և ընդհանրապես «երրոր աշխարհում» տարբեր քաղաքական անցուղարձերի նկատմամբ Կահիրեի գործուն քաղաքական կեցվածքով:

1.2. ԵԳԻՊՏՈՍԻ ԱՐՏԱՔԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆ ՆՈՐ ՀԱՅԵՑԱԿԱՐԳԻ ԶԵՎԱՎՈՐՈՒՄԸ (1980-ԱԿԱՆՆԵՐԻ ՍԿԻՋԲ)

1981թ. հոկտեմբերի 6-ին՝ Կահիրեի արվարձանում ուզմական շրերքի ժամանակ, «ալ-Զիհադ ալ-Զայդիդ» ծայրահեղ իսլամական խմբավորումը կազմակերպեց Եզիպտոսի նախագահ Անվար Սահարի սպանությունը¹¹⁴: Հոկտեմբերի 13-ին անցկացված հանրաքվեի արդյունքում նախագահ ընտրվեց փոխնախագահ Սուլիամմեդ Հոսնի Սուլիարաքը¹¹⁵: Ռազմաօդային ուժերի

¹¹³ International Monetary Fund, Direction of Trade, 1982-1983, L., 1984, p. 21.

¹¹⁴ Игнатенко А.А., Халифы без Халифата, М., 1988, с.. 6.

¹¹⁵ Haskins J., Liders of the Middle East, Wash., 1985, p. 128;

.9, ص. 1991

հրամանատար գեներալ-մայոր Մուբարաքը 1975 թ. ապրիլի 16-ին Սադաթի կողմից նշանակվել էր փոխնախազահի պաշտոնում՝ փոխարինելով Հուսեյն Աշ-Շաֆիին¹¹⁶: 1981 թ. Հունվարից Մուբարաքը զբաղեցնում էր նաև իշխող ազգային դեմոկրատական կուսակցության գլխավոր քարտուղարի պաշտոնը:

Սադաթի նախազահության վերջին շրջանում լուրջ տարածայնություններ էին ի հայտ եկել Եգիպտական կառավարության վերնախազի և նախազահի միջև: Ինչպես նշում էին լոնդոնյան «Դեյլի թելեգրաֆ» և իսրայելական «Զերուսալեմ փոսթ» թերթերը, փոխնախազահ Մուբարաքը փորձում էր վերանայել նախազահի արարական քաղաքականությունը¹¹⁷: Մուբարաքը գիտակցում էր, որ երկրի արտաքին քաղաքականության միակողմանի արևմտյան կողմնորոշումն Արևմտաք-Արևելք դիմակայության համատեքստում պարզապես կարճատեսություն էր, այդ իսկ պատճառով նա մշակեց Եգիպտոսի արտաքին քաղաքական նոր հայեցակարգ, որը հիմնված էր հավասարակշուրջան սկզբունքի վրա¹¹⁸:

Եգիպտոսի արտաքին քաղաքական հավասարակշուրջան պարզմատիկ քաղաքական նոր հայեցակարգի մշակման հեղինակներից էր նաև նախազահի քաղաքական հարցերով գրաւենյակի տնօրեն Ուսամա Ալ-Բագր, որը Մուբարաքի հետ առաջ քաշեց «Եգիպտոսի արարական ընտանիք զգույշ վերադարձի» արտաքին քաղաքական նոր հայեցակարգը¹¹⁹: Եգիպտոսի արտաքին քաղաքական նոր ուղեղիծը հանգում էր հետևյալ սկզբունքներին:

¹¹⁶ Сейранян Б.Г., Хосни Мубарак. Начало политической деятельности, Арабские страны Западной Азии и Северной Африки, М., 1997, с. 315.

¹¹⁷ Правда, М., 07.01.1981; The Daily Telegraph, L., 06.01.1981.

¹¹⁸ Титоренко В.Е., Формирование внешней политики Египта после Г.А.Насера (1970-1993гг.), М., 1994, с. 221.

¹¹⁹ Арабская Республика Египет, էջ 106

- շարունակել քեմփիդսիդյան համաձայնագրերի շրջանակներում հետամուտ լինել պաղեստինցիների համար անկախ պետականության ստեղծմանը:
- Շարունակել համագործակցությունը ԱՄՆ-ի հետ, վերականգնել հավասարակշռված հարաբերությունները մնացած բոլոր պետությունների և մասնավորապես գերտերություն ԽՍՀՄ-ի հետ:
- Շարունակել Խրայելի հետ կարգավորման գործընթացը, հաղթահարել արարական մեկուսացվածությունը և վերականգնել Կահիրեի վճռորոշ դերն արարական աշխարհում:
- Տարաբնույթ դարձնել Եգիպտոսի տնտեսական օգնության և ֆինանսավորման աղբյուրները:
- Հետևել «չմիանալու շարժման» քաղաքականության սկզբունքներին և խոշնարութել ուազմական դաշինքների ստեղծման նախաձեռնությունները¹²⁰:

Մուլքարքն իր գործունեությունը սկսեց Եգիպտական մամուլում արարական երկրների դեկավարների քննադատությունն արգելելով¹²¹: Ի պատասխան՝ Սաուդյան Արաբիայում հանվեց Եգիպտական թերթերի վաճառքի վրա դրված արգելքը¹²²: Դրան հաջորդեց Հորդանանի և Եմենի Արարական Հանրապետության (ԵԱՀ) կողմից Եգիպտական թերթերի վաճառքի վրա դրված արգելքի վերացումը¹²³: Արևմտյան մամուլը նշում էր, որ Եգիպ-

¹²⁰ The Egypt Point of View on International Issues, Egyption Moves in International Arena, Arab Republic of Egypt, Ministry of Information, Cairo, مبارك، القاهرة، 1991، ص.

¹²¹ Видясов М.Ф., Умеров М.Ш., Египет в последней трети 20 века, М., 2002, с. 100-101.

¹²² The Islamic World Review, L., 1981, № 4, 12, p. 5; TACC Атлас, № 8, 19.02.1982, с. 19.

جور جبور جيان، صياغة الرؤية الجديدة للسياسة الخارجية المصرية في الثمانينات، "أرييف"، نوفمبر 6-3، 2002، عدد 59، ص.

السياسة، الكويت، 12.03.1982

տոսի նոր նախազահն ձգուում էր մերձենալ հատկապես Սաուդյան Արաբիայի հետ¹²⁴, քանի որ Էո-Միջադը, հակառակ Խորայելի հետ Եգիպտոսի մերձեցմանը, չէր կարող չկարևորել Կահիրեի տեղն ու դերն արաբական աշխարհում:

1982 թ. Եգիպտոսի և Սաուդյան Արաբիայի միջև ապրանքաշրջանառության գումարային հաշվեկշիռը կազմում էր 138 մլն դոլար գերազանցելով 27,6 անգամ 1970 թ. տվյալները: Արդեն 1983 թ. սկզբին նախատեսվում էր տնտեսական պայմանագիր ստորագրել Սաուդյան Արաբիայի հետ, համաձայն որի՝ Էո-Միջադն իր վրա պետք է վերցներ Եգիպտոսում ինքնաթիռների, հրթիռների, ռադիոլոկացիոն միջոցների արտադրությունը: Ապագա այդ կառուցի ընդհանուր կապիտալը պետք է կազմեր 4 մլրդ դոլար¹²⁵:

Այնուհետև 1982 թ. ստորագրվել էր Եգիպտա-քուվեյթյան ընկերության ստեղծման մասին համաձայնագիրը, որը պետք է ֆինանսավորեր Եգիպտոսում հյուրանոցների, բնակելի շենքերի, ավտոկանգառների շինարարությունը: Ընկերության կապիտալի 75%-ը պատկանում էր քուվեյթյան ներդրողին¹²⁶:

Եգիպտոսի նոր նախազահ Մութարաքը, առաջ քաշելով «Եգիպտոսը բոլորի համար է» կարգախոսը, ի տարբերություն Սահարի «Եգիպտոսն ամեն ինչից վեր է» կարգախոսի, վերափոխեց արաբական աշխարհում Եգիպտոսի քաղաքականությունը¹²⁷: Քեմփդեհյան համաձայնագրի շրջանակներում շարունակելով խաղաղության գործընթացը՝ Մութարաքն իսկապես ցանկանում էր ապահովել պահեստինցիների մասնակցությունը բանակցություններին:

¹²⁴ The Financial Times, L., 03.12.1981.

¹²⁵ The Islamic World Review, L., 1981, № 4, 12, p.6.

¹²⁶ .21.02.1982 *السياسة، الكريب*,

¹²⁷ .27.04.1982 الأهرام، القاهرة - Георгиев А., Общественно-политическое развитие Египта - проблемы и тенденции, Мировая экономика и международные отношения, № 1, М., 1985, с. 131.

Արաբական աշխարհի հետ մերձեցման եզրագծեր գտնելու նպատակով Մուրարաքը փորձում էր մաներել նաև քեմփիդիիյան համաձայնագրերի շուրջ: Իսրայելի հետ խաղաղության գործընթացը բացահայտ չէր խախտվում¹²⁸: Մուրարաքը հայտարեց, որ Եգիպտոսը չի պատրաստվում Իսրայելի հետ իր հարաբերությունները զոհաբերել հանուն արաբական աշխարհի և ընդհակառակը¹²⁹:

Մուրարաքը պաշտոնապես հայտարարեց, որ հետևելու է նախորդ նախագահ Սահարի արտաքին քաղաքական ուղեգծին¹³⁰: Ստորագրելով քեմփիդիիյան համաձայնագրերը՝ Սադաթն իր առջև դրել էր երեք նպատակ՝ վերադարձնել Սինայ թերակղզին, ԱԱՆ-ի հետ հաստատել բազմակողմանի հարաբերություններ և նորովի ներկայանալ արաբական աշխարհում¹³¹, որոնց հետևում էր նաև Մուրարաքը: Նոր նախագահի դեկավարման առաջին շրջանում Եգիպտոսը կարողացավ իրականացնել վերոնշյալ երեք նպատակները:

1982 թ. ապրիլին Իսրայելը վերադարձրեց Սինայ թերակղզին: Սակայն դա չէր խանգարում, որպեսզի Մուրարաքը մերժեր իրեն հասցեազրված՝ Երուսաղեմ այցելության Բեզինի հրավերը¹³²: Երկրի նախագահը կարողացավ նաև բազմաբնույթ դարձնել Եգիպտոսի օգնության աղբյուրները:

Մուրարաքի կողմից երկրի արտաքին քաղաքական հայեցակարգն իսկույն դրական արձագանք գտավ արաբական աշխարհում: 1981 թ. հոկտեմբերի 14-ին Սաուդյան Արաբիայի ներքին գործերի նախարար արքայազն Նահֆը հայտարարեց, որ

¹²⁸ Гучетль Г., Звягельская И., Поиски путей консолидации, Азия и Африка сегодня, № 4, М., 1988, с. 12.

¹²⁹ 06.05.1982 الاهرام، القاهرة.

¹³⁰ Звягельская И., Ближневосточные альтернативы, Азия и Африка сегодня, N 2, М., 1992 էջ 11; Покормяк Н.В., Израиль: курсом милитаризма и агрессии, М., 1982, с. 51.

¹³¹ Звягельская И., Ближневосточные альтернативы, էջ 12:

¹³² Международный ежегодник: политика и экономика, М., 1982, էջ 235:

իր երկիրը լիահույս է, որ բոլոր այն պատճառները, որոնք հանգեցրել էին Եգիպտոսի մեկուսացմանը, շուտով կվերանան:

Որոշ հետազոտողներ գտնում են, որ Սուլարարի իշխանության իրական ժամանակաշրջանը սկսեց ոչ թե 1981 թ., այլ 1984 թ., եթե առաջին անգամ անցկացվեցին խորհրդարանական ընտրություններ, և Սուլարարը կարողացավ ամրապնդել իր իշխանությունը¹³³: «Վաշինգթոն փոստը» գրում էր, որ արդեն 1980 թ. վերջին Եգիպտոսի և Սաուդյան Արաբիայի միջև հարաբերությունների բարելավման միտում էր նկատվել: Նախ, Էռ-Ռիյադը խզեց իր դիվանագիտական հարաբերությունները Լիբիայի հետ, որը հակառակապտական դիրքորոշում ուներ, իսկ Կահիրեն պատրաստվում էր ուզմական փորձագետներ ուղարկել Սաուդյան Արաբիա: Էռ-Ռիյադն առաջարկել էր բավարարել դեռ Սահարի Ծոցի արաբական երկրներից ուզմական օգնություն ստանալու վերաբերյալ խնդրանքը¹³⁴: Վերջին հանգամանքը բացատրվում էր իրաքա-իրանյան պատերազմի իրողություններով: Իրաքի հարեւան արաբական միապետությունները մտահոգ էին, որ Բաղրամի պարտության դեպքում իրենք անմիջականորեն կարող էին կանգնել իրանական զորքերի ներխուժման վտանգի առջև¹³⁵: Մուլքարարը փաստեց, որ թեպետև դիվանագիտական հարաբերությունները բացակայում էին արաբական աշխարհի երկրների մեծամասնության հետ, այնուամենայնիվ Եգիպտոսը գրեթե բոլորի հետ շփումներ էր պահպանում: Բացառություն էր միայն Սիրիան¹³⁶:

1982 թ. մայիսի 25-ին Եգիպտոսի և Եվրոպայի տնտեսական համագործակցության խորհրդի (ԵՏՀ) միջև ստորագրվել էր մի համաձայնագիր, որի համաձայն՝ Եգիպտոսը տարեկան պետք

¹³³ Tripp Charles, Owen Rojer, Egypt under Mubarak, Routledge, London, and N.Y., 1989, p. 13.

¹³⁴ Washington Post, 04.11.1980; TACC Ատլաս, № 50, Մ., 12.12.1980, с. 31.

¹³⁵ Christians Science Monitor, 19.12.1980; TACC Ատլաս, № 52, Մ., 26.12.1980, с. 28.

¹³⁶ TACC Ատլաս, № 49, Մ., 03.12.1982, с. 24.

ստանար 150 մլն դոլար օգնություն, որից 76 մլն-ը՝ անվերադարձ¹³⁷: Եզիպտոսի նախագահն աշխատում էր համաձայնության եզրագծեր գտնել նաև ԱՄՆ-ի և ԵՏՀ-ի առաջ քաշած մերձավորարեւելյան կարգավորման նախաձեռնությունների միջև: Եզիպտոս-ԵՏՀ հարաբերությունների համատեքստում կարևոր տեղ էին գրադադարում Եզիպտա-ֆրանսիական հարաբերությունները: Եզիպտոսի նախագահը բարձր էր գնահատում Եզիպտա-ֆրանսիական համագործակցությունը, քանի որ արևմտաեվրոպական երկրների շարքում Ֆրանսիան առաջին տեղն էր գրադադարում Եզիպտոսի հետ բազմակողմանի հարաբերությունների առկայության տեսանկյունից¹³⁸: 1982 թ. Ֆրանսիայի հետ ստորագրվեց Եզիպտոսին 1 մլրդ դոլարի արժողությամբ «Միաժ-2000» տիպի 20 ռեակտիվ ինքնաթիռներ տրամադրելու վերաբերյալ համաձայնագիրը¹³⁹:

Նպատակ ունենալով վերականգնել իր դիրքերը Չմիացած երկրների շարժման կազմակերպությունում՝ 1982 թ. Սեպտեմբերին Սուրարարը մեկնեց Հարավսլավիա, իսկ նոյեմբերին կատարել ամիսներին պաշտոնական այցելությամբ այցելեց Հնդկաստան¹⁴⁰: Արդեն 1983 թ. մարտին Սուրարարը մասնակցեց Չմիացած երկրների շարժման կազմակերպության անդամ-պետությունների և կառավարության դեկանարների յոթերորդ գագաթնաժողովին: Այս նույն ժամանակահատվածում գիտամշակութային համագործակցության վերաբերյալ մի շարք համաձայնագրեր ստորագրվեցին ԽՍՀՄ-ի հետ, ինչն արդեն իսկ նշանակում էր, որ կողմերն ունեին ընդհանուր հետաքրքրություններ¹⁴¹: Որոշում էր կայացվել, որ խորհրդային մասնագետները պետք է վերանորոգման աշխատանքներ իրականացնեին

¹³⁷ Egypt and the European communities, Ministry of Foreign Affairs, Cairo, 1985, p. 42.

¹³⁸ السياسة، الكويت، 22.11.1982

¹³⁹ الأهرام الاقتصادي، 20.05.1983

¹⁴⁰ Ежегодник, М., 1983, с. 252.

¹⁴¹ Ежегодник, М., 1983, с. 251.

Ասուանի ջրամբարտակի վրա¹⁴²: ԽՍՀՄ-ի հետ հարաբերությունների վերականգնումը, սակայն, չէր նշանակում, որ ԱՄՆ-ի հետ ունեցած առանձնահատուկ համագործակցությունը Կահիրեն պետք է դադարեցներ: Ընդհակառակը Մուբարաքը հայտարեց, որ պահպանելու է ԱՄՆ-ի հետ գոյություն ունեցող հատուկ հարաբերությունները¹⁴³:

Սոազին արաբական պետությունը, որի հետ Եգիպտոսը վերականգնեց դիվանագիտական հարաբերությունները, Հորդանանն էր¹⁴⁴: 1984 թ. սեպտեմբերին երկու երկրների միջև դիվանագիտական ներկայացուցիչների փոխանակում տեղի ունեցավ¹⁴⁵: Նոյն թվականին Մուբարաքը վերականգնեց դեռ Սահաթի օրոր՝ 1978 թ., խօված դիվանագիտական հարաբերությունները Կիպրոսի հետ: 1984 թ. Մուբարաքը միակողմանիորեն դադարեցրեց դիվանագիտական հարաբերությունները Սալվադորի և Կոստա Ռիկայի հետ, քանի որ վերջիններս Խարայելում իրենց դեսպանատները Երուսաղեմ տեղափոխելու մասին որոշում էին ընդունել¹⁴⁶:

1984 թ. վերջին Նյու Յորքում հանդիպելով ԽՍՀՄ-ի արտաքին գործերի նախարար Ա. Գրոմիկոյի հետ Եգիպտոսի արտաքին գործերի նախարար Աբդել Մագիդը հայտնեց, որ իր երկիրը պատրաստ է վերականգնելու դիվանագիտական հարաբերությունները Մուկայի հետ¹⁴⁷: Զգտելով ցույց տալ արաբներին, որ իր քաղաքականությունը զգալիորեն տարբերվում է Սահաթի քաղաքականությունից, Մուբարաքը, ինչպես արդեն նշել ենք, հրաժարվում էր այցելել Խարայել, նաև այն դեպքում, եթե վարչա-

¹⁴² 16.03.1984 السیاست، الكويت

¹⁴³ Spiegel, № 4, 25.01.1982.

¹⁴⁴ Zu Hasans Besuch president Mubarak, zur Aufnahme diplomatischer Beziehungen, Bonn, 27.12.1984, S. 41.

¹⁴⁵ Նոյն տեղում:

¹⁴⁶ Ежегодник, М., 1985, с. 243.

¹⁴⁷ Նոյն տեղում:

պետ Մ. Բեգինն առաջարկում էր պահեստինյան ինքնավարության մասին բանակցությունները շարունակել Երուսաղեմում¹⁴⁸:

Եզիատոսի նախագահը պահեստինյան հարցի հետ կապված նշում էր, որ իր երկիրը միակն է, որն իրական քայլեր է ձեռնարկում՝ պահեստինցիների համար ինքնավարություն ապահովելու համար, որի նպատակը պահեստինյան անկախ պետության հոչակումն է¹⁴⁹: Սուրարարն ընդգծում էր, որ Եզիատոսի դրները բաց են ցանկացած արաբական երկրի համար, և որ Կահիրեն պատրաստ է քննարկումներ անցկացնելու պահեստինյան հարցի կարգավորման վերաբերյալ: Նախագահը շեշտում էր չպետք է մոռանալ, որ Եզիատոսի շնորհիվ է պահեստինցի փախստականների խնդիրը դարձել ժողովրդի և պետության խնդիրը¹⁵⁰:

1982 թ. սեպտեմբերին Սուրարարը մեկնեց Ռումինիա և Հարավալիա՝ նպատակ ունենալով ակտիվացնել նաև Չմիացած երկրների շարժման մասնակից երկրների կողմից գործադրվող շանքերը պահեստինյան հարցի լրացման գործում¹⁵¹: 1982 թ. փետրվարին Սուրարարն այցելեց ԱՄՆ, Անգլիա, Վասիկան և Ֆրանսիա: Հոռոմում Սուրարարը հանդիպեց Լիբանանի նախագահ Ամին Ժմայելին, որի հետ քննարկեցին համարական ընդհանուր հարցեր:

1983 թ. մարտին Կահիրեում Սուրարարը հանդիպեց Զինաստանի վարչապետ Զժան Ցզիյանի հետ: Հանդիպման ընթացքում քննարկվեցին մերձավորարելյան կարգավորման խնդիրը և Եզիատոսին Զինաստանի կողմից Ֆ-7 տիպի ինքնաթիռներ տրամադրելու, ինչպես նաև մի շարք այլ հարցեր: Հանդիպման

¹⁴⁸ Mayu, Cairo, 01.02.1982.

¹⁴⁹ TACC Атлас, № 16, М., 16.04.1982, с. 29.

¹⁵⁰ 21.05.1982 - الشهاب، عمان، Մարտին նկատի ուներ, որ Կահիրեի շնորհիվ հաջողվել էր միջազգային տարբեր ասյաններում պահեստինյան հարցը ներկայացնել որպես ժողովրդի ինքնորոշման հարց, այլ ոչ թե փախստականների, ինչին ձգուում էր Իսրայելը:

¹⁵¹ TACC Атлас, № 37, М., 10.09.1982, с. 31.

մասնակիցները հայտարարեցին, որ վերոնշյալ հանդիպումը նոր էջ էր Եգիպտա-չինական համագործակցության պատմության մեջ¹⁵²:

Եգիպտոսի քաղաքականությունը վերադարձել էր իր ավանդական երեք ուղղություններին՝ արաբական, աֆրիկյան և խլամական:

1982 թ., երբ Եգիպտոսին հաջողվեց վերադարձնել Սինայ թերակղզին, Սուրարաքին շնորհավորագրեր հղեցին Հորդանանի և Սարոկկոյի թագավորները¹⁵³: Հարկ է նշել, որ վերադարձնելով Սինայը Իսրայելը հրաժարվեց Եգիպտոսին վերադարձնել Սինայ թերակղզու մեկ այլ մասը՝ Թարայի անկլավը (1 կմ²), որի հետ կապված պատճառաբանում էր, թե Թարայի հատվածում Թել Ավիվը մի քանի միլիարդի հասնող ներդրում է արել՝ վերածելով այն հանգստյան գոտու¹⁵⁴:

1.3. ԵԳԻՊՏՈՍԻ ԴԻՐՔՈՐՈՇՈՒՄԸ ԻՐԱՔ-ԻՐԱՆՅԱՆ ՊԱՏԵՐԱԶՄԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԵՎ «ԱՐԱԲԱԿԱՆ ԸՆՏԱՆԻՔ» ԵԳԻՊՏՈՍԻ ՎԵՐԱԴԱՐՁԻ ԱՌԱՋԻՆ ՓՈՒԼԸ (1980-1984 թթ.)

1980 թ. սեպտեմբերին սկսվեց իրաքա-իրանյան պատերազմը: Իրաքի ղեկավարությունը հայտարարել էր, որ Իրանի դեմ պատերազմելով պաշտպանում է արաբական ազգի շահերը և խոշընդոտում է շիայական հեղափոխության՝ արաբական աշխարհ արտահանելու Թեհրանի փորձերը¹⁵⁵: Դեռևս 1979 թ. Իրանի իսլամական հեղափոխությունից հետո Թեհրանն առաջ բաշեց «Իսլամը սահմաններ չունի» կարգախոսը, որի հիմքում

¹⁵² TACC Атлас, № 1, М., 01.01.1984, с. 19.

¹⁵³ ТАСС БПИ, № 100, М., 24.05.1982, с. 41.

¹⁵⁴ ТАСС БПИ, № 15, М., 21.01.1983, с. 28.

¹⁵⁵ Tareg I., Iraq and Iran: Roots of Conflict, Syracuse, Univ.Press, 1982, p. 210.

ընկած էր իրանական հեղափոխական փորձի արտահանումը¹⁵⁶: Իրանի իսլամական դեկավարությունը փորձում էր ընդլայնել իր ազդեցությունը Մերձավոր Արևելքում, բայց նախևառաջ այն երկրներում, որոնք ունեին շիայական համայնքներ¹⁵⁷:

Պատերազմից առաջ Իրաքը չէր թաքցնում Իրանին ջախ- ջախելու իր վճռական մտադրությունը: Իրաքի նախագահ Սահ- դամ Հուսեյնը հայտարարել էր, որ Իրանի դեմ ակնկալվող պա- տերազմում Իրաքի ժողովուրդն իր վրա պատմական մեծ առա- քելություն է վերցնում և իրականացնում արաբական ազգի առջև ծառացած կարևորագույն խնդիրներից մեկը¹⁵⁸:

Պատերազմը երկու երկրների միջև ընթացավ մի քանի փուլով: Առաջին փուլը՝ 1980 թ. սեպտեմբեր-1982 թ. մայիս, բնո- րոշվեց իրաքյան գորքերի որոշակի հաջողությամբ. Նրանք կա- րողացան գրավել Իրաքին սահմանակից իրանական Քարե- Շիրին, Մեհրան, Խորեմշեհր քաղաքները՝ դրւու զալով Արադան նավթահանքի մոտ¹⁵⁹: Իրաքի կողմից գրավված իրանյան տա- րածքը կազմում էր 20 հազար քառ. կմ¹⁶⁰:

Պատերազմի առաջին փուլում ձախողվեց իրաքյան կառա- վարության՝ պատերազմում կայծակնային հաղթանակ տանելու ծրագիրը, որին ապավինում էր Սադամը՝ հաշվի առնելով Իրանի ներսում գոյություն ունեցող տնտեսական և քաղաքական քառային վիճակը: Զիրականացան նաև Բաղդադի հովսերը հա- մարաբական օգնություն ստանալու հարցում: Ինչ վերաբերում

¹⁵⁶ المنهج التقاني للترجيمه السياسي، بغداد، 1979.

¹⁵⁷ Mohadessin M., Islamic Fundamentalism and New Global Threat, Wash., D.C., 1993, p. 112.

¹⁵⁸ Жданов Н.В., Игнатенко А.А., նշվ. աշխ., էջ 278: Гарібян Ю.С., Кризис в Персидском заливе и страны Магриба, Последствия войны в Персидском заливе и ситуация в регионе, М., 1982, с. 21.

¹⁵⁹ История международных отношений и внешней политики СССР, т. 3, М., 1987, с. 347.

¹⁶⁰ The Middle East, L., May, 1988, p. 16; Машин В.В., Яковлев А.И., Пер- сидский Залив в планах и политике Запада, М., 1985, с. 97.

Եր Իրանին, ապա վերջինս մտահոգված էր, թէ ինչու Իրաքում շապստամբեցին քրդերը և շիաները¹⁶¹:

1980 թ. սեպտեմբերի 28-ին ՍԱԿ-ի ԱԽ-ն ընդունեց 479-րդ բանաձևը՝ պահանջելով կողմերից անհապաղ դադարեցնել կրակը և բանակցություններ սկսել: Իրաքը միակողմանիորեն դադարեցրեց կրակը հոկտեմբերի 5-8-ը, սակայն պատերազմը դարձյալ վերսկսվեց, քանի որ Իրանը շարունակում էր կովել¹⁶²: Պատերազմի ողջ ընթացքում Իրաքը մի քանի անգամ պատրաստակամություն հայտնեց դադարեցնել կրակը և Իրանի հետ բանակցություններ սկսել: Սակայն Իրանը ոչ մի քայլ չէր զիջում: Երկու երկրների դեկավարների միջև թշնամանքն այնքան մեծ էր, որ երբ 1982 թ. ամռանը Ծոցի Արաբական Երկրների Համագործակցության Խորհրդի (ԾԱԵՀՆ) անդամ-երկրներն Իրանին 25 մլրդ դոլար առաջարկեցին, եթե վերջինս դադարեցներ պատերազմը, Իրանի առաջնորդ այաթոլլահ Խոմեյինին պահանջեց նախդատի տալ Սահդամին, այնուհետև, որպես ուազմական փոխհատուցում, ստիպել նրան վճարել 150-160 մլրդ դոլար¹⁶³:

Պատերազմի երկրորդ և երրորդ փուլերը՝ 1982 թ. գարուն – 1984 թ. գարուն և 1984 թ. գարուն- 1987 թ. գարուն, նշանավորվեցին իրանական զորքերի հակահարձակումներով, որի արդյունքում պատերազմական գործողությունները տեղափոխվեցին Իրաքի տարածք¹⁶⁴: Պատերազմի երկրորդ փուլում սկսվեց այսպես կոչված հեղուկանավերի պատերազմը, որի ընթացքում տարբեր պետությունների պատկանելության ավելի քան 450 նավ

¹⁶¹ The World Today, L., Julay, 1984, N 7, p. 269.

¹⁶² Գևորգյան Գ., Եզիջտոսը և իրաքա-իրանյան պատերազմը (1980-1988 թթ.), Մերձավոր և Միջին Արևելքի երկրներ և ժողովուրդներ, հ. 22, Եր., 2003, էջ 57:

¹⁶³ Middle East International, L., 04.06.1982; Մարկարյան Բ.Վ., Զона Персидского Залива, М., 1984, с. 70.

¹⁶⁴ Подколзин Н., Посреднические усилия организации Исламская Конференция по прекращению ирано-иракской войны, Специальный бюллетень, № 4, М., 1989, с. 218.

ջրասույզ արվեց¹⁶⁵: Պատերազմի երրորդ փուլում իրանական գորքերին հաջողվեց գրավել Ֆառ կղզին և մոտենալ Բասրա քաղաքին: Այնուհետև 1987 թ. մարտին իրանական հրամանաւարությունը ձեռնարկեց միմյանց հաջորդող «Քերբելա» - 5, 6, 7» ռազմական գործողությունները, որոնք ձախողվեցին¹⁶⁷:

Չնայած Թէհրանի նախաձեռնած այդ լայնածավալ և միմյանց հաջորդող հարձակումներին՝ իրանական գորքին հաջողվեց գրավել միայն Իրաքի հարավում մոտ 150 կմ² և հյուսիս-արևմուտքում 50 կմ² իրաքյան տարածքը¹⁶⁸: Բաղդադը պատերազմի երկրորդ փուլի ընթացքում առաջին անգամ օգտագործեց զանգվածային ռչչացման քիմիական գենքը¹⁶⁹:

Իրաք-իրանյան պատերազմը ոչ միայն ծանր անդրադարձ ունեցավ պատերազմող երկրների վրա, այլ նաև պառակտեց արաբական աշխարհը: 1980 թվականի նոյեմբերին Ամմանում տեղի ունեցած արաբական երկրների ղեկավարների հանդիպմանը շհաջողվեց ընդհանուր հայտարարի գալ Իրաքին համարաբական աջակցություն ցույց տալու հարցում¹⁷⁰:

Արդյունքում արաբական աշխարհը պառակտվեց մի քանի քետով:

- Հորդանանը, Սաուդյան Արաբիան, Մարոկկոն, Քուվեյթը¹⁷¹, Կատարը, Բահրեյնը սատարեցին Իրաքին:

¹⁶⁵ Պրածա, Մ., 07.01.1988.

¹⁶⁶ Քերբելան շիա մուսուլմանների սրբաւեղի է, որտեղ գրիվել էր իմամ Շուսեյնը: Ռազմական գործողությունների այդ կարգի անվանումները ևս մեկ անգամ վկայում էին, որ Իրանը պատերազմին իսլամական բնույթ էր տվել:

¹⁶⁷ Ժданов Հ.Վ., Իգնատենկո Ա.Ա., Աշվ. աշխ., էջ 287:

¹⁶⁸ Ближний Восток и Международное право, М., 1992, с. 99-100.

¹⁶⁹ Данилов Л., Армия, власть и общество в современном Ираке, Армия и власть на Ближнем Востоке, М., 2002, с. 56.

¹⁷⁰ Арабский мир, Աշվ. աշխ., էջ 314:

¹⁷¹ Չնայած այն հանգամանքին, որ Քուվեյթը պաշտպանում էր Իրաքին, այդուամենայնիվ իր երկրում շարունակում էր գործել իրանական դեսպանատունը:

- Ալժիրը, Թունիսը և ՊԱԿ-ը չեզոք դիրքորոշում դրսութեցին:
- Սիրիան, Լիբիան, ԱՍԷ-ն, Օմանը և ԵԺԴ-ն¹⁷² պաշտպանեցին Իրանին¹⁷³:

Գազարնաժողովից անմիջապես հետո Սիրիան, Լիբիան և ԵԺԴ-ն խօսեցին դիվանագիտական հարաբերություններն Իրաքի հետ¹⁷⁴: Խոկ 1982 թ. գարնանից սկսած՝ Սիրիան փակեց իր տարածքով անցնող իրաքյան նավթամուղերը¹⁷⁵: Հետաքրքիրն այն էր, որ Սաուդյան Արաբիան, որը պատերազմում պաշտպանում էր Իրաքին, Իրանի հետ դիվանագիտական հարաբերությունները խօսեց միայն 1988 թ.¹⁷⁶:

Պատերազմը դատապարտեց նաև Թուրքիան՝ կոչ անելով վերջ դնել եղբայրասպանությանը և գրավեց չեզոք դիրք¹⁷⁷: Իր չեզորության մասին հայտնեց նաև Պակիստանը, որը, սակայն, շարունակում էր Սաուդյան Արաբիայում 20-հազարանոց զորք պահել՝ սաուդական իշխանություններին հարկ եղած դեպքում օգնություն ցույց տալու նպատակով¹⁷⁸:

Պատերազմը պաշտոնապես դատապարտեց նաև Եգիպ-

¹⁷² Իրանի ռեկավարության հետ առաջացած տարածայնությունների հետևանքով 1982 թվականից սկսած՝ ԵԺԴ-ն պատերազմում կանգնեց Իրաքի կողքին և վերջինիս հետ վերականգնեց դիվանագիտական հարաբերությունները:

¹⁷³ Ближний Восток и Международное право, № 102, Foreign Affairs, L., Winter, 1980-1981, p. 283.

¹⁷⁴ Арабский мир, №24, аշխ., № 314:

¹⁷⁵ Жданов Н.В., Игнатенко А.А., №24, аշխ., № 291:

¹⁷⁶ Сенченко И.П., Персидский Залив: взгляд сквозь столетия, М., 1991, с. 157.

¹⁷⁷ Aktualite, Istanbul, 1980, September, p.6, Блык Иванова И.И., Турецко-арabские отношения и их место в системе международных связей на Ближнем Востоке (1945-1983гг.), М., 1985, с. 120.

¹⁷⁸ Rubinshtein A.Z., Perspektives on The Iraq-Iran War, ORBIS, 1986, vol. 29, № 3, p. 605.

տուսի նախազահ Սադաթը¹⁷⁹: Եթե 1978-1979 թթ. Բաղդադում կայացած հանդիպումները նախաձեռնվել էին անմիջականորեն Իրաքի կողմից, ապա պատերազմից 10 օր անց, երբ պարզ դարձավ, որ իրաքյան զորքերն անկարող են արագ պարտության մատնել Իրանին, Սադաթը զենք տրամադրելու խնդրանքով դիմեց Սադաթին¹⁸⁰: Սադաթը համաձայնեց Իրաքին սպառագինություն տրամադրել և նշեց, որ երբ 1974 թ. Եգիպտոսի հանդեպ խորհրդային զենքի էմբարգո էր հայտարարվել, Իրաքը սպառագինություն էր արտահանում Եգիպտոս¹⁸¹: Եգիպտոսի իրաք-իրանյան պատերազմի հանդեպ դիրքորոշման արդյունքում ի հայտ եկան Եգիպտա-արաբական մերձեցման եզրագծեր: Եգիպտա-արաբական հարաբերությունների բնականոնացման նոր շրջան է սկսվում 1981 թ. հոկտեմբերից Եգիպտոսի նախազահի պաշտոնը ստանձնած Մուբարաքի իշխանության շրջանում:

Կահիրեի իրաքա-իրանյան պատերազմի նկատմամբ ընդունած քաղաքական կեցվածքի հարցում հարկավոր է հաշվի առնել նաև այն հանգամանքը, որ պատերազմը սկսվելուց մեկ ամիս անց Խոսրով Շահը կոչ է կատարում իր օրինապաշտ քաղաքացիներին՝ կոչ անելով պատամբել և տապալել անհավատների կառավարությունը, որոնց լին տակ էին գտնվում իրենք (Եգիպտացիներն ու իրաքցիները - Գ.Գ.)¹⁸²:

Իրաքա-իրանյան պատերազմն ամենից շատ մտահոգում էր Ծոցի արաբական պահպանողական վարչակարգերին: Արևելագետ Զ. Հովկենդը նշում էր, որ սաուդական վարչակարգը երկյուղում էր այն հանգամանքից, որ Իրաքի պարտության դեպքում անմիջական սպառնալիք կատեղծվեր իր գոյության համար¹⁸³:

¹⁷⁹ TACC Ատլաս, № 25, 18.06.1982, с. 23; The Financial Times, L., 03.10.1982.

¹⁸⁰ McDermott A., Egypt from Nasser to Mubarak: A flawed Revolution, N.Y., 1988, pp. 267-268.

¹⁸¹ Апдайк Р.Дж., Саддам Хусейн, Ростов-на-Дону, 1999, с. 293.

¹⁸² Аллах не любит Америку, М., 2003, с. 268.

¹⁸³ The New York Review of Books, N.Y., 01.04.1982, cap. XXIX, N 5, p. 26.

Եզիտոսը Ծոցի արաբական երկրների անվտանգության ավանդական երաշխավորներից էր¹⁸⁴, իսկ Իրաքի՝ ամբողջովին նրան փոխարինելու անհաջող փորձը ստիպում էր Էռ-Շիյադին վերականգնել իր երբեմնի հարաբերությունները Կահիրեի հետ։ Ծոցի միապետություններն անելանելի վիճակում կհայտնվեին նաև այն դեպքում, եթե պատերազմում հաղթանակ տաներ Իրաքը։ Դեռ իրաքա-իրանյան պատերազմի սկզբնական շրջանում Բաղդադը Ծոցի արաբական միապետություններին առաջարկել էր օգտվել նրանց նավահանգիստներից՝ այսուել մարտական նավեր գործութեալ նպատակով¹⁸⁵.

Արդեն 1982 թ. ամուսնը Եզիպտոսն Իրաքին 2,7 մլրդ դռ-լարի սպառազինություն, ինչպես նաև 60 օրաչու տրամադրեց¹⁸⁶: Օգտվելով արիթից՝ Եզիպտոսը ռազմական փորձագետներ ուղարկեց նաև Բահրեյն, որի հետ ի դեպ դեռ չէին վերականգնվել դիվանագիտական հարաբերությունները¹⁸⁷: Արաբական մի շարք երկրների զանգվածային լրատվամիջոցներում լրիս տեսած հոդվածներում կոչ էր արվում վերանայել հարաբերությունները Եզիպտոսի հետ և օգնել նրան միանալ արաբական ընտանիքին¹⁸⁸: Բեյրութում լրիս տեսնող «Ան-Նահար» թերթի հրապարակման համաձայն՝ Եզիպտոսն Իրաքին 1982 թ. ընթացքում

¹⁸⁵ Александров И.А., Монархии Персидского залива: этап модернизации, М., 2000, с. 276.

¹⁸⁶ News Week, N.Y., 26.07.1982.

¹⁸⁷ TACC Атлас, N. 25, M., 18.06.1982, c. 29; The Financial Times, 03.10.1982.

الرأي، عمان، 14.06.1982.¹⁸⁸

շուրջ 3,5 մլրդ դոլարի ռազմական տեխնիկայի պահեստամասեր էր տրամադրել¹⁸⁹:

Արդեն 1983 թ. աշնանն Իրաքի կողմում ռազմական գործողություններին մասնակցում էին 12 հազար Եգիպտացի զինվորներ և սպաներ ու ևս հազարավոր զինծառայողներ ծառայություն էին անցնում նաև իրաքյան ներքին գործերի նախարարություններում¹⁹⁰: Իրաքի վարչապետի տեղակալ Տարիկ Ազիզը հայտարարել էր, որ Իրաքի դեկավարությունը բարձր էր գնահատել Եգիպտոսի աջակցությունը Բաղդադին՝ ավելացնելով, որ յուրաքանչյուր հայրենասեր արար ցանկանում էր, որպեսզի Եգիպտոսը վերադառնա «արաքական ընտանիք»¹⁹¹: Իրաքը, անտեսելով դիվանագիտական հարաբերությունների բացակայությունը, հատուկ բանագնաց էր ուղարկել Կահիրե՝ նպատակ ունենալով հրավիրել Մութարաքին 1982 թ. օգոստոսին կայանալիք Զմիանալու շարժման կազմակերպության գագաթնաժողովին¹⁹²:

1983 թ. հունվարին Փարիզում 1977 թ. հետո առաջին անգամ տեղի ունեցավ Եգիպտոսի և Իրաքի բարձրաստիճան պաշտոնյաների հանդիպումը: Եգիպտոսի արտաքին գործերի պետնախարար Բ. Ղալին և Իրաքի արտգործնախարար Տարիկ Ազիզը հանդիպման ընթացքում քննարկեցին երկու երկրների համագործակցությանը վերաբերող մի շարք հարցեր¹⁹³:

1983 թ. վերջին Եգիպտոսից Իրաք ներմուծվող սպառազինությունների արժեքը հասավ 2,7 մլրդ դոլարի, իսկ Իրաքում կովող Եգիպտացի «կամավորների» թիվը հասավ 30 հազարի: Եթե 1977 թ. Իրաքում ներգրավված Եգիպտական աշխատումը չէր անցնում 10 հազարը, ապա 1982 թ. որոշ տեղեկությունների

¹⁸⁹ 12.04.1982، النهار، بيروت

¹⁹⁰ Le Nouvel Observateur, P., 25.09.1985, օգտագործված է լսու՝ Վալյկովա Լ.В., Саудовская Аравия: нефть, политика, ислам, էջ 215.

¹⁹¹ Woll-Street Journal, 23.04.1982.

¹⁹² ТАСС Атлас, № 33, 13.08.1982, с. 31.

¹⁹³ Араслы Ә.Г., նշվ. աշխ., էջ 178:

համաձայն՝ այն անցել էր 1 միլիոնը¹⁹⁴:

1984 թ. Մարտին Մուրարաքը հայտնեց Սաղդամին, որ ամեն բան կձեռնարկի՝ բավարարելու իրաքյան տեխնիկական պահանջները: 1985 թ., երբ Իրաքը ենթարկվեց Իրանի զորքերի կողմից ողջ պատերազմի ընթացքում ամենախոշոր հարձակմանը, Մուրարաքը Հորդանանի թագավոր Հուսեյնի հետ ժամանեց Բաղդադ՝ Սաղդամին իր համերաշխությունը հայտնելու նպատակով¹⁹⁵: 1984, այնուհետև 1985 թ. Սաղդամը կրկնեց, որ Եզիջտոսի անդամակցությունն ԱՊԼ-ում հարկավոր է վերականգնել այնուհետև ավելացրեց, որ արաբական համերաշխությունը չէր կարող լիարժեք լինել առանց Եզիջտոսի: «Եզիջտոսի դերը չափից ավելի կարևոր է մեզ համար, որպեսզի խոշնութենք Կահիրեի վերադարձը արաբական ճամբար: Բացի այդ, Մուրարաքը տարբերվում է Սադամից իր առաքինությամբ և համապարական գործի մեջ մեծ ներդրմամբ»¹⁹⁶:

Արաբական ընտանիքից Եզիջտոսի բացակայության հետևանքով խախտվել էր ուժերի հավասարակշուությունն արաբական աշխարհում, ինչը ստիպում էր արաբական բազմաթիվ երկրների վերականգնել Եզիջտոսի հետ դիվանագիտական հարաբերությունները՝ անտեսելով այն հանգամանքը, որ Կահիրեն շարունակում էր մնալ քեմիկիդյան համաձայնագրի շրջանակ-

¹⁹⁴ Washington Reports on Middle East Affairs, London, 1985, March, 5, p. 4.
Мухсин Хамил Ибрагим, Об опыте Ирака в приеме иностранной рабочей силы, М., 1983, с. 98.

¹⁹⁵ Республика Ирак в системе международных отношений (80-е годы XXв. – начало XXIв.), М., 2002, с. 166.

¹⁹⁶ Апдайк Р.Дж., նշվ. աշխ., էջ 294-295; Եզիջտոսը 1970-ականներին հաճախ սատարում էր Իրաքի ներքաղաքական նախաձեռնությունները, ինչը հավանաբար չէր մոռացել Սադամը: Սանրամասն տե՛ս Օганесян Հ., Национализация Ирак Петролиум Компани и поддержка Арабскими странами Ирака (1972-1973), Մերձավոր և Սիրիան Արևելքի երկրներ և ժողովրդներ, հ. 17, Եր., 1998, էջ 27; Օганесян Հ., Отношение Иракской республики со странами Арабского Востока, Ер., 1985, с. 49-50.

ներում¹⁹⁷: Փաստորեն Եգիպտոսը նախազահ Սուլթանարքի իշխանության առաջին շրջանում կարողացավ դե ֆակտո վերականգնել հարաբերությունները Ծոցի արարական երկրների հետ:

Իրաք-իրանյան պատերազմի հանդեպ Սուլթանարքի ցուցաբերած ակտիվության արդյունքում 1984 թ. հունվարին Կասարլանկայում (Մարոկկո) կայացած ԻԿԿ-ի 4-րդ գագաթնաժողովում Սաուդյան Արաբիայի և Իրաքի անմիջական միջնորդությամբ վերականգնվեց Եգիպտոսի անդամակցությունն աշխարհի այդ հեղինակավոր կազմակերպությունում¹⁹⁸: Արաբական թերակղզում հետզհետեւ ավելի էր արմատավորվում այն համոզմունքը, որ հարկավոր է արտաքին ռազմական երաշխիքներ ձեռք բերել, այսպես կոչված «արտաքին վահան» Իրանի դեմ, կապված իրաքա-իրանյան պատերազմի հետ: Այդպիսի «վահանը», ըստ այդմ, կարող էր լինել միայն Եգիպտոսը¹⁹⁹:

Գագաթնաժողովին լուրջ տարածայնություն առաջացավ Եգիպտոսի անդամակցության վերականգնման կողմնակիցների և դեմ քվեարկողների միջև: ԻԿԿ-ի հանդիպման մասնակիցներ Գվինեայի և Պակիստանի առաջարկությամբ որոշում ընդունվեց հաստատել Եգիպտոսի անդամակցության վերականգնումը ԻԿԿ-ում: Գվինեայի և Պակիստանի առաջարկությունը պաշտպանեց Յասեր Արաֆաթը, որը կոնֆերանսի փոխնախազահն էր²⁰⁰: Միևնույն ժամանակ սաուդական վերնախավում խոսվում

¹⁹⁷ Борисов А.Б., Роль ислама во внутренней и внешней политике Египта, М., 1991, с. 177.

¹⁹⁸ Сычев В., Проблемы политики и новые тенденции в деятельности Организации Исламская Конференция, Современный ислам: проблемы политики и идеологии, вып. 3, М., 1985, с. 133; Фаշայան Ա., Իսլам-макան կոնֆերանս կազմակերպությունը. Կառուցվածքը և իհմանական նպատակները, Մերձավոր և Միջին Արևելքի երկրներ և ժողովուրդներ, հ. 19, Եր., 2000, р. 118-120:

¹⁹⁹ Шарипов У.З., Политика и нефть в Персидском Заливе 70-80-ых годов, М., 1994, с. 128.

²⁰⁰ Նոյն տեղում:

Եր այն մասին, որ Էռ-Ռիյադի քաղաքական հզորությունը տարածաշրջանում նվազում էր, հետևաբար քարձրանում էր այսպես կոչված առաջադիմական վարչակարգերի ուժեղացման վտանգը, այդ իսկ պատճառով սառուղացիներին ևս նպատակահարմար էր Կահիրեի անդամակցության վերականգնումը ԻԿԿ-ում:

Եզիջտոսի՝ ԻԿԿ վերադարձի հարցում առավել ակտիվություն ցուցաբերեցին ՊԱԿ-ի նախագահ Արաֆարն ու Մարոկկոյի թագավոր Հասանը:

Արևելագետ Բորիսովը նշում էր. «Եզիջտական դեկավառության համար ԻԿԿ-ում անդամակցության վերականգնումն ուներ շափականց կարևոր նշանակություն: Այն ևս մեկ անգամ ցույց էր տալիս, որ երկրում գոյություն ունեցող վարչակարգը և արտարին քաղաքական ուղղություն ընդունվում էին մուսուլմանական հանրության կողմից, և հետևաբար դիտվում էր որպես իսլամի նորմերին համապատասխանող կարգավիճակ: Դրանով իսկ ամրապնդվում էին Եզիջտոսի դիրքերը տարածաշրջանում, և ճանապարհ էր հարթվում դեպի արաբական ընտանիք»²⁰¹: Եզիջտոսում 1982 թ. գրանցված օտարերկրյա արաբական ընդհանուր ներդրումների 16%-ը 1983 թ. աճել էր մինչև 23%: Առևտրական մի շարք համաձայնագրեր էին ստորագրվել Հորդանանի, Իրաքի և Ծոցի նավթարդյունաբերող մի քանի երկրի հետ²⁰²:

Իրաքա-իրանյան պատերազմը ծանր հետևանքներ ունեցավ ինչպես Իրաքի, այնպես էլ Իրանի համար: Պատերազմող երկու կողմերն էլ ունեցան հարյուր հազարավոր սպանվածներ և վիրավորներ²⁰³: Պատերազմը խորացրեց նաև արաբական աշխարհում առկա անկայուն վիճակը և նպաստեց Իրայելի՝

²⁰¹ Борисов А.Б., նշվ. աշխ., էջ 180:

²⁰² The New York Times, N.Y., 08.01.1984.

²⁰³ Սամվելյան Վ., Իրանա-իրաքյան պատերազմի հասարակական-քաղաքական արձագանքները, Մերձավոր և Միջին Արևելքի երկրներ և ժողովուրդներ, հ. 19, Երև., 1999, էջ 57:

1982 թ. ամռանը Լիբանան ներխուժմանը, նվազեցրեց պաղեստինյան խնդրի հետ կապված գործադրվող ջանքերը և արգելակեց մերձավորարևելյան համընդհանուր կարգավորման գործընթացը: Իրաքա-իրանյան պատերազմի հետևանքով Իրաքը շուրջ 8 տարի դուրս մղվեց Խորայելին դիմակայող արաբական երկրների շարքից²⁰⁴: Քաղաքական առումով պատերազմը մոտեցրեց Իրաքին արաբական այն ճամբարին, որի մեջ էին Եգիպտոսը, Հորդանանը և Սաուդյան Արաբիան²⁰⁵:

Օգտվելով Իրաքի՝ պատերազմի մեջ լինելու հանգամանքից՝ 1981 թ. հունիսի 7-ին Խորայելի ռազմաօդային ուժերը ռմբակոծեցին Բաղդադի մերձակայքում գտնվող իրաքյան միջուկային հետազոտությունների կենտրոնը²⁰⁶: Պատերազմը ծայրաստիճան սրեց նաև միջազգային դրությունը: 1988 թ. հունիսի սկզբին ԱՄՆ-ի, Ֆրանսիայի, Խուալիայի, Հուանդիայի, Բելգիայի ռազմական նավերի քանակը Ծոցում հասել էր 80-ի, որից 38-ը պատկանում էր Միացյալ Նահանգներին²⁰⁷:

ՄԱԿ-ի Անվտանգության խորհուրդը 1987 թ. հուլիսի 20-ին ընդունեց 598-րդ բանաձևը²⁰⁸, որը կրկին պահանջում էր կողմերին դադարեցնել կրակը և բանակցությունների միջոցով լուծել երկու երկրների միջև եղած հակասությունները:

1988 թ. հունվարի 7-9-ը Ալժիրում կայացած ԱՊԼ-ի արտահերթ զագաթնաժողովում առաջին անգամ արաբական բոլոր երկրները, ներառյալ Լիբիան և Սիրիան (որոնք պատերազմում պաշտպանում էին Իրանին), դատապարտեցին Իրանին՝ հաշտության բանակցություններից խոչս տալու համար: Եզրա-

²⁰⁴ Маркарян Р., Воздействие ирано-иракской войны на арабо-израильский конфликт, Специальный бюллетень, № 1, М., 1989, с. 63.

²⁰⁵ Jerusalem Post, 10.11.1987.

²⁰⁶ U.N. Press Release G.A./7272, 13.07.1986, p. 7.

²⁰⁷ War in the Persian Gulf: The US takes sides. A staff report to the Committee on foreign relations, US Senate, Washington: Goverment printing office, 1987, p. 49; The Christian Science Monitor, 07.10.1987.

²⁰⁸ U.N. Documents, S /RES/ 598.

փակիչ հոչակագրում հանդիպման մասնակիցները նշում էին. «...արաբական որևէ երկրի հանդեպ ազրեսիան կդիտվի որպես ազրեսիա ողջ արաբական ազգի հանդեպ»²⁰⁹:

1988 թ. զարնանն իրանյան գորքերի վերջին փորձը՝ պարտության մատնել իրաքյան բանակին, ձախողվեց: Իրանի անհաջողությունները մարտի դաշտում, երկրի տնտեսական քայլավածությունը, ինչպես նաև այաթուլահ Խոմեյնիի մահը (1989 թ. հունիսի 4-ին)²¹⁰, Սիրիայի և Լիբիայի՝ դաշնակիցների կորուստը ստիպեցին Թեհրանին դադարեցնել պատերազմը: 1988 թ. հուլիսի 18-ին Իրանի ղեկավարությունը հայտարարեց, որ ընդունում է ՄԱԿ-ի 598-րդ բանաձեռ և պահանջում է, որ պեսզի պատերազմի մեղավոր կողմը պատասխանատվության ենթարկվի²¹¹: Սակայն Իրաքի անհանդուրժողականության պատճառով պատերազմական գործողությունները շարունակվեցին, որի հետևանքով իրաքյան բանակի հսկողության տակ հայտնվեց 2.600 կմ² իրանական տարածքի մի հատված: Կողմերի միջև կրակը դադարեցվեց միայն օգոստոսի 20-ին²¹²:

1988 թ. օգոստոսի 26-ին սկսվեցին իրաքա-իրանյան հաշտության բանակցությունները: Տեղի ունեցան բանակցությունների 15 փուլ ժննում և Նյու Յորքում, սակայն կողմերը համաձայնության չեկան, և 1990 թ. օգոստոսին բանակցություններն ընդիատվեցին: Իրաքա-իրանյան հակամարտությունը սառեցվեց, իսկ ուազմական գործողություններն այլևս չվերսկսվեցին²¹³:

Իրաքա-իրանյան հակամարտության մեջ Եղիպտոսի գոր-

²⁰⁹ Жданов Н.В., Игнатенко А.А., նշվ. աշխ., էջ 291:

²¹⁰ Ансари Х., Имам Хомейни, М., 1999, с. 280, Բայրության Վ., Իրանն այսօր, Եր., 1999, էջ 155:

²¹¹ U.N. Documents, Security Council, The Declaration of the General Secretary of the United Nations, 1988, July, 16, p. 4.

²¹² Данилов Л., Армия, власть и общество в современном Ираке, նշվ. աշխ., էջ 56:

²¹³ Современные международные отношения, М., 2001, с. 398; Ближний Восток и Международное право, էջ 108.

ծուն դիրքորոշումը բացառիկ կարևոր նշանակություն ունեցավ Պարսից ծոցի նման բարդ տարածաշրջանում ուժերի հարաբերակցության պահպանման հարցում, որով շահագրգուված էին ինչպես Սաուդյան Արաբիան, այնպես էլ արաբական մյուս երկրները: Արևմտյան դիվանագետները նշում էին, որ Եգիպտաարաբական հարաբերությունների կարգավորումը հիմնականում կապված էր իրաքա-իրանյան պատերազմում Կահիրեի ունեցած դիրքորոշման հետ²¹⁴:

Փաստորեն նախագահ Մութարաքն իր իշխանության առաջին փուլում կարողացավ զգալիորեն վերականգնել Եգիպտոսի դիրքերն արաբական աշխարհում, համեմատած Սադաթի իշխանության տարիների հետ, թեպետև ԱՊԼ-ում և միջարաբական մի շարք կազմակերպություններում նրա անդամակցությունը մնում էր դեռևս սառեցված:

1.4. ԵԳԻՊՏՈՍԻ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԴԵՐԻ ՎԵՐԱՐԺԵՎՈՐՈՒՄ ԱՐԱԲԱԿԱՆ ԱՇԽԱՐՀՈՒՄ ԵՎ «ԱՐԱԲԱԿԱՆ ԸՆՏԱՆԻՔ» ՎԵՐԱԴԱՐՁԻ ԵՐԿՐՈՐԴ ՓՈՒԼԸ (1984-1989 ԹԹ.)

ԻԿԿ-ում Եգիպտոսի անդամակցությունը վերականգնելուց հետո իրական հնարավորություններ ստեղծվեցին Եգիպտոսի արաբական ընտանիք վերջնական վերադարձի համար:

1984 թ. սեպտեմբերի 20-ին հորդանանյան կառավարությունը հայտարարեց Կահիրեի հետ լիարժեք դիվանագիտական հարաբերությունների վերականգնման մասին²¹⁵: 80-ականների առաջին կեսին արաբական աշխարհում առկա բևեռացման հետևանքով Մութարաքին շխառղվեց վերականգնել երկրի անդամակցությունն ԱՊԼ-ում:

Արաբական բազմաթիվ երկրներ ավելի սերտ համագործակցություն էին սկսել Կահիրեի հետ՝ պաղեստինյան հարցին

²¹⁴ТАСС Атлас, № 7, М., 12.02.1988, с. 16.

²¹⁵ 28.12.1984

լուծում տալու նպատակով²¹⁶: Սուրարարը բազմից շեշտում էր, որ դիվանագիտական հարաբերությունների առկայությունն Իսրայելի հետ ամենափափաք չի նշանակում, որ Կահիրեն իր դոները փակել է արարական երկրների առջև²¹⁷: Եզիական գործուն մասնակցությունը մերձավորարենյան գործերին վերարժնորեց Կահիրեի դերը: Դրան մեծ մասամբ նպաստում էր նաև նախազահի անձը, որն իրեն դրսուրեց որպես վճռական և սկզբունքային քաղաքական գործիչ, որը պայքարում էր արարական աշխարհի անվտանգության և առաջադիմության համար:

1983 թ. դեկտեմբերին Սուրարարը 23 հոգուց բաղկացած պատվիրակություն ուղարկեց Ծոցի արարական երկրներ՝ Իրաք, Սաուդյան Արաբիա, ԱՄԷ, Քուվեյթ և Օման՝ նպատակ ունենալով առևտրական նոր համաձայնագրեր ստորագրել: 1985 թ. Օմանի սուլթան Քարուսի՝ երկրի կառավարման դեկին գտնվելու 15-րդ տարեդարձին նվիրված արարողության ժամանակ Սուրարարը հանդիպեց Սաուդյան Արաբիայի, ԱՄԷ-ի, Քուվեյթի, Քահրեյնի և Կատարի դեկավարների հետ²¹⁸: 1986 թ. Սուրարարը, այցելելով այդ երկրների դեկավարներին հայտարարեց, որ ցանկանում է վերականգնել նրանց հետ ֆինանսատնտեսական բնագավառներում առկա բոլոր հարաբերությունները: 1983 թ. փետրվարին Սուրարարը ցրեց դեռ Սադաթի կողմից հիմնադրված Արարական և մուսուլմանական ժողովուրդների լիգան, որը որպես ԱՊԼ-ին և ԻԿԿ-ին հակառակ ստեղծվել էր Սադաթի կողմից²¹⁹: 80-ականների առաջին կեսին բազմաթիվ հայտարարություններ էին արվել, որոնք կոչված էին ձևավորելու այն կարծիքը, որ Եզիական պաղեստինյան խնդրի կարգավորման առավել իրական ներկայացուցիչն էր²²⁰:

Օգտագործելով այն հանգամանքը, որ Լիբիան իրարա-

²¹⁶ The Egyptian Point of View on International Issues, նշվ. աշխ., էջ 19.

²¹⁷ الاهرام، القاهرة، 06.05.1982

²¹⁸ The Egyptian Point of View on International Issues, նշվ. աշխ., էջ 19.

²¹⁹ Титоренко В.Е., նշվ. աշխ., էջ 115:

²²⁰ Дмитриев Е., Палестинская трагедия, М., 1986, с. 88.

իրանյան պատերազմում սատարում էր Իրանին, Եգիպտոսը մեղադրեց Լիբիային և Իրանին Կարմիր ծովում ջրային ուղիներն ականապատելու մեջ: Ի պատասխան՝ 1985 թ. հուլիսին Կաղաքին որոշում ընդունեց արտաքսել Լիբիայից 100 հազարի հասնող Եգիպտական աշխատուժը²²¹: Բայց, այդուամենայնիվ, Եգիպտոսի և արաբական երկրների միջև հարաբերությունների կանոնավորումն ակնհայտ էր: ԵԱՀ-ի նախագահ Ալի Աբդալլա Սալեհն իր հարցազրույցներից մեկում հայտարարեց, որ Եգիպտոսի անդամակցության վերականգնումն ԱՊԼ-ում ինարավոր էր, քանի որ վերջինիս դեկավարությունը պատասխանատվություն չէր կրում քեմփելիոյան համաձայնագրերի համար²²²:

1985 թ. հունիսին առևտրական մի քանի համաձայնագրեր ստորագրվեցին նաև ԽՍՀՄ-ի և Եգիպտոսի միջև: Նշենք, որ դեռ 1982 թ. Մուրարաքը դիմել էր ԽՍՀՄ-ին՝ ինժեներ-փորձագետներին Եգիպտոս գործուղելու խնդրանքով²²³:

1986 թ. վերջին վերականգնվեցին շփումները Եգիպտոսի և ԾԱԵՀԴ-ի միջև ռազմական արդյունաբերության բնագավառում: Հարկ է նշել, որ չնայած Եգիպտոսի պաշտոնական մեկուսացվածությանը՝ միայն Ծոցի երկրների ներդրումները 1987 թ. Կազմեցին ավելի քան 1,2 մլրդ դոլար²²⁴: Մեկուսացման մեջ եղած ժամանակ Եգիպտոսը 1981թ. ստացավ 948 մլն դոլար ներդրում, իսկ 1988 թ.՝ 1,190 մլն դոլար, 1989 թ.՝ 1,250 մլն դոլար²²⁵: Փորձագետների կարծիքով Եգիպտոսը XXI դարում պետք է լիներ ամենադինամիկ զարգացող արաբական երկրներից մեկը: 1985-1992 թթ. Մուրարաքի օգնական Մուստաֆա ալ-Ֆերիի խոսքերով զոյլություն ունեին երեք սյուներ, որոնց վրա հենվում էր նախագահի արտաքին քաղաքականությունը.

²²¹ Middle East and North Africa, London, 2001, p. 413.

²²² أخبار الأسبوع، القاهرة، 20.12.1986

²²³ Князев А.Г., Египет 80-ых годов, М., 1986, с. 61.

²²⁴ الأهرام، القاهرة، 12.04.1987

²²⁵ Кастрорный М.Е., Инвестиционный климат и частное инвестирование в Египте, Ближний Восток и современность, вып. 13, М., 2001, с. 177.

1. Օտար երկրների հետ շփման ժամանակ Սուբարարը շեշտը դնում է անմիջական երկկողմ գործնական հարաբերությունների վրա:
2. Եզիստոսի նախագահը երբեք չի շտապում որոշում ընդունելիս:
3. Սուբարարը հետևում է միջազգային հարաբերություններում հավասարակշռվածության և իր ազգային շահերի պահպանմանը²²⁶:

Սինայի թերակղու վերադարձը հիմք հանդիսացավ արաբական որոշ երկրների համար՝ մտածելու, որ Եզիստոսի ընտրած Խրայելի հետ համաձայնության գալու քաղաքական ուղեղին ավելի արդյունավետ էր, քան պարզապես դիմակայությունը:

Կահիրեի՝ արաբական աշխարհում դիրքերի ամրապնդման մասին վկայում է այն փաստը, որ 1985 թ. նոյեմբերին Կահիրեում անցկացվեց Սուհամեդ Մարզարեի կյանքի և սուննայի հարցերով 4-րդ համաժողովը: Դրան հաջորդեց Սուբարարի պաշտոնական հրավերը՝ մասնակցելու մահմեդական երկրների՝ 1987 թ. հունվարին Քուվեյթում կայանալիք գազարնաժողովին: Այս հանգամանքը մեկ անգամ ևս վկայում էր, որ Սուբարարի դիրքերն ամուր էին նաև իսլամական աշխարհում:

1987 թ. նոյեմբերի 11-ին Ամմանում տեղի ունեցած համարաբական գազարնաժողովում որոշում ընդունվեց, որ Եզիստոսի հետ դիվանագիտական հարաբերությունների վերականգնման հարցը թողնվում է յուրաքանչյուր արաբական երկրի հայեցողությանը²²⁷: Հանդիպման մասնակից երկրներից Սիրիան, Լիբիան և Ալժիրը դեմ էին, որ Եզիստոսի հետ դիվանագիտական հարաբերությունների վերականգնման մասին հատուկ որոշում ընդունվեր: Գազարնաժողովից հետո Եզիստոսի հետ դիվանագիտական հարաբերությունները վերականգնեցին ԱՍԷ-ն,

²²⁶ Al-Ahram Weekly, Khalil N., Steering a Steady Course, Issue, N 55, October, 2001, p. 11-17.

²²⁷ Новейшая история арабских стран Африки, М., 1990, с. 87.

Քուվեյթը, Բահրեյնը, Կատարը, ԵԱՀ-ն, Սաուդիան Արաբիան, Մարոկկոն, Սալվիտանիան, Թունիսը²²⁸: 1989 թ. հունվարին այցելելով Ծոցի արարական մի շարք երկրներ՝ նախագահը բազմից շեշտեց, որ ցանկացած ազրեսիա Ծոցի երկրների դեմ կդիտվի որպես ազրեսիա Եգիպտոսի դեմ²²⁹: 1986 թ. Վերականգնվեցին դիվանագիտական հարաբերությունները Զիբութիի, իսկ 1988 թ.՝ ԵԺԴՀ-ի հետ:

1988 թ. դեկտեմբերին՝ տասնամյա հակաեզիպտական քառօլորյունից հետո, Սիրիայի նախագահ Հաֆեզ Ասադը հրապարակայնորեն հայտարարեց, որ ընդունում է Եգիպտոսի կարևորագույն դերն արարական հարթակում: Նա նշեց, որ սիրիական հակաեզիպտական համագործակցությունը մշտապես համապատասխանել է համարաբական ընդհանուր շահերին²³⁰: 1989 թ. Սայիսին Սիրիան այլևս չէր ընդդիմանում ԱՊԼ Եգիպտոսի վերադարձին²³¹, որի դիմաց Եգիպտոսը հրաժարվեց սատորել Իրաքի նախաձեռնությանը՝ դատապարտել Սիրիայի ներկայությունը Լիբանանում, ինչն ամրագրվեց 1989 թ. Տափի համաձայնագրի ստորագրմամբ²³²:

1989 թ. մայիսի 23-26-ը Կասարլանկայում տեղի ունեցած ԱՊԼ գագաթնաժողովին Ռիյադի անմիջական ջանքերով Եգիպտոսը վերականգնեց իր անդամակցությունը միջարաբական այդ կազմակերպությունում²³³: Ի պատճախան Սաուդիան Արաբիայի միջնորդության՝ Կահիրեն պարտավորվեց նպաստել Սերձավոր Արևելում արարական երկրների կողմից Աֆղանստանում մո-

²²⁸ ТАСС БПИ, N 206, М., 22.10.1990, с. 41.

²²⁹ Новейшая история стран Азии и Африки, նշվ. աշխ., էջ 87:

²³⁰ Կարապետյան Ռ., Սիրիա-ամերիկյան հարաբերությունները և խաղաղության գործընթացը Արարական Արևելում, Ե., 1999, էջ 10:

²³¹ Նույն տեղում:

²³² Խасан Ջկ., Возвращение Ливана, Азия и Африка сегодня, N 6, М., 1996, с. 11.

²³³ Буровцев М., Внешняя политика Египта на рубеже 90-ых годов, Специальный бюллетень, № 2, М., 1991, с. 98.

շահեղների կառավարության ճանաչմանը, թեպետև Եգիպտոսը նրանց չէր ընդունում²³⁴: ԱՊԼ-ում իր անդամակցության վերականգնման օրը Եգիպտոսը ներկայացրեց նաև արաբական համերաշխության ամրապնդման եգիպտական ծրագիրը.

- արաբական համերաշխությունը պետք է հիմնվի բոլոր շահագրգիռ կողմերի համար ընդունելի բանաձևի վրա, որն էլ արաբական ազգի նպատակն է:
- Մերձավորարևելյան հակամարտության կարգավորման միջոցով արաբական ազգը կկարողանա իր ծանրակշիռ լուսան ներդնել միջազգային ապալարվածության համընդիանուր գործընթացում:
- Արաբների համատեղ պաշտպանության սկզբունքը պետք է լինի իրական, այսինքն՝ առանց հաշվի առնելու, թե ինչ հարաբերություններ են ընթանում տվյալ պահին արաբական աշխարհի ներսում:
- Պետք է պահպանվի միմյանց գործերին շմիջամտելու սկզբունքը:
- Որպես նորմալ երևոյթ պետք է ընդունել մի հարցի շուրջ գոյություն ունեցող տարրեր կարծիքները:
- Տնտեսական զարգացման բնագավառում առաջնահերթությունը պետք է տրվի պրազմատիզմին և ռեալիզմին՝ նպատակ ունենալով ձևավորել արաբական ընդիանուր շուկան:
- Կարճ ժամանակում պետք է ապահովվի արդյունաբերության ժամանակակից ճյուղերի կարգավորումը նորագույն տեխնոլոգիաների հիման վրա:
- Կայուն հավասարակշուղած հարաբերությունների ապահովումն արաբական ընտանիքի և մնացած երկրների միջև²³⁵:

ԱՊԼ-ում Եգիպտոսի անդամակցության վերականգնումը պետք է բացատրել նաև այն հանգամանքով, որ 1989 թ.

²³⁴ TASS Ատլաս, N 31, M., 14.08.1989, c. 26.

²³⁵ Նույն տեղում:

փետրվարին Եգիպտոսն անդամակցեց Իրաքի կողմից ստեղծված Արաբական Համագործակցության Դաշինքին (ԱՀԴ), ինչը մեծապէս անհանգստացնում էր Միջադին, քանի որ Իրաքի շափից ավելի հզորացումը երկյուղ էր առաջացնում սաուդական իշխանությունների մոտ: Այդ պարագայում Իրաքին դիմակայող արաբական միակ երկիրը, ըստ սաուդացիների, կարող էր լինել Եգիպտոսը, իսկ վերջինիս կողմից անդամակցությունն ԱՀԴ-ին ստիպում էր Միջադին Եգիպտոսին վերադարձնել ԱՊԼ:

1989 թ. սեպտեմբերին Կադաֆին 16 տարիների ընթացքում առաջին անգամ այցելեց Եգիպտոս՝ բանակցելու Մութարաքի հետ, որից հետո երկու երկրների միջև դիվանագիտական հարաբերությունները վերականգնվեցին²³⁶:

1989 թ. դեկտեմբերի կեսերին վերականգնվեցին օդային թռիչքները Կահիրեի և Դամասկոսի միջև, իսկ երկու շաբաթ անց երկու երկրների միջև վերականգնվեցին նաև դիվանագիտական հարաբերությունները: 1990 թ. հուլիսին Սիրիայի նախագահ Ասադը 13 տարվա ընդմիջումից հետո առաջին պաշտոնական այցը կատարեց Եգիպտոս²³⁷:

Եգիպտոսի վերադարձն «արաբական ընտանիք» և նրա դիրքերի ամրապնդումը տարածաշրջանում նպաստեցին, որպեսզի 1989 թ. հուլիսին Եգիպտոսն ընտրվի Աֆրիկյան միանության կազմակերպության նախագահող երկիր²³⁸: Եգիպտոսում իշխող ազգային դեմոկրատական կուսակցության արտաքին հարցերով հանձնաժողովի նախագահ Մուհամեդ Արդ Ալլանը գրում էր, որ Եգիպտոսի կողմից նոր հիմքերի վրա դրված համագործակցությունը ԱՄՆ-ի, Արևմտյան Եվրոպայի պետությունների, Ճապոնիայի և Չինաստանի, ինչպես նաև հարաբերությունների վերականգնումը ԽՍՀՄ-ի հետ թույլ տվեցին Կահիրեին նորովի հանդես գալ միջազգային հարաբերություն-

²³⁶ Middle East International, London, 1990, N 380, July 20, p. 9.

²³⁷ 21.01.1989 شرين

²³⁸ Сейранян Б.Г., Три цвета времени, Азия и Африка сегодня, № 7, М., 1992, с. 8.

ներում: Եզիպտոսը միջնորդեց Սուլանում խաղաղ ճանապարհով քաղաքացիական պատերազմի ավարտին, Մավրիտանիայի և Սենեգալի միջև լարվածության նվազեցմանը, ակտիվ դերակատարություն ունեցավ Լիբիայի և Չադի հաշտության գործում, որի արդյունքում 1989 թ. հուլիսին Սուլարաքն ընտրվեց Աֆրիկյան միասնության կազմակերպության նախագահ²³⁹: Եզիպտոսը միջազգային տարբեր հանդիպումներում երևան հանեց Իսրայելի զավթողական քաղաքականությունը²⁴⁰:

Արտաքին քաղաքականության մեջ պահպանելով քեմփենիդյան համաձայնագրերի տառը և ոգին՝ Սուլարաքը կարողացավ նորովի ներկայացնել Եզիպտոսը: Սուլարաքի ձկուն արտաքին քաղաքականության արդյունքում 1988 թ. դեկտեմբերի 14-ին ԱՄՆ-ի նախագահ Ռոնալդ Ռեյգանի հրահանգով Եզիպտոսը երկխոսության մեջ մտավ ՊԱԿ-ի դեկավարության հետ:

Հոսնի Սուլարաքի վարչակազմը, կիրառելով նոր ձևավորված արտաքին քաղաքական հայեցակարգը, ճիշտ գործածելով քեմփենիդյան համաձայնագրերը, սերտ հարաբերություններ պահպանելով ԱՄՆ-ի հետ, ինչպես նաև օգտագործելով արաբիսրայելական հակամարտության կողմերի հետ հարաբերությունների առկայության հանգամանքը կարողացավ ԱՄՆ-ից ստանալ առավելագույնը թե՛ քաղաքական և թե՛ տնտեսական բնագավառներում, ինչպես նաև հիմնվելով իր դիվանագիտության կարևոր հատկանիշների վրա՝ զգուշություն, չափավորություն, պրազմատիզմ և հետևողականություն, կարողացավ վերականգնել Եզիպտոսի կարևոր դերն արաբական աշխարհում և նորովի ներկայացնել իր պետությունը միջազգային հարաբերություններում:

²³⁹ TACC Ատլաս, N 41, M., 22.01.1990, c. 41.

²⁴⁰ TACC ԲՊԻ, N 206, M., 12.16.1990, c. 33.

ԵԳԻՊՏՈՍԻ ԴԻՐՔՈՐՈՇՈՒՄԸ ՊԱՂԵՍԻՆՅԱՆ ՀԱՐՑԻ
ՆԿԱՏՄԱՍԲ (1981-1991 Թթ.)

2.1. ԵԳԻՊՏՈՍԸ, ՊԱՂԵՍԻՆՅԱՆ ՀԱՐՑԸ ԵՎ 1982 թ.
ԻՄԱՐԱՅԻ ԱԿԱՆ «ԽԱՂԱՋՈՒԹՅՈՒՆ ԳԱԼԻԼԵԱՅԻ»
ՌԱԶՄԱԿԱՆ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԼԻԲԱՆԱՆՈՒՄ

1970-80-ական թթ. Լիբանանն արարական այն երկրներից էր, որի տարածքից պաղեստինցիներն Խրայելի դեմ զինված պայքար մղելու հնարավորություն ունեին²⁴¹:

Որպես շարժադիր օգտագործելով 1982 թ. հունիսի 3-ին Լոնդոնում Խրայելի դեսպան Շլում Արգովի դեմ անհաջող մահափորձը²⁴², հունիսի 5-ին Թել Ավիվում որոշում ընդունեց ռազմական գործողություն իրականացնել՝ նպատակադրվելով ոչնչացնել կամ Խրայելի սահմաններից հնարավորինս հեռացնել Լիբանանում տեղակայված Պաղեստինի ազատազրության կազմակերպության (ՊԱԿ) ռազմաքաղաքական կառույցները²⁴³. Հունիսի 6-ին խրայելական 80-հազարանոց զրամիավորում-

²⁴¹ Լիբանանում պաղեստինյան ռազմաքաղաքական կառույցների տեղակայման համար իրավաբանական իմբը 1969 թ. նոյեմբերի 3-ի Կահիրեում լիբանանյան բանակի հրամանատար գեներալ Բուստանիի և ՊԱԿ-ի նախազահ Յասեր Արաֆաթի միջև ստորագրված համաձայնագիրն էր: Մանրամասն տես Նարությունյան Լ., Պաղեստինյան քաղաքական և ռազմական կառույցները Լիբանանում 1958-1975 թթ., Սերձավոր Արևելք, Եր., 2002, էջ 83; Khalidi W., Conflict and Violence in Lebanon. Confrontation in the Middle East, Cambridge, 1979, p. 175-187.

²⁴² Մահափորձը կազմակերպվել և իրազործվել էր ՊԱԿ-ից տրնհված Արու Նիդալի զինավորած խմբի կողմից: Մանրամասն տես Կոփին В.С., Некоторые аспекты внешней политики стран Северной Африки, Страны Северной Африки, М., 1984, էջ 65; Pogany I., Arab League and Peace-keeping in the Lebanon, Л., 1987, p. 142.

²⁴³ Էպшtein A.D., Бесконечное противостояние, М., 2003, с. 106.

ները ներխուժեցին Լիբանան՝ սկսելով «Խաղաղություն Գալիլեային» ռազմական օպերացիան²⁴⁴:

Իսրայելական ազգեսիան Լիբանանում, կամ ինչպես հաճախ այն անվանում են «արաբ-իսրայելյան 5-րդ պատերազմ», առավել երկարատև (78 օր) արաբ-իսրայելական պատերազմներից էր, որը ծանր հարված հասցրեց Պաղեստինյան դիմադրության շարժմանը (ՊԴԾ):

Լիբանանյան պատերազմի առաջին փուլը սկսվեց հունիսի 6-ին²⁴⁵: Համաձայնեցնելով իր գործողություններն ԱՄՆ-ի հետ Թել Ավիվը ձգուում էր ոչնչացնել ՊԱԿ-ի ռազմաքաղաքական կառույցները Լիբանանում, լիբանանյան կառավարության հետ համատեղ հսկողություն սահմանել երկրի ողջ տարածքում, ինչպես նաև նպաստել այնտեղ տեղակայված սիրիական զորամիավորումների դուրսբերմանը²⁴⁶:

²⁴⁴ Հովհաննիսյան Ն.Հ., Լիբանանյան ճգնաժամը և Լիբանանի հայ համայնքի դիրքորոշումը, Եր., 1982, էջ 74; Gabriel R.A., Operation Peace for Galilee: The Israeli-PLO in Lebanon, N.Y., 1984, p. 39.

²⁴⁵ Իսրայելական հատուկ ծառայությունների տվյալների համաձայն՝ Լիբանանում նախրան իսրայելական հարձակումը գտնվում էին 10-12 հազար պաղեստինյան մարտիկներ: Սանրամասն տե՛ս Մирский Г.И., Ливан в 80-е годы, М., 1987, с. 11.

²⁴⁶ Համաձայն իտալական «Էուրոպեո» ամսագրի՝ Իսրայելի պաշտպանության նախարար Արիել Շարոնը Լիբանանի վրա հարձակումը համաձայնեցրել էր ԱՄՆ-ի պետքարտուղարի և պաշտպանության նախարարի հետ: Սանրամասն տե՛ս Дмитриев Е., Ближневосточный конфликт, Международный ежегодник: политика и экономика, М., 1983, с. 215; Speigal S.L., The Other Arab-Israeli Conflict: Making American's Middle East Policy from Truman to Reagan, Chicago 1983, p. 291. Բացի այդ, համաձայն ամերիկյան ռազմական մասնագետն Բ. Քառլֆմանի, Լիբանան ներխուժելու իսրայելյան ծրագրերի մասին ԱՄՆ-ի պետքարտուղարը տեղեկացել էր դեռ Եզիջստոսի նախազահ Անվար Սադաթի հուղարկավորության ժամանակ (1981 թ. հոկտեմբերի 8): Սանրամասն տե՛ս Կարապետյան Ռ., Արաբական երկրների նոր և նորագույն պատմություն, Եր., 2003, էջ 226:

Այդ շրջանում բացի սիրիական զորքերից, որոնց քանակը մոտ 30 հազար էր, 1976 թ.-ից գտնվում էին նաև միջարաբական ուժեր, որոնց կազմում էին՝ Եմենի Արաբական Հանրապետության (ԵԱՀ), Եմենի Ժողովրդական Դեմոկրատական Հանրապետության (ԵԺԴՀ), Սաուդյան Արաբիայի, Արաբական Միացյալ Էմիրությունների (ԱՄԷ), Սուդանի և Լիբիայի ռազմական ստորաբաժանումները²⁴⁷: Լիբանանում էր գտնվում նաև իրաքյան 1500 հոգուց բաղկացած մի զորախումբ, որը չէր մտել միջարաբական ուժերի մեջ²⁴⁸:

Խրայելական և սիրիական զորքերի միջև առաջին բախումը տեղի ունեցավ հունիսի 7-ին Խասբայի քաղաքի մոտ²⁴⁹: ԱՄՆ-ի միջնորդությամբ Դամասկոսին առաջարկություն արվեց հսկողության տակ վերցնել ՊԱԿ-ի ռազմական կառույցները և թույլ չտալ նրանց հրթիռակոծել Արևելյան Գալիլեան²⁵⁰: Սիրիայի մերժմանն ի պատասխան՝ խրայելական ռազմաօդային ուժերը ոչնչացրին 34 սիրիական կործանիչ²⁵¹:

Հունիսի 11-ին ԱՄՆ-ի նախագահ Ռ. Ռեյգանը դիմեց Խրայելի կառավարությանը՝ կոչ անելով վերջ դնել ռազմական զործողություններին²⁵²: Հունիսի 15-ին խրայելական ազրեսիան Լիբանանում դատապարտեց ԽՍՀՄ-ը²⁵³: 1982 թ. հունիսի 11-ի լույս 12-ի գիշերը Խրայելի առաջարկությամբ հրադադար հաստատվեց: Այդ հրադադարով էլ ավարտվեց պատերազմի առաջին փուլը, որի արդյունքում խրայելական հսկողության տակ

²⁴⁷ Новейшая история арабских стран Азии, № 139.

²⁴⁸ Арабский мир, №24. аշխ., № 306; Schlicht A., Libanon zwischen Bürgerkrieg und Internationale Konflikt, Bonn 1986, S. 21.

²⁴⁹ Կարապետյան Ռ., Աշվ.աշխ., № 228:

²⁵⁰ Ahdel H.J., Der Libanon Krieg und seine Vorgeschichte, Blätter für Documents und Internationalen Politik, N 10, Կցln 1983, SS. 1313-1314.

²⁵¹ Անգeli Փ., Վойна без перемирия, Кишениев, 1985, с. 81.

²⁵² Rubinstein A.Z., The Soviet Union and the Peace Process Since Camp David, Soviet Foreign Policy in a Changing World, N.Y., 1986, p. 781.

²⁵³ Պարագանել, 15.17.1982.

հայտնվեց լիբանանյան տարածքի գրեթե կեսը՝ մոտ 4,5 հազար կմ², որտեղ ոչնչացվել էին ՊԱԿ-ի ռազմաքաղաքական կառույցները²⁵⁴:

1982 թ. հունիսի 6-ին ՍԱԿ-ի Անվտանգության խորհուրդն ընդունեց 508-րդ բանաձևը, որը պատերազմող կողմերից պահանջում էր դադարեցնել կրակը, իսկ Իսրայելը պետք է զորքերն անհապաղ դուրս բերեր Լիբանանից²⁵⁵: Հաջորդ օրը ԱԽ-ն ընդունեց 509-րդ բանաձևը, որտեղ ևս դատապարտում էր Իսրայելի գործողությունները Լիբանանում²⁵⁶: Միայն հունիս-սեպտեմբեր ամիսների ընթացքում Իսրայելին դատապարտող շուրջ 9 բանաձև էր ընդունվել²⁵⁷:

Իրենց հերթին արաբական երկրները միջարաբական հակասությունների հետևանքով չկարողացան հստակ դիրքորոշում արտահայտել լիբանանյան ճգնաժամի նկատմամբ: Միայն հունիսի 26-ին Թունիսում հնարավոր եղավ Արաբական պետությունների լիգայի նիստ գումարել արտգործնախարարների մակարդակով: Սասնակիցները չընդունեցին Սիրիայի առաջարկը՝ համատեղ գործողություններ սկսել Իսրայելի դեմ Լիբանանում և մի շարք տնտեսական պատճամիջոցներ ընդունել ԱԱՆ-ի նկատմամբ²⁵⁸: Տարածայնությունների հետևանքով հնարավոր եղավ միայն ձևավորել հատուկ կոմիտե՝ ԱԱՆ, Անգլիա, Ֆրանսիա, Շինաստանի Ժողովրդական Հանրապետություն և ԽՍՀՄ գործողելու նպատակով, ինչը միտված էր լիբանանյան ճգնաժամից դուրս գալու ձանապարհ հարթելուն:

²⁵⁴ After Lebanon: The Israeli-Palestinian Connection, N.Y. 1983, p. 13.

²⁵⁵ The United Nations and the Question of Palestine, Dp.: 861-41360, November 1985, p. 30; СССР и ближневосточное урегулирование 1967-1988 (Документы и материалы), М., 1988, с. 464.

²⁵⁶ Палестинская проблема, Док. ООН, международных организаций и конференций, М., 1984, с. 112.

²⁵⁷ Նոյն տեղում, էջ 157:

²⁵⁸ The Palestinians between Terrorism and Statehood, Brington 1996, էջ 243.

Իսրայելական ազրեսիային դիմադրելու նպատակով իրենց ռազմական ստորաբաժանումները Լիբանան գործողեցին նաև Լիբիան, ԵԾԴՀ-ն, ԵԱՀ-ն և Ալժիրը, որոնց ցույց տված օգնությունը, սակայն, աննշան էր²⁵⁹. Լիբանանում հակախրայելյան ուժերին օժանդակելու նպատակով 1979 թ. կազմավորված Համարաբական ժողովրդական կոնգրեսը 1982 թ. հունիսի 12-ին Տրիպոլիում կայացած արտահերթ հանդիպմանը որոշում ընդունեց կամավորներ հավաքագրել Լիբանան գործողելու նպատակով²⁶⁰:

Լիբանանում իսրայելական ազրեսիային դիմակայելու գործում մեծ ներդրում ունեցավ Եգիպտոսը: 1982 թ. մայիսի 28-ին, անտեսելով ՊԱԿ-ի հետ հարաբերությունների բացակայության հանգամանքը, Եգիպտոսի նախագահ Մուբարաքը տեղեկացրեց Արաֆաթին, որ իր ունեցած տվյալների համաձայն՝ Իսրայելը մոտ ապագայում հարձակման է պատրաստվում Լիբանանի վրա: Ընդ որում Եգիպտոսի նախագահը նշում էր, որ Թել Ավիվի վերջնական նպատակն է Բեյրութի գրավումը²⁶¹: Նման տեղեկություններ հայտնել էր Արաֆաթին նաև Հորդանանի թագավոր Շուսեյնը²⁶²: Իսրայելական ազրեսիայի առաջին օրերին Եգիպտոսում ընդդիմությունը նախագահից պահանջել էր խզել Իսրայելի հետ բոլոր տեսակի հարաբերությունները, ինչին, սակայն, Մուբարաքը չդիմեց՝ բավարարվելով միայն Թել Ավիվին դժոնհություն հայտնելով²⁶³:

Լիբանան իսրայելական ներխուժման հաջորդ օրը, հակառակ Եգիպտոսի հետ՝ դիվանագիտական հարաբերություն-

²⁵⁹ Валькова Л.В., С.Аравия: нефть, ислам, политика, №2. аշխ., էջ 157:

²⁶⁰ Зейналов М., Общеарабский народный конгресс: свершения и задачи, Азия и Африка сегодня, N 12, М., 1982., с. 11.

²⁶¹ Ден Кон-Шербок, Даур эль-Алами, Палестино-израильский конфликт: две точки зрения, М., 2002, с. 256.

²⁶² Սույն տեղում:

²⁶³ Ковтунович О., Египет и Ливанская проблема, Восток и современность, М., 1983, N 4, с. 4.

ների բացակայության հանգամանքին, Կահիրե ժամանեց Մարկոսի արտաքին գործերի նախարար Մուհամմեդ Բուսեբան՝ նպատակ ունենալով քննարկել Մութարաքի հետ Լիբանանում ստեղծված ծանր իրավիճակը²⁶⁴: Բուսեբան արաբական երկրներից առաջին բարձրաստիճան պաշտոնյան էր, որն այցելել էր Կահիրե 1979 թ. Եգիպտա-խրայելական հաշտության պայմանագրի ստորագրումից հետո²⁶⁵:

Նպատակադրվելով լիբանանյան ճգնաժամի կարգավորման գործում նախաձեռնությունը վերցնել իր ձեռքը՝ Մութարաքը կոչ արեց համաարարական զագաթնաժողով իրավիրել՝ ստեղծված իրավիճակից դուրս զալու ճանապարհներ որոնելու համար, որին, սակայն, արձագանքեցին միայն Հորդանանը և Սուլանը²⁶⁶: Եգիպտական քաղաքական գործիչների մեծամասնությունը հանդես եկան Թել Ավիվի խիստ քննադատությամբ՝ պահանջելով Խրայելից անհապաղ զորքերը դուրս բերել Լիբանանից:

Հայտնելով իր վրդովմունքն խրայելա-ամերիկյան փոխհամաձայնության նկատմամբ՝ Մութարաքը մերժեց ԱՄՆ-ի Լիբանան միացյալ Եգիպտա-ամերիկյան գորքեր ուղարկելու առաջարկը²⁶⁷: Հունիսի 8-ին խրայելական ազրեսիան Լիբանանում դատապարտել էր Եգիպտոսի Ժողովրդական ժողովը, որից հետո Մութարաքը Ռեյզանին և Խրայելի վարչապետ Բեգինին միքանի բանավոր և զրավոր ուղերձներ հղեց, որտեղ կոչ էր անում վերջ դնել արյունահեղությանը²⁶⁸:

Եգիպտոսի արտաքին գործերի պետնախարար Բուտրու

²⁶⁴ ТАСС БПИ N 203, 15.10.1982, с. 24.

²⁶⁵ Krämer G., նշվ. աշխ., էջ 168:

²⁶⁶ Ковтунович О., նշվ. աշխ., էջ 5; Haskins J., Leaders of the Middle East, Wash., 1985, p. 136.

²⁶⁷ Абдулмаджидов Р.С., Основные тенденции внешней политики Египта в эпоху Хосни Мубарака 1981-2001 гг., Арабские страны Западной Азии и Северной Африки, вып. 5, М., 2002, с. 272.

²⁶⁸ Звягельская И.Д., Конфликтная политика США на Ближнем и Среднем Востоке, М., 1990, с. 123.

Ղալին հայտարարել էր, որ Կահիրեն դեմ է Լիբանանում «խարայելա-ամերիկյան ռազմավարական համագործակցությանը և պաղեստինյան հարցի նման ձևով լրացմանը»²⁶⁹: Համաձայն եզիապտական զանգվածային լրատվության միջոցների՝ Սուրարարը փորձում էր համոզել Վաշինգտոնին զաղունի բանակցություններ սկսել ՊԱԿ-ի հետ²⁷⁰: Եզիապտոսը համոզված էր, որ Միայն անմիջական երկխոսության միջոցով ԱՄՆ-ի և ՊԱԿ-ի, իսկ հետո նաև Խորայելի և ՊԱԿ-ի միջև հնարավոր կինդի իրական առաջիադացման հասնել մերձավորարևելյան հակամարտության կարգավորման գործում:

Խորայելական գործողությունները Լիբանանում անվանելով բարբարոսություն՝ Սուրարարը միաժամանակ ձգուում էր չափից ավելի խիստ դիրքորոշում չարտահայտել ցույց տալով, որ, այդուամենայնիվ, Կահիրեն պատրաստ է շարունակելու բանակցությունները Թել Ավիվի հետ պաղեստինյան ինքնավարության վերաբերյալ քեմփինիոյան համաձայնագրերի շրջանակներում²⁷¹:

1982 թ. օգոստոսին Կահիրեում բանակցություններ սկսվեց ՊԱԿ-ի գործկոմի անդամ Ա.Ա. Դաջանիի և Եզիապտոսի դեկավարության միջև, որոնց նպատակն էր պատերազմը դադարեցնելու ծրագիր մշակել²⁷²: Զգտելով ցույց տալ Եզիապտոսի նվիրվածությունը «արաբական գործին», Սուրարարը «կշտամբեց» Սպիտակ տանը, որ վերջինս համապատասխան միջոցներ չէր ձեռնարկում պատերազմի դադարեցման համար²⁷³: Լիբանանում ստեղծված իրավիճակի համար Եզիապտոսը մեղադրեց նաև Սիրիային՝ փաստարկելով, որ այդ երկրում գորքեր պահելով՝ Դա-

²⁶⁹ الرأي، عمان، 20.08.1982

²⁷⁰ الأهرام، القاهرة، 21.08.1982

²⁷¹ الأخبار، القاهرة، 27.08.1982

²⁷² Washington Reports on Middle East Affairs, U.S.-Egypt Relations Coolers, September, 6, 1982, p. 4.

²⁷³ Симонян П., Владимиров В., Арабская Республика Египет, Международный ежегодник: политика и экономика, М., 1983, с. 236.

մասկոսը մեկ անգամ ևս արհեատական լարվածություն է ստեղծում²⁷⁴:

Արաբ-խրայելական հինգերորդ պատերազմի դադարեցման գործում իր ջանքերին ավելի մեծ նշանակություն տալու նպատակով Եգիպտոսը դիմել էր Լիբանանի բոլոր քաղաքական ուժերին՝ կոչ անելով միավորվել արտաքին վտանգի առօս՝ հանուն հայրենիքի անկախության պահպանման²⁷⁵:

1982 թ. հունիսի 12-ին սկսվեց պատերազմի 2-րդ փուլը, և նույն օրը՝ երեկոյան, Խորայելը հայտարարեց կրակի դադարեցման մասին, որը խախտվեց այս անգամ հունիսի 13-ին սիրիական գորքերի կողմից²⁷⁶: Սակայն շուտով ԱՄՆ-ի հատուկ բանագնաց Ֆիլիպ Հարիֆի միջնորդությամբ հնարավոր եղավ հրադադար հաստատել, որը, սակայն, նույնպես չէր կարող երկարատև լինել:

Երկրորդ հրադադարի ժամանակաշրջանում Խորայելի բանակն ամբողջովին շրջապատել էր արևմտյան Բեյրութը և միացել արևելյան Բեյրութում քրիստոնեական բանակի հետ²⁷⁷:

Հունիսի 21-ին խորայելցիները գրավեցին նաև Բեյրութի օդանավակայանի հարավային հատվածը: 60 ժամ տևողությամբ անդադար մարտերից հետո խորայելական ստորաբաժանումները կարողացան հետ շարտել սիրիական գորքերը դեպի Դամասկոսի մայրութի: Դրանից հետո կրակը կրկին դադարեց: Խորայելն իր հերթին հաստատեց Բեյրութի ծովային և ցամաքային շրջափակում: Դրանով ավարտվեց պատերազմի երկրորդ փուլը, որին հաջորդեց երրորդը՝ Բեյրութի պաշարումը, որի ընթացքում Խորայելը պարտադրեց ՊԱԿ-ի մարտիկներին և սիրիական 25-րդ բրիգադի մասցորդներին լքել Բեյրութը:

²⁷⁴ Князев А.Г., Египет 80-х годов, նշվ. աշխ., էջ 48:

²⁷⁵ The Egyptian Point of View on International Issues, նշվ. աշխ., էջ 10:

²⁷⁶ Evron Y., War and the Intervention in Lebanon: The Israeli-Syrian Deference Dialogue, Baltimore, 1987, p. 151.

²⁷⁷ Хрезат Мохаммед Ахмад, Ливано-израильские отношения, Автореферат, М., 1998, с. 6.

Հունիսի 29-ին Բեզինը հայտարարեց, որ հնարավորություն կտա Բեյրութում պաշարվածներին Կարմիր խաչի պաշտպանության ներք դուրս բերելու և տեղափոխելու Սիրիա²⁷⁸:

Այդ նույն ժամանակ Բեյրութում պաշարված Արաֆաթն ամերիկյան կոնգրեսականների հետ հանդիպման ժամանակ հայտարարեց, որ պատրաստ է ընդունելու ՄԱԿ-ի ԱԽ-ի 242-րդ²⁷⁹ բանաձևը, որի համաձայն՝ Խրայելը պետք է դուրս բերի իր զորքերն արաբական բռնազավթված տարածքներից:

Հուլիսի կեսերին Հաֆիրը սկսեց բանակցել լիբանանյան կառավարության հետ՝ նպատակադրվելով դուրս բերել ՊԱԿ-ի ստորաբաժանումները և սիրիական զորքերը Լիբանանից: Դա առաջին դեպքն էր, երբ լիբանանյան կառավարությունը պաշտպանում էր Խրայելի և ԱՄՆ-ի դիրքորոշումն այդ հարցում²⁸⁰: Խրայելը հայտարարեց, որ ունենալով արևմտյան Բեյրութի բռնազավթման հնարավորությունը՝ նա միևնույն ժամանակ պատրաստ է բանակցելու: Սակայն օգոստոսի 4-ին, ի պատասխան պաղեստինյան հրետանակոծության, խրայելական զորքերը գրավեցին հարավային Բեյրութի երկու բնակավայր և օդանավակայանի հյուսիսային հատվածը:

Շուտով ՊԱԿ-ի պատրաստակամությունը դուրս գալ Բեյրութից մտավ փակուտի, բանի որ պարզ դարձավ, որ արաբական երկրները պատրաստ չեին ընդունելու պաղեստինյի մարտիկներին: Միայն այն բանից հետո, երբ Սաուդյան Արաբիան խոստացավ համապատասխան ֆինանսական օգնություն հատկաց-

²⁷⁸ Julianne S.P., The Reagan Administration and the Palestinian Question, Wash., 1984, p. 68.

²⁷⁹ 242-րդ բանաձևն ընդունվեց 1967 թ. նոյեմբերի 22-ին: Բանաձևում արաբական բռնազավթված տարածքների հարցում որոշակիություն չկար, ինչն Խրայելին մաներելու հնարավորություն էր տալիս, որի հետևանքով էլ ՊԱԿ-ը հրաժարվում էր այն ընդունել:

²⁸⁰ Թուանական պատմություն, 1984, թ. 109:

նել, արաբական որոշ երկրներ իրենց համաձայնությունը տվեցին ընդունել ՊԱԿ-ի մարտիկներին²⁸¹:

Ցանկանալով դյուրացնել ՊԱԿ-ի ինքնակամ հեռացումը Բեյրութից 1982 թ. օգոստոսի կեսին ՍԱԿ-ի Անվտանգության խորհրդում Եգիպտոսը և Ֆրանսիան առաջ քաշեցին բանաձև, որով կոնկրետ ճանաչվում էր պահեստինցիների իրավունքը, և որը մերձավորարենյան կարգավորման ծրագիր էր՝ շատ ավելի ընդարձակ, քան պահանջում էր բուն լիբանանյան խնդիրը: Ծրագիր ներառում էր Իսրայելի կողմից զրավված Արևմտյան ափի և Գազայի գոտու ապագա ճակատագիրը²⁸²:

Վաշինգտոնն այդ բանաձևը համարեց չափազանց համարձակ: Եգիպտա-ֆրանսիական բանաձևի ըննարկումն ընդհատվեց հուլիսի 30-ին, որպեսզի ԱԽ-ն հնարավորություն ունենար քննարկելու հսկանիայի կողմից մտցված բանաձևը, համաձայն որի՝ Իսրայելից պահանջում էին վերացնել արևմտյան Բեյրութի շրջափակումը²⁸³: Հաջորդ օրը իսրայելցիները վերսկսեցին արևմտյան Բեյրութ խմելու ջրի մատակարարումը, քայլ խոչընդոտում էին մթերքի, վառելանյութի, էլեկտրաէներգիայի, դեղորայքի մատակարարումը:

Չհաննելով Եգիպտա-ֆրանսիական բանաձևի ընդունմանը՝ Եգիպտոսի արտաքին գործերի նախարար Շասան Ալին ուղևորվեց Վաշինգտոն, որի նպատակն էր համոզել Մերձանի վարչակազմին դրականորեն արձագանքել Եգիպտոսի և Ֆրանսիայի նախաձեռնությանը ՍԱԿ-ում: Ալին ակնարկեց նաև, որ եթե ՊԱԿ-ը համաձայնվի Եգիպտոսում տեղակայել իր ստորաբաժանումների մի մասը, որոնք պետք է դուրս բերվեին Բեյրութ:

²⁸¹ Павлов А., Ястребы над Ливаном, М., 1990, с. 33; Vatikiotis R.J., Relations between Egypt and Israel 1977-1982, Arab and Regional Politics in the Middle East, L., 1984, p. 236.

²⁸² Performance report: Egypt and the Palestinian Question 1945-1988, Ministry of Foreign Affairs, Cairo 1988, p. 64.

²⁸³ Моджорян Л.А., Терроризм: правда и вымысел, М., 1983, с. 158; ТАСС Атлас, N 33, М., 13.08.1982, с. 31.

թից, Եգիպտոսը կաշխատի համոզել ՊԱԿ-ին միանալ քեմփ-դեկոյան համաձայնագրերին²⁸⁴:

Ամերիկյան վարչակազմը մերժեց Հասան Ալիի առաջարկը, որից հետո Մուրարաջը հայտարարեց, որ ստորաբաժանումների դրսքերումը չի նպաստի ընդհանուր իրավիճակի բարելավմանը²⁸⁵: 1982 թ. օգոստոսի կեսին Եգիպտոսը դադարեցրեց Խորայելի հետ բանակցությունները պաղեստինյան ինքնավարության վերաբերյալ քեմփդեկոյան համաձայնագրերի շրջանակում՝ հայտարարելով, որ դրանք կվերսկսվեն միայն այն բանից հետո, եթե խրայելական գորքերը դուրս կբերվեն Լիբանանից²⁸⁶: Հետաքրքրաշարժ է այն հանգամանքը, որ խրայելական ազգեսիայի սկզբում Մուրարաջն առաջարկել էր Արաֆաթին կառավարություն կազմել Կահիրեում: Հետազյում նա առաջարկեց ապաստան տալ 6 հազար պաղեստինյան մարտիկներին, պայմանով, որ նրանք Եգիպտոս մտնեին առանց սպառազինության²⁸⁷: Որոշ ժամանակ անց Եգիպտոսի նախագահը հրաժարվեց իր առաջարկից, քանի որ Արաֆաթը չէր ցանկանում լրել Բեյրութն առանց զենքի: Այդուամենայնիվ, Եգիպտոսի նման դիրքորոշումը մեկ անգամ ևս նպաստում էր Կահիրեի և ՊԱԿ-ի միջև հարաբերությունների կանոնակարգմանը Քեմփ-Դեկոյից հետո:

Պատասխանատվություն զգալով Լիբանանի խաղաղ բնակչության հետագա ճակատագրի հանդեպ և ձգտելով կանխել Լիբանանի մայրաքաղաքի հետագա ավերումը՝ պաղեստինցիների դեկավարությունը որոշում ընդունեց Լիբանանից իր զինված միավորումների և ՊԱԿ-ի նատավայրի դուրսբերման մասին²⁸⁸:

²⁸⁴ The Christian Science Monitor, Boston, 02.08.1982.

²⁸⁵ ТАСС Атлас, N 33, M., 13.08.1982, с. 26.

²⁸⁶ Андреасян Р., Гашев Б., Сейранян Б., Египет: наследство Садата и политика Мубарака, Восток и современность, вып. 2, М., 1983, с. 42.

²⁸⁷ The Christian Science Monitor, London, 05.08.1982.

²⁸⁸ Հարությունյան Լ., Սիրիայի և Խորայելի գործոնը լիբանանյան ճգնա-

ԱՄՆ-ից, Անգլիայից, Ֆրանսիայից և Իտալիայից Լիբանան ժամանած ծովային հետևակի հսկողության տակ սկսվեց պաշտպաների դուրսքերում, որն ավարտվեց սեպտեմբերի 1-ին²⁸⁹: Մոտ 8.485 պաղեստինյան մարտիկներ և սիրիական 25-րդ բրիգադի մասցորդները (2 հազար մարդ) տեղաբաշխվեցին Սիրիա, Ալժիր, Թունիս, Հարավային Եմեն, Սուլան, Իրաք և Հորդանան²⁹⁰: Պաշտպաների դուրսքերումից հետո՝ սեպտեմբերի 1-ին Խրայելը պաշտոնավես հայտարարեց, որ «Խաղաղություն Գալիլեյին» ռազմական գործողությունն ավարտված է:

Սեպտեմբերի սկզբին Լիբանանի նորընտիր նախազահ Բաշիր Ժմայելը բանակցություններ սկսեց Խրայելում Բեզինի հետ, սակայն սեպտեմբերի 14-ին Լիբանանի նախազահը սպանվեց: Բաշիրի սպանության հաջորդ օրը՝ սեպտեմբերի 15-ի գիշերը, Շարոնի հրամանով խրայելական բանակը մտավ արևմտյան Բեյրութ²⁹¹: Թեև Ավիվը հայտարարել էր, որ ձգտում էր կանխել քառային իրավիճակը, որը կարող էր ծագել նախազահի սպանության հետևանքով, և որ հակառակ դուրսքերման մասին համաձայնագրի՝ Բեյրութում շարունակում էին մնալ 2 հազար պաղեստինյան զինյալներ, որոնք իրենց տրամադրության տակ ունեին ծանր հրետանի²⁹²: Արդյունքում ձևավորվեց մի իրավիճակ, երբ խրայելական բանակը հսկում էր ողջ արևմտյան Բեյրութը, բացառությամբ պաղեստինյան երկու ճամբարների՝

ժաման 1975-1990 թթ., Արևելք, Եր., 2001, էջ 80:

²⁸⁹ Кальвокоресси П., Мировая политика после 1945г., т. 1, М., 2000, էջ 513; Стоклицкий С.Л., Ливан: тревоги и надежды, М., 1988, с. 7.

²⁹⁰ Республика Ирак в системе международных отношений, էջ 213; Նշենք, որ Արաֆարի նոր նախավայրը դարձավ Թունիս: Մանրամասն ունի և Զейналов М.П., Незабываемые встречи с председателем Арафатом, М., 2002, с. 115; Киселев В.И., Палестинская проблема в международных отношениях: региональный аспект, М., 1988, с. 184.

²⁹¹ Тысовский Ю., Преступление без наказания, М., 1983, с. 5.

²⁹² Краткая еврейская энциклопедия, т. 3, Иерусалим, 1986, с. 823.

Սաբրայի և Շատիլայի²⁹³: 1982 թ. սեպտեմբերի 16-18-ի գիշերը պաղեստինյան փախստականների վերոնշյալ ճամբարներում լիբանանյան աջ ուժերի զինված խմբավորումների միջոցով, որոնց կորիզը կազմում էին Լիբանանյան փաղանգներ և Ազգային լիբերալ կուսակցությունները, իրականացվեց հազարավոր պաղեստինցիների դաժան սպանությունը²⁹⁴: Այս հանցագործությունից հետո Սաբրա և Շատիլա պաղեստինյան փախստականների ճամբարները ևս հայտնվեցին իսրայելյան բանակի վերահսկողության ներքո:

Եզիզտացի հեղինակ Գալալ Ամինը նշում է, որ Իսրայելի հետ հարաբերություններում և պաղեստինյան հարցի նկատմամբ Եզիզտոսի քաղաքականությունը շոշափելիորեն փոխվեց հենց Սաբրայի և Շատիլայի դեպքերից հետո²⁹⁵: 1982թ. Սեպտեմբերի վերջին Մուբարաքը թել Ավիվից հետ կանչեց Եզիզտոսի դեսպանին²⁹⁶: Նախագահը հայտարարել էր, որ չի հանդուրժի Իսրայելի կողմից արաբական երկրների իրավունքների այդ կարգի ուժնահարում: Մուբարաքը նույնիսկ «սպառնաց» ԱՄՆ-ին հարաբերությունների վատթարացմամբ, եթե Վաշինգ-

²⁹³ Мухсин Мухаммед Салих, Палестинский вопрос: его история ее развитие до 2000 года, М., 2002, с. 57.

²⁹⁴ Государство Израиль, Справочник, М., 1986, с. 88.

²⁹⁵ Galal Amin, Egypt in the Era of Hosni Mubanarak, 1981-2011, American University in Cairo, 2011, p. 9.

²⁹⁶ Gamneer M., Egyptian-Israeli Relations, Middle East Contemporary Survey, L., 1984, p. 186; Агарышев А., Ближний Восток: терроризм и его покровители, М., 1986, с. 196; 21.09.1982 *الاهرام، القاهرة*, 1986 թ. Եզիզտոս-իսրայելյան մի շարք հակասությունների կարգավորումից հետո: Սանրաման տես Stein K.W., Continuity and Change in Egyptian-Israeli Relations 1973-1997, Israeli Affairs, vol. 3, N 3, Tel-Aviv, 1999, p. 309.

տոնը փորձեր իր դեսպանությունը տեղափոխել Թել Ավիվից Երուսաղեմ, ինչն այդ օրերին քննարկման առիթ էր դարձել²⁹⁷:

Եգիպտոսի արտաքին գործերի նախկին պետնախարար Բ. Ղալին գրում էր, որ Լիբանանում Իսրայելի կողմից կազմակերպված ջարդը հիասթափեցրեց Եգիպտոսում Թել Ավիվի հետ հարաբերությունների պահպանման կողմնակիցներին²⁹⁸:

Փաստորեն Եգիպտոսը դե ֆակտո սառեցրեց Իսրայելի հետ հարաբերությունները և առաջ քաշեց հետևյալ պահանջները, որոնց կատարումից հետո միայն Կահիրեն ենթադրում էր եգիպտա-իսրայելական դիվանագիտական հարաբերությունների «վերականգնում»²⁹⁹.

- իսրայելական գորքերի անհապաղ դուրսբերում Լիբանանի տարածքի մեծ մասից,
- Իսրայելի համաձայնությունը պաղեստինցիների մասնակցությամբ համապարփակ բանակցություններ սկսել պաղեստինյան խնդրի կարգավորման նպատակով:

Մուբարաքը մեղադրեց իսրայելական կառավարությանը նաև պաղեստինցիների նկատմամբ ոչնչացման քաղաքականության անցկացման մեջ³⁰⁰:

1982 թ. սեպտեմբերի 29-ին իսրայելական գորքերը դուրս բերվեցին Բեյրութից՝ քաղաքի վերահսկողությունը հանձնելով լիբանանյան բանակին և նոր ժամանած միջազգային խաղաղարար ստորաբաժանումներին:

1983 թ. մայիսի 17-ին Իսրայելի և Լիբանանի միջև ստորագրվեց բազմակողմանի հարաբերությունների վերաբերյալ համա-

²⁹⁷ Егорин А.З., Египет нашего времени, М., 1998, с. 252; Егорин А.З., Война за мир на Ближнем Востоке, М., 1995, с. 66.

²⁹⁸ Green S., Egypt in Middle East Affairs, Washington Reports on Middle East Affairs, January, 14, 1985, p. 5.

²⁹⁹ Шмелева Т.А., Особенности политического и экономического развития АРЕ 1981-2001, Востоковедный сборник, вып. 3, М., 2002, с. 198.

³⁰⁰ www.rian.ru/riam/index.com

ձայնագիր³⁰¹: Համաձայնագրով նախատեսվում էր Լիբանանի օդային, ջրային, ցամաքային տարածքի՝ լիբանանա-իսրայելական համատեղ հսկողության սահմանում³⁰²: Ուշագրավ է այն հանգամանքը, որ Ա. Ժմայելը³⁰³ իր ստորագրությունը համաձայնագրի տակ չդրեց՝ հավանաբար վախենալով արժանանալ Եզիզոսուի նախազահ Անվար Սադաթի ճակատագրին³⁰⁴:

Ավելին, 1984 թ. մարտի 5-ին Ա.Ժմայելն անձամբ չեղյալ հայտարարեց լիբանանա-իսրայելական համաձայնագիրը: Ստորագրված համաձայնագիրն արաբական երկրներից հավանության արժանացրեց միայն Եզիզոսը ԱՄՆ-ի տնտեսական ճնշման տակ³⁰⁵, Սիրիան գնահատեց այն որպես «սպառնալիք սեփական անվտանգությանը»³⁰⁶: Արաբական այսպես կոչված առաջդեմ երկրները բոյկոտեցին համաձայնագիրը, իսկ պահպանողականները Սաուդյան Արաբիայի գլխավորությամբ ձեռնպահ մնացին³⁰⁷:

Նպատակադրվելով խոշընդոտել Լիբանանում պաղեստինյան ռազմական ներկայության վերականգնումը՝ Իսրայելը նպաստում էր պաղեստինա-շիայական տարածայնությունների սրմանը՝ օգտագործելով այն թեզը, թե Լիբանանում գլխավոր վտանգը գալիս է ՊԱԿ-ի ներկայությունից, այլ ոչ թե իսրա-

³⁰¹ Text of the Lebanese-Israeli Troop Withdrawal Agreement, Journal of Palestine Studies, Summer, 1983, vol. 12, N 4, p. 97.

³⁰² Նույն տեղում:

³⁰³ Բ. Ժմայելի սպանությունից մեկ շաբաթ անց Լիբանանի նախազահի պաշտոնը գրադեցրեց նրա եղբայր Ամին Ժմայելը:

³⁰⁴ Валькова Л.В., Саудовская Аравия: нефть, ислам, политика, с. 160.

³⁰⁵ Ежегодник, М., 1984, с. 251. Տարկ է նշել, որ այդ տարի Եզիզոսին ԱՄՆ-ի տրամադրած ֆինանսական օգնությունը հասել էր 2,59 մլրդ դոլարի:

³⁰⁶ Polk William, The Arab World Today, Cambridge, 1991, p. 355.

³⁰⁷ Валькова Л.В., Саудовская Аравия и США: общность интересов и противоречия, Азия и Африка сегодня N 2, М., 1984., с. 9.

յելցիներից: 1985 թ. մայիսին արևմտյան Բեյրութում զինվածքախումներ սկսվեցին շիայական «Ամալ» կազմակերպության և պաղեստինցիների միջև: Իրավիճակը փոքր-ինչ շտկվեց միայն 1987 թ. մայիսին, երբ սիրիական զորքերը մտան Արևմտյան Բեյրութ³⁰⁸: Իսրայելական զորքերը շուրջ 18 տարի մնացին թել Ավիվի Լիբանանի հարավում ստեղծած «անվտանգության գոտում»: Իսրայելական քաղաքական գործիչներն ընդունեցին, որ «Խաղաղություն Գալիլեային» ռազմական գործողությունն ամբողջությամբ չլուծեց Իսրայելի հյուսիսային բնակավայրերի անվտանգության պահպանման հարցը: Հարավային Լիբանանում խսրայելական ներկայությունը պահպանվեց մինչև 2000 թ. մայիսի 24-ը, երբ Էհուլ Քարաքի կառավարությունը որոշեց դուրս բերել իր զորքերը Լիբանանից³⁰⁹:

Կահիրեկի դիրքորոշումը Լիբանանում խսրայելական ազգեստիայի նկատմամբ ևս մեկ կարևորագույն քայլ³¹⁰ էր դեպի «արաբական ընտանիք» վերադարձի գործուների շարքում: Այդ առումով շափազանց կարևոր և նպաստավոր դեր կատարեց Իսրայելի հետ հարաբերությունների առկայությունը, որն իբրև ճնշման յուրահատուկ լծակ օգտագործում էր եզիպտական դեկավարությունը:

Իսրայելական ազգեստիայի զոհ դարձան շուրջ 70 հազար պաղեստինցիներ, որոնցից մոտ 60 հազարը խաղաղ բնակիչներ էին³¹¹: Պաղեստինյան 14 թաղամասեր ընդհանրապես ջնշվեցին երկրի երեսից: Ինչ վերաբերում է իսրայելական բանակին, ապա տարբեր տվյալների համաձայն՝ այն կորցրել էր 500-2.000 զինվոր և սպա³¹²:

³⁰⁸ Семеновых В., Ливанский кризис и Ближневосточный конфликт, Специальный бюллетень, М., 1986, с. 34.

³⁰⁹ Эпштейн А.Д., Աշվ. աշխ., էջ 114:

³¹⁰ Առաջին քայլը Եզիպտական դիրքորոշումն էր իրաքա-իրանյան պատերազմի նկատմամբ:

³¹¹ Медведко Л.И., Мины под оливами, М., 1984, с. 151-152.

³¹² Медведко Л.И., Աշվ. աշխ., էջ 152:

Եզիպտոսի դիրքորոշումն արաբ-խրայելական 5-րդ պատերազմի նկատմամբ արաբական աշխարհում Կահիրեի քաղաքական դերի վերարժնորման կարևորագույն գործոններից էր: Զնայած Խրայելի հետ բազմակողմանի հարաբերությունների առկայությանը՝ Մուրարաքը կարողացավ Եզիպտոսը ներկայացնել որպես արաբական աշխարհի կարևոր մաս, որը կոչված է եղական դերակատարություն ունենալ մերձավորարևելյան գործընթացներում:

2.2. ԵԳԻՊՏՈՍԻ ԴԻՐՔՈՐՈՇՈՒՄԸ ՊԱՂԵՍՏԻՆՅԱՆ ՀԱՐՑԻ ՆԿԱՏՄԱՄԲ (1983-1991 թթ.)

Իրականացնելով «արաբական ընտանիք» վերադառնալու քաղաքականությունը՝ Մուրարաքը ջանքեր էր գործադրում՝ ակտիվացնելու մերձավորարևելյան հակամարտության կարգավորման գործընթացը, որը կնպաստեր Եզիպտոսի քաղաքական դերի մեծացմանը: Եզիպտոսում պաղեստինյան հարցի նկատմամբ գոյություն ունեցող հասարակական կարծիքը ոչ պակաս կարևոր հանգամանք էր, որի հետ չեր կարող հաշվի չնստել երկրի դեկավարությունը:

Մուրարաքի իշխանության շրջանում փոփոխության ենթարկվեց պաղեստինյան խնդրի լուծման Եզիպտոսի ռազմավարությունը: Եթե նախկին իշխանությունները, մասնավորապես Նասերի շրջանում, հնարավոր էին համարում Եզիպտոսի անմիջական ռազմական մասնակցությունը մերձավորարևելյան հակամարտությանը, ապա Մուրարաքն ի պաշտոնե հայտարարեց, որ Եզիպտոսը փորձելու էր խաղաղ ճանապարհով դիմակայել Թել Ավիվին: Նախագահի խոսքերով. «...Եզիպտական բանակը միայն մեկ նպատակ ունի՝ ապահովել Եզիպտոսի պաշտպանությունն ու անվտանգությունը ցանկացած ազրեսիայից, և բանակցությունների միջոցով ի վիճակի է վերջ դնել խրայելցիների և պաղեստինցիների միջև եղած բոնություն-

Աերին»³¹³: Եզիպտոսը հավակնում էր կարևոր դերակատարության մերձավորարևելյան հակամարտության կարգավորման գործընթացում, քանի որ այդ շրջանում նա միակ արարական երկիրն էր, որ պաշտոնական հարաբերություններ ուներ Խորայելի հետ: Հարկավոր է հաշվի առնել նաև այն, որ պաղեստինցիներին ինքնավարություն տրամադրելու նպատակով ընթացող եզիպտա-խորայելական բանակցությունները, որոնք սկսվել են դեռևս նախազահ Սադաթի իշխանության շրջանում, փակուղի էին մտել:

1983 թ. դեկտեմբերին Խամայիլհայում Յասեր Արաֆաթի և Հոսնի Մուտքարաքի հանդիպման ժամանակ վերջինս առաջարկեց ՊԱԿ-ին անմիջական բանակցություններ սկսել Խորայելի հետ³¹⁴: ՊԱԿ-ի նախազահն արար առաջնորդներից առաջինն էր, որ այցելեց Եզիպտոս քեմփիլիդյան համաձայնագրերի ստորագրումից հետո: Արաֆաթը քայլ նոր էջ բացեց Եզիպտա-պաղեստինյան հարաբերություններում՝ սերտ համագործակցության սկիզբ դնելով Եզիպտոսի և ՊԱԿ-ի դեկավար մարմինների միջև: Եթե ՊԱԿ-ի նախազահ Արաֆաթը և նրա կողմնակիցները հնարավոր էին համարում Եզիպտոսի հետ հարաբերությունների վերականգնումը Քեմփ-Նիդից հետո, ապա պաղեստինյան դիմադրության շարժման մյուս կողմերը, մասնավորապես Սահկան, Պաղեստինի Ազգային Ճակատը, Պաղեստինի կոմկուսը, Պաղեստինի ժողովրդական պայքարի ճակատը, կտրականապես դեմ էին Կահիրեի հետ հարաբերությունների հաստատմանը և շարունակում էին դատապարտել Եզիպտոսին միջազգային և միջարարական ատյաններում³¹⁵:

³¹³ 21.04.2002، القاهره، اليوم， الخبر.

³¹⁴ Washington Reports on Middle East Affairs, Napoli James, U.S., "Double Standart", Renews America – Bashing in Egypt, September–October, London, 1993, p. 64.

³¹⁵ Адаа Абу Амер, Эволюция позиции ООП по ближневосточному урегулированию, автореферат канд. диссерт., М., 1992, с.11.

Արաֆաթի հետ հանդիպումից հետո Եգիպտոսը, հանդես գալով ի պաշտպանություն Պաղեստինի արաք ժողովրդի օրինական իրավունքների, պարբերաբար մերժում էր Պաղեստինին ինքնավարություն տալու հսրայելի առաջարկները³¹⁶:

Արաբական աշխարհում 80-ականներին ձևավորված իրավիճակը նպաստում էր Եգիպտա-պաղեստինյան հարաբերությունների բարելավմանը: Ըստ Էռթյան Երկրորդ պլան էր մղվել Եգիպտոսի՝ քեմփդեփյան համաձայնագրերի շրջանակներում գործելու հանգամանքը: Եգիպտոսի և ՊԱԿ-ի միջև հարաբերությունների վերականգնմանը նպաստեց նաև Կահիրեի գործուն դիրքորոշումը 1982թ. Լիբանանում իսրայելական ազրեսիայի հանդեպ³¹⁷:

1980-ականների սկիզբը նշանավորվեց պաղեստինյան խնդրի լուծմանը կոչված մի շարք ծրագրերի լույս աշխարհ գալով, որոնց հանդեպ արաբական երկրների դիրքորոշման և մասնավորապես Եգիպտոսի նախագահի դրսորած գործուն քաղաքական կեցվածքի շնորհիվ հնարավոր եղավ զգալիորեն տեղաշարժել մերձավորարևելյան հակամարտության կարգավորման գործընթացը:

1981 թ. օգոստոսի 7-ին Սաուդյան Արաբիայի թագաժառանգ Ֆահդ իբն Աբդ ալ-Ազիզն առաջ քաշեց մերձավորարևելյան կարգավորման իր համապարփակ ծրագիրը՝ բաղկացած ութ կետից, որը ներառում էր պաղեստինցիների օրինական իրավունքների պաշտպանության, պաղեստինցի փախստականներին նյութական և ֆինանսական փոխհատուցման, 1967 թ. արաբ-իսրայելական պատերազմում իսրայելի կողմից գրավված արաբական տարածքներում իսրայելական շինությունների վերացման կարևորությունը և այլն³¹⁸:

³¹⁶ The Middle East and North Africa, London, 2001, p. 410.

³¹⁷ Ашхаб Н., Палестинская революция после битвы за Бейрут, Проблемы мира и социализма, N 6, M., 1983, с. 73.

³¹⁸ Lukas Y., Documents on the Israeli-Palestinian Conflict (1967-1983), N.Y., 1985, p. 152.

Ֆահդի ծրագիրը լուրջ դժգոհություն առաջացրեց ՊԱԿ-ում, ինչպես նաև Սիրիայում, Ալժիրում և Լիբիայում, քանի որ ծրագրում ՊԱԿ-ը ներկայացված չէր որպես Պաղեստինի արարժողությունի օրինական ներկայացուցիչ³¹⁹: Հակառակ դրան՝ Ֆահդի ծրագիրը սատարեցին արաբական միապետությունները³²⁰: Ֆահդի ծրագրում մերձավորարելյան հակամարտության կարգավորմանն ուղղված դրական կողմերից մեկը Իսրայել պետության գոյության իրավունքը ճանաչելու առաջարկն էր:

Ֆահդի ծրագիրը ըննարկման դրվեց 1981 թ. նոյեմբերի 25-ին արաբական երկրների ֆեսի զազարնաժողովում, որը հրավիրվել էր՝ ըննարկելու Լիբանանում ստեղծված իրադրությունը: Սակայն հանդիպման մասնակից պետություններին շհաջողվեց համաձայնության հասնել այդ հարցում³²¹: Ֆահդի ծրագիրը մերժեց Բաղդադը՝ չնայած իրարա-սաուդական բարեկամական հարաբերություններին³²²:

Ինչ վերաբերում է ՊԱԿ-ի առաջնորդին, ապա նա սկզբում առաջարկել էր զգուշությամբ վերաբերվել ծրագրին, սակայն ֆեսում ըննարդատեց այն³²³: Ֆահդի ծրագրի ընդունման հարցում միաձայն չէին նույնիսկ պահպանդական վարչակարգերը:

ԱՄՆ-ը ևս բացասաբար արտահայտվեց սաուդական ծրագրի վերաբերյալ: Ամերիկյան մամուլը այն տեսակետն առաջ քաշեց, որ Ֆահդն այդ ծրագրով փորձում էր հակակշռել քեմփ-

³¹⁹ Ֆահդի ծրագրի ամբողջական տեքստը տե՛ս Middle East International, London, N 161, 20.10.1981, p. 3.

³²⁰ Մարկարյան Բ., Страны Персидского Залива и арабо-израильский конфликт, Восток и современность, N 1, M., 1983, с. 89; Washington Star, Wash., 06.12.1981.

³²¹ Մարուկեյի Հասան Երկրորդ թագավորը զազարնաժողովի ձախողումը պատճառաբանեց արաբական առաջնորդների մեծ մասի բացակայությամբ:

³²² The Times, London, 27.11.1981.

³²³ The Christian Science Monitor, Boston, 24.08.1981.

դեմքյան համաձայնագրերին³²⁴: ԽՍՀՄ-ը նույնպես դեմ արտահայտվեց ծրագրին, որը չէր կարող հանգեցնել խնդրի կարգավորմանը, քանի որ անտեսում էր ՊԱԿ-ին և նրա առաջնորդին³²⁵: Հակառակ ԽՍՀՄ-ի և ԱՄՆ-ի՝ սառըական առաջարկին կողմ արտահայտվեցին Անգլիան և Ֆրանսիան՝ նշելով, որ հնարավոր կինք ընդհանուր եղբեր գտնել ֆահդի և մերձավորարևելյան հակամարտության կարգավորման եվրոպական նախագծերի միջև³²⁶:

Ֆահդի ծրագիրն առաջացրեց Խորայելի ծայրահեղ դժողովությունը: Վարչապետ Բեզինը կասկածամտությամբ վերաբերվեց արաբական երկրների կողմից Խորայելի Պետության գոյության իրավունքն ընդունելու հնարավորությանը³²⁷:

1982 թ. Լիբանանում խորայելական ազրեսիայի ըննարկմանն էր նվիրված 1982 թ. սեպտեմբերի սկզբին Ֆետում սկսված արաբական երկրների 12-րդ զագաթնաժողովի երկրորդ փուլը³²⁸: Սեպտեմբերի 9-ին զագաթնաժողովի մասնակից արաբական 19 պետություններ և ՊԱԿ-ը կողմ քվեարկեցին Սաուդյան Արաբիայի, Սիրիայի և Թունիսի մշակած մերձավորարևելյան հակամարտության համարաբական ծրագրին³²⁹, որի հիմքում դրված էր ֆահդի ծրագիրը: Համաձայն համարաբական ծրագրի՝ Խորայելը պետք է հեռանար 1967 թ. արաբական բոլոր գրավյալ տարածքներից՝ ներառյալ Արևելյան Երուաղեմը, ՊԱԿ-ը՝ որպես պահեստինյան ժողովողի միակ օրինական ներկայացուցիչ, պետք է առաջնորդեր պայքարը՝ հանուն ինքնորոշման իրավունքի, Արևմտյան ափը և Գազայի հատվածը պետք է ժամանակավորապես անցնեին ՄԱԿ-ի հսկողությանը, ԱԽ-ն պետք է

³²⁴ Business Week, N.Y., 16.11.1981.

³²⁵ Материалы 26 съезда КПСС, М., 1981, с. 14-15.

³²⁶ Newsweek, N.Y., 28.10.1981, The Times, London, 04.12.1981.

³²⁷ The New York Times, N.Y., 01.11.1981.

³²⁸ Валькова Л., Саудовская Аравия и США: общность интересов и противоречия, էջ 11:

³²⁹ Валькова Л., Саудовская Аравия: нефть, ислам, политика, էջ 157:

երաշխավորեր վերոնշյալ գործողությունների կատարումը³³⁰: Առաջին անգամ էր, որ ԱՊԼ անդամ-երկրներն անուղղակիորեն ձանաշում էին Խորայելի Պետության գյության իրավունքը՝ նախատեսելով հաշտության հասնելու համար բանակցություններ սկսել³³¹: Եզիպտոսը դրականորեն արձագանքեց Ֆեսի համարաբական ծրագրին:

Այս նույն շրջանում 1982 թ. սեպտեմբերի 1-ին ԱՄՆ-ի նախագահ Ռեյգանը, Կալիֆոռնիայում հեռուստատեսությամբ ելույթ ունենալով, ներկայացրեց մերձավորարքելյան հակամարտության կարգավորման իր տեսակետները, որոնք բաղաքական շրջանակներում ստացան Ռեյգանի ծրագիր կամ Ռեյգան-Շուլցի դոկտրինա անվանումը³³²: Համաձայն այս նախագծի՝ Պաղեստինի անկախ պետության փոխարեն պետք է կազմավորվեր պահեստինյան ինքնավարություն, Խորայելը պետք է ընդուներ 242-րդ բանաձևը, սակայն պետական սահմանների հարցը պետք է ճշտվեր իրական խաղաղության հաստատումից հետո, իսկ Երուսաղեմը պետք է լիներ միասնական և անբաժան³³³: Հաջորդ օրը՝ սեպտեմբերի 2-ին, Խորայելի կառավարությունը մերժեց Ռեյգանի ծրագրի բոլոր դրույթները³³⁴: Պաղեստինցիներն ու արաբական երկրների մեծ մասը Ռեյգանի նախագիծն անբավարար համարեցին պահեստինյան ժողովրդի օրինական իրա-

³³⁰ Policy Watch: Arab League Summit Conferences 1964-2000, October, 19, 2000, Issue N 496; Дмитриев Е., Ближневосточный конфликт, с. 219; Middle East International, L., 17.08.1982, p. 3; The Middle East Journal, Wash., Winter, 1983, vol. 37, N 1, p. 71.

³³¹ Палестинские документы: 280 избранных документов 1839-1987 гг., М., 1989, с. 438.

³³² Нотин А., Алексеев А., Палестинское движение сопротивления: новые условия борьбы, Азия и Африка сегодня, N 1, М., 1983, с. 9.

³³³ Ամբողջական տերսող տե՛ս Բյոլլետեն палестинского съезда в США, ноябрь, М., 1982, с. 15-18.

³³⁴ Стефанкин В.А., На службе агрессии, Киев, 1984, с. 83.

վունքների իրականացման համար³³⁵, որը կապված էր նաև ծրագրում ՊԱԿ-ն անտեսելու փաստի հետ: Արևմուտքում հաճախ էին նշում, որ ԱՄՆ-ի նախագահը նման նախաձեռնությամբ փորձել է վերականգնել իր երկրի խարիսխած դիրքերը Լիբանանում իսրայելական ազրեսիայից հետո: Իրականում Ռեյզանի նախագիծն ավելի խորացրեց մերձավորարևելյան կարգավորման գործընթացում առկա տարածայնությունները մասնակից կողմերի միջև³³⁶:

Ծրագրի առաջքաշման սկզբնական շրջանում Եզիպտոսը չարձագանքեց դրան: Սակայն այն բանից հետո, եթե ԱՄՆ-ի պաշտպանության նախարար Վ. Ուայնբերգը 1982 թ. Սեպտեմբերի 5-ին Կահիրեին խոստացավ դեռևս Սահարի օրոր պահանջվող ռազմական տեխնիկայի տեսականին՝ ամերիկյան ծրագրին հավանություն տալու պայմանով³³⁷, հաջորդ օրը նախագահ Մուրարարը հայտարարեց, որ պաշտպանում է ԱՄՆ-ի նախագահի՝ մերձավորարևելյան նախաձեռնությունը: Ավելին, Մուրարարը փորձեց ուրվագծել Ռեյզանի և համարարական ծրագրերի միջև եղած ընդհանրությունները³³⁸: Ռեյզանի ծրագիրը դրական քայլ համարելով մերձավորարևելյան հակամարտության կարգավորման գործում՝ նա արաբներին կոչ արեց օգտվել ընձեռնված հնարավորությունից³³⁹: Իր հերթին 1982 թ. Հոկտեմբերին Վաշինգտոնը հայտարարեց, որ Ռեյզանի առաջարկի և Ֆեսի համարարական ծրագրի միջև գոյություն ունեցող տարբերությունները հաղթահարելի են: Ինչ վերաբերում է Ֆեսի նախաձեռնությանը, ապա այն փորձում էր արաբ-իսրայելյան հակամարտության կարգավորման նպատակով ընդհանուր եղ-

³³⁵ ООН, палестинский вопрос 1979-1990, Нью Йорк, М., 1991, с. 52.

³³⁶ Михайлов Г.М., Западный берег реки Иордан и сектор газа под гнетом израильских колонизаторов, М., 1985, с. 57.

³³⁷ Washington Post, Wash., 06.09.1982.

³³⁸ Նոյն տեղում:

³³⁹ Кошин В.С., Палестинский фактор во внешней политике стран Северной Африки, Африка N 4, М., 1991, с. 33.

բեր ստեղծել արաբական աշխարհի չափավոր և պահպանողական վարչակարգերի միջև³⁴⁰:

1983 թ. փետրվարի 14-22-ը Ալժիրում տեղի ունեցած Պաղեստինի ազգային խորհրդի 16-րդ նիստը մերժեց Ռեյզանի ծրագիրը³⁴¹:

1984 թ. փետրվարին բանակցություններ սկսվեցին Ռեյզանի, Հորդանանի թագավոր Հուսեյնի և Մուֆարաքի միջև, որոնց արդյունքում կողմերի միջև տարածայնություններն ակնհայտ դարձան³⁴²: Պաղեստինյան խնդիրը կապելով լիբանանյան ճգնաժամի հետ՝ Մուֆարաքը Ռեյզանին հայտնեց, որ կայուն կարգավորման կարելի է հասնել միայն Լիբանանից խրայելական զորքերի լիակատար դուրսքերումով³⁴³: Նոյն թվականի դեկտեմբերին Կահիրեռում տեղի ունեցած բանակցություններից հետո, Մուֆարաքը և Հորդանանի թագավոր Հուսեյնը հայտարարեցին, որ խնդրի կարգավորումը հնարավոր կլինի միայն բանակցություններին շահագրգիռ բոլոր կողմերի, ներառյալ ՊԱԿ-ի մասնակցությամբ³⁴⁴:

Նպատակ ունենալով հետ չմնալ ԱՄՆ-ից մերձավորաբեկյան հիմնահարցերում, 1982 թ. սեպտեմբերի սկզբին ԽՍՀՄ-ն առաջ քաշեց մերձավորաբեյան խնդրի իր տարրերակը, որ հայտնի է որպես Բրեժնևի ծրագիր, համաձայն որի՝ խրայելական զորքերը պետք է դուրս բերվեին 1967-ին և հետազայում Խրայելի բռնազավթած բոլոր տարածքներից, ներառյալ Լիբանանի հարավը, պետք է վերականգնվեին Պաղեստինի արաբ ժողովովի իրավունքները, ընդհուած մինչև անկախ պետականության ձեռքբերում, իսկ Արևելյան Երուսաղեմը պետք է ընդգրկվեր

³⁴⁰ Christian Science Monitor, 1982, September, 13.

³⁴¹ Final Resolution Adopted by Palestine National Council, (Sixteenth Session), Algiers, February, 14-22, 1983, G.P.S., N 47, vol. 12, 1983, p. 250-254.

³⁴² Дипломатический вестник, М., 1983, с. 102.

³⁴³ Ковтунович О., Ближневосточный конфликт в 1984 году, Международный ежегодник: политика и экономика, М., 1985, с. 214.

³⁴⁴ Christian Science Monitor, 1984, September, 13.

պաղեստինյան պետության մեջ: Այս բոլոր դրույթները պետք է իրազործվեին ԱԽ-ի երաշխավորությամբ³⁴⁵:

1983 թ. մարտին բանակցություններ սկսվեցին Հորդանանի Հուսեյն թագավորի և Արաֆաթի միջև, որոնք վերաբերում էին Արևմտյան ափի և Գազայի Հորդանանի հետ դաշնության կամ համադաշնության ստեղծմանը³⁴⁶: Հատ եռթյան Հուսեյն թագավորի ծրագիրը Ռեյզանի և Ֆեսի ծրագրերի փոխգիծումային տարբերակն էր և սահմանում էր ապագայում պաղեստինյան անկախ պետության հոչակումը: 1983 թ. վետրվարի 14-22-ին Ալժիրում XVI նստաշրջանի ընթացքում Պաղեստինի ազգային խորհուրդն ընդունեց հորդանանա-պաղեստինյան համադաշնության սկզբունքները, սակայն պայմանով, որ մասնակից յուրաքանչյուր անդամ հանդես գար որպես անկախ պետություն³⁴⁷:

Եզիպտոսի նախագահը ձգտում էր ՊԱԿ-ը ներգրավել Իսրայելի հետ անմիջական բանակցություններում, որի հիմքում կլիներ 242-րդ բանաձերը: Մուբարաքը փորձում էր պաղեստինյան խնդրի կարգավորման համար միավորել Հորդանանի և ՊԱԿ-ի ջանքերը, սակայն քենիդեփյան շրջանակներում: Եզիպտոսի նախագահը կողմ էր նաև Հորդանանի հետ Պաղեստինի դաշնության զաղափարին և սատարում էր դրան: Արաֆաթն ամեն ինչից առավել ձգտում էր, որպեսզի Եզիպտոսը մասնակից դարնա պաղեստինյան խնդրի կարգավորման գործընթացին, քանի որ Եզիպտոսը հավակնություն չուներ պաղեստինյան տարածքների նկատմամբ³⁴⁸: Այդ իսկ պատճառով Արաֆաթն առա-

³⁴⁵ Носенко В.И., Подход СССР к ближневосточному конфликту в период перестройки 1985-1991 гг., Перестройка в СССР и региональные конфликты в "третьем мире", М., 1992, с. 62.

³⁴⁶ Пырлин Е.Д., 100 лет противоборства: Генезис, эволюция, современное состояние и перспективы решения палестинской проблемы, М., 2001, с. 263.

³⁴⁷ Киселев В.И., Палестинская проблема в международных отношениях, № 191.

³⁴⁸ Sahliyeh E.F., The PLO After the Lebanon War, L., 1986, p. 45.

շինն էր արաբ առաջնորդներից, որ ձգտում էր վերականգնել հարաբերությունները Կահիրեի հետ: Ֆարհի առաջնորդներից Խալիդ Հասանի կարծիքով Եղիպտա-պաղեստինյան սերտ շփումներն արդյունքն են այն փաստի, որ Մուրարաքը, ի տարբերություն Սադաթի, զգալիորեն հեռացել է քեմփենիոյան համաձայնագրերի շրջանակներից³⁴⁹: Սակայն Պաղեստինի ազատագրության ազգային Ճակատի առաջնորդ Ժորժ Զաքաշը բացում էր Կահիրեի հետ ցանկացած հարաբերություն: Նա առաջարկում էր Արաֆարին հեռացնել պաղեստինյան դիմադրության շարժման շարքերից՝ Եղիպտոսի հետ մերձենալու համար³⁵⁰:

1985 թ. փետրվարի 11-ին ՊԱԿ-ի և Հորդանանի միջև ստորագրվեց համաձայնագիր³⁵¹: Առաջ բաշվեց ՍԱԿ-ի սկզբունքների և դաշնության գաղափարի վրա հիմնված մերձավորարևելյան հակամարտության խաղաղ կարգավորման համատեղ նախաձեռնություն՝ հետևյալ սկզբունքներով՝ համապարփակ խաղաղության ակնկալիքով՝ իսրայելյան զորամիավորումների դրւուրերում 1967 թ. գրավված տարածքներից, պաղեստինյան ժողովրդի ինքնորոշման իրավունքի ճանաչում՝ Հորդանանի և Պաղեստինի արաբական պետություններին առաջարկվող համադաշնության ներքո: Վերոնշյալ սկզբունքների շուրջ բանակցությունների իրագործում ՍԱԿ-ի ԱԽ-ի 5 մշտական անդամների ներկայացուցիչների մասնակցությամբ միջազգային կոնֆերանսում, որին պաղեստինյան և հորդանանյան կողմերը մասնակցելու էին միասնական պատվիրակությամբ³⁵²:

Դաշնություն ստեղծելու գաղափարը, որի հիմքում ընկած էր «հող խաղաղության դիմաց» սկզբունքը որպես պաղեստին-

³⁴⁹ خالد الحسن، الإنقاضة، تونس، 1988، ص. 15.

³⁵⁰ ح. نافع، أزمة منظمة التحرير الفلسطينية، بيروت، 1984، ص. 55.

³⁵¹ Навайсех Мустафа Хамуд Хусейн, Иордано-израильский мирный процесс (1991-1994), Автореферат, М., 1998, с. 13.

³⁵² Palestine P.L.O., Information Bulletin, N 51, August-September, Bonn., 1986, p. 12-14.

յան խնդրի լուծման տարբերակ, զգալիորեն համապատասխանում էր Եգիպտոսի մոտեցմանը պաղեստինյան հարցին³⁵³:

Հորդանանա-պաղեստինյան համաձայնագիրն անհանգրատություն առաջացրեց նաև Մոսկվայում, քանի որ այն բավական մոտ էր Ռեյզանի նախագծին³⁵⁴:

Վերոնշյալ նախաձեռնությունը, սակայն, բախվեց բանակցություններին պաղեստինցիների մասնակցության վերաբերյալ ԱՄՆ-ի և Իսրայելի անհանդուրժողական վերաբերմունքին: Համաձայնելով պաղեստինյան ներկայությանը՝ ԱՄՆ-ը և Իսրայելը պահանջում էին, որպեսզի հորդանանա-պաղեստինյան պատվիրակության պաղեստինցի անդամների թեկնածությունները հաստատեն ամերիկյան և իսրայելական կողմերը: ԱՄՆ-ը և Իսրայելը պնդում էին, որ բանակցություններին մասնակից պաղեստինյան բանագնացները լինեին գրավյալ տարածքների ներկայացուցական մարմինների հեղինակավոր դեկավարներից, որոնք կողմ էին Իսրայելի հետ խաղաղ գոյակցությանը³⁵⁵:

Ամմանյան համաձայնագիրը դատապարտեցին արաբական առաջադեմ վարչակարգերը Սիրիայի զիսավորությամբ, ինչպես նաև պաղեստինյան կազմակերպությունների մեծ մասը³⁵⁶: Սիրիական թերթերը գրում էին, որ ամմանյան համաձայնագիրը նույնքան վտանգավոր էր, որքան և քեմփենիյան համաձայնագրերը: Իսկ Պաղեստինի ազատազրական դեմոկրատական ճակատի առաջնորդ Ն.Հավատման անվանում էր այն ծուլակ, որի նպատակն էր ոչնչացնել ՊԱԿ-ը: Իսկ արաբական պահպանդական վարչակարգերը Եգիպտոսի զիսավորությամբ ողջունեցին Ամմանյան համաձայնագիրը:

1985-1986 թթ. ընթացքում թագավոր Հուսեյնը փորձում էր ՊԱԿ-ին համոզել նաև ընդունել ՍԱԿ-ի 242-րդ բանաձերը՝ որպես

³⁵³ Egyptian Diplomacy During 1985, Cairo, 1986, p. 14.

³⁵⁴ Носенко В.И., նշվ. աշխ., էջ 70:

³⁵⁵ US Department of State Dispatch, Vol. 2, No. 25, June 24, N.Y., 1991, p. 459.

³⁵⁶ طريق حداد، الإنفاق الأردني الفلسطيني 1947-1988، عمان، 1988، ص. 69

հորդանանա-պաղեստինյան համաձայնագրի հիմք: Սակայն Արաֆաթն ընդդիմանում էր Հուսեյնի պահանջին, որն էլ հանգեցրեց ՊԱԿ-ի դեկավարության հետ վերջինիս շփումների դադարեցմանը: Այս մասին պաշտոնապես հայտարարվեց 1986 թ. փետրվարին, իսկ 1986 թ. հուլիսին Հորդանանում փակվեցին Ֆարհի բաժանմունքները³⁵⁷:

Եզիատոսի նախազահն առաջարկում էր ամմանյան համաձայնագիրն իրականացնել երեք փուլերով՝ ԱՄՆ-ի հովանավորությամբ հորդանանա-պաղեստինա-խրայելյան անմիջական բանակցություններով, որին կմասնակցեր նաև Եզիատոսը, այնուհետև տեղի կունենային բանակցություններ Խրայելի և հակամարտության մեջ ներգրավված արաբական մեացած երկրների միջև³⁵⁸: Ավարտական փուլում նախատեսվում էր հրավիրել կոնֆերանս ՄԱԿ-ի ԱԽ-ի մշտական անդամների և շահագրգիռ կողմերի մասնակցությամբ: Սակայն Մութարաքի ծրագիրը դրական արձագանք չգտավ ոչ արաբների մոտ, ոչ Խրայելում, չնայած առանձին քաղաքական գործիչներ, այդ թվում Եզիատոսում ԱՄՆ-ի նախկին դեսպան Հերման Էյլթսը, դրական էին համարում Մութարաքի փուլային նախաձեռնությունը³⁵⁹:

1985 թ. Մարտին՝ Վաշինգտոն կատարած իր այցելության ժամանակ, Եզիատոսի նախազահը հանդիպեց ԱՄՆ-ի հրեական կազմակերպությունների դեկավարների մեծ մասի հետ, որոնց հետ ըննարկվեց պաղեստինյան խնդիրի կարգավիրման Մութարաքի փուլային նախաձեռնությունը, համաձայն որի՝ խրայելական գորքերը պետք է դուրս բերվեին 1967 թ.-ին գրավված տարածքներից, և այնտեղ անցկացվեին տեղական ինքնակառավարման մարմինների ընտրություններ: Սակայն ԱՄՆ-ի հրեական կազմակերպությունները կողմ էին մերձավորարեւել-

³⁵⁷ فلسطين الثورة، نيوساي، جزء 14، ص. 15.

³⁵⁸ Lesch A.M., Tessler M., Israel, Egypt and the Palestinians: From Camp David to Intifada, Indian Univ. Press, 1989, p. 233.

³⁵⁹ Washington Reports on Middle East Affairs, H.Eilts, U.S.-Egypt, Friendship, March 18, 1985, p. 3.

յան հակամարտության կարգավորմանը բացառապես իսրայելապաղեստինյան անմիջական բանակցությունների միջոցով, առանց նախապայմանների: Նրանք կոչ էին անում Թել Ավիվ վերադարձնել Եզիդոսության դեսպանին, որը, ինչպես հայտնի է, հետ էր կանչվել Սաբրայում և Շատիլայում տեղի ունեցած ողբերգական ռեպրենտատուրայի պատճառով: Միաժամանակ նրանք Եզիդոսության առաջարկեցին ընդարձակել Իսրայելի հետ տնտեսական հարաբերությունները, որոնք զգալիորեն անկում էին ապրել՝ կապված լիբանանյան ճգնաժամի հետ: Հրեական կազմակերպությունների ղեկավարները Մուլարաքին հանձնցին փուլային նախաձեռնության վերաբերյալ իրենց չեղորությունն արտահայտած 98 կոնքրետականների նամակը³⁶⁰:

Ուշագրավ է, որ հրեական առանձին կազմակերպություններ, մասնավորապես Իսրայելա-պաղեստինյան հաշտության ամերիկա-խրայելական խորհուրդը և Վաշինգտոնի հրեական կազմակերպությունը, սատարեցին Մուլարաքի նախաձեռնությունը: Եզիդոսության արտաքին գործերի նախարար Աբդ ալ-Մաղդի հետ հանդիպման ժամանակ նրանք ողջունել էին Մուլարաքի գործադրած ջանքերը՝ հավանության արժանացնելով Եզիդոսության նախաձեռնությունը³⁶¹:

1987 թ. ապրիլին Ալժիրում կայացած Պաղեստինի Ազգային խորհրդի 18-րդ նիստին Ամմանյան հոչակագիրը մերժվեց³⁶²: Ամմանյան համաձայնագրի ձախողությունը հետո Եզիդոսությունը սատարել ՄԱԿ-ի հովանավորությամբ Մերձավոր Արևելքում կարգավորման միջազգային կոնֆերանս հրավիրելու գա-

³⁶⁰ Washington Reports on Middle East Affairs, Jorj F. Smalley, Lobby Activities, March 18, 1985, p. 3.

³⁶¹ محمد اليوسفى، فلسطين الثورة، عدد 739، ص. 39.

³⁶² Дадиани Л.Я., Основные направления экспансионистской политики Израиля, Народы Азии и Африки, N 1, М., 1988, с. 35.

դափարը՝ բոլոր շահագրգիռ կողմերի մասնակցությամբ, ներառյալ ՊԱԿ-ը և ՄԱԿ-ի ԱԽ-ի 5 մշտական անդամները³⁶³:

Նպատակ ունենալով ՊԱԿ-ը ներկայացնել Արևմուտքին և Իսրայելին՝ որպես ընդունելի գործընկեր նախատեսվող բանակցություններում, Եզիջտուսն առաջ քաշեց միավորված արաբական պատվիրակություն կազմելու գաղափարը, որտեղ պահեստինյան պատվիրակը կիմեր արաբական ընդհանուր պատվիրակության անդամներից մեկը³⁶⁴: Սակայն ամերիկյան վարչակազմը մերժեց այդ առաջարկը, քանի դեռ ՊԱԿ-ը չէր ընդունել 242-րդ բանաձևը³⁶⁵:

ՊԱԿ-ին ԱՄՆ-ի հետ բանակցությունների մեջ ներգրավելու Մութարաքի փորձերն առաջ բերեցին պաղեստինյան կազմակերպությունների մեծ մասի բացասական վերաբերմունքը, ինչն իր արտացոլումը գտավ 1987թ. Ալժիրում Պաղեստինի Ազգային խորհրդի 18-րդ նստաշրջանում հակաեզիջտական բանաձևի ընդունմամբ³⁶⁶: Բանաձևը դատապարտում և պահանջում էր չեղյալ հայտարարել քեմփինիյան համաձայնագիրը և Եզիջտահյայելական հաշտության մասին պայմանագիրը³⁶⁷: Ի պատասխան՝ Եզիջտուր 1987 թ. ապրիլի վերջին Կահիրեում փակեց ՊԱԿ-ի բոլոր ներկայացուցությունները³⁶⁸:

Շնայած երկկողմ հարաբերությունների վատթարացմանը՝ 1987 թ. հուլիսին տեղի ունեցավ Մութարաքի և Արաֆաթի հանդիպումը Աղիս Աբեբայում, որտեղ Պաղեստինի առաջնորդը համաձայնեց միջազգային կոնֆերանս հրավիրելու Մութարաքի առաջարկի հետ: Մութարաքն ի ցուց դրեց, որ պատրաստ է

³⁶³ Павлов О., Арабо-израильский конфликт и арабские страны (1987-1988гг.), Специальный бюллетень, N 1, М., 1989, с. 50.

³⁶⁴ Նոյն տեղում:

³⁶⁵ Washington Reports on Middle East Affairs, նշվ. աշխ., էջ 6:

³⁶⁶ Итоговый документ 18-ой сессии Национального Совета Палестины, Алжир, 1987, с. 1-15.

³⁶⁷ Նոյն տեղում, էջ 6:

³⁶⁸ Новейшая история арабских стран Африки, նշվ. աշխ., էջ 87:

Միջնորդությամբ հանդես գալու ՊԱԿ-ի, Հորդանանի, ԱՄՆ-ի և Իսրայելի միջև: «Ալ-Իթթիհադ» թերթին տված հարցազրույցում Սուլարաքը նշեց, որ Եգիպտա-իսրայելական պայմանագիրը չի հակասում պաղեստինյան շահերին. «Մենք չենք խախտել 1950 թ. կողեկտիվ անվտանգության մասին պայմանագիրը և չենք ցանկանում զիջել մեկ թիզ արաբական հող, մենք չենք մասնակցելու Իսրայելի հետ բանակցություններին առանց պաղեստինցիների»³⁶⁹: Իր հերթին Եգիպտոսի արտաքին գործերի պետնախարար Բ. Ղալին հայտարարեց, որ Եգիպտոսի և Իսրայելի միջև հարաբերությունները լիարժեք չեն կանոնավորվի առանց մերձավորարելյան հակամարտության վերջնական կարգավորման³⁷⁰:

1980-ականների առաջին կեսին պաղեստինյան խնդրի լուծման հարցում ընդհանուր ջանքերի նվազեցումը՝ կապված մասնավորապես իրաքա-իրանյան պատերազմի, լիբանանյան ճգնաժամի, միջարաբական հակասությունների հետ, ստիպում էին ՊԱԿ-ին նոր քայլեր ձեռնարկել, որը ուշադրության կենտրոնում կպահեր պաղեստինյան խնդիրը: Հետազայում նման ազդակ դարձավ պաղեստինյան ինթիֆադան կամ ժողովրդական ընդվզումը ապստամբությունը:

1980-ականների երկրորդ կեսին ՊԱԿ-ը պաղեստինյան խնդրի կարգավորման հարցում բացառեց ենթակայությունը, խնամակալությունը կամ կախյալ վիճակը³⁷¹: Աստիճանաբար Արաֆաթը կողմնորոշվում էր դեպի արաբական չափավոր վարչակարգերը՝ փորձելով զգուշորեն համաձայնության եզրեր գտնել նաև ԱՄՆ-ի և Արևմուտքի հետ³⁷²:

1987 թ. դեկտեմբերի 9-ին իսրայելական զինվորների կողմից պաղեստինյան երեք երիտասարդ բանվորների սպանու-

³⁶⁹ 12.12.1987 على

³⁷⁰ Kenneth S., Egyptian-Israel Relations, Middle East Review of International Affairs, Issue, 3, 1997, p. 65.

³⁷¹ المستقبل، باريس، 1986، عدد 705.

³⁷² الفرسان، باريس، 1987، عدد 506.

թյունը (Նրանք ամեն օր, անցնելով այսպես կոչված կանաչ զիջը, ուղևորվում էին Խրայել՝ աշխատանքի) հանգեցրեց Գազայում՝ Զարայիա ճամբարում, բողոքի ցույցերի, որոնք հետագայում ընդգրկեցին ողջ ճամբարը՝ դառնալով պաղեստինյան հուզումների սկիզբ³⁷³: Ինթիֆադան անակնկալ էր ոչ միայն ԱՄՆ-ի և Խրայելի, այլ նաև արաբական երկրների համար, որտեղ համզված էին, որ ճանաժամը ՊԱԿ-ի ներսում թույլ չի տա կենտրոնացված գործողություններ ձեռնարկել և հանդես գալ միասնական ճակատով³⁷⁴:

Մինչև ինթիֆադան ՊԱԿ-ը շատ հաճախ ստիպված էր այս կամ այն արաբական երկրի քաղաքական ուղղեցում լինել: Մինչեղու ինթիֆադայից հետո ՊԱԿ-ը հարաբերականորեն ավելի անկախ դարձավ, քանի որ ամուր հենք ուներ իր հայրենիքում և լիովին արտահայտում էր սեփական ժողովրդի կամքը: Ինթիֆադան ստիպեց հորդանանյան վարչակարգին մեկընդմիշտ հրաժարվել պաղեստինյան ժողովրդին ներկայացնելու իրավունքից: Ինթիֆադայի ձեռքբերումների շարքում կարելի է դասել նաև ՊԱԿ-ի իրատեսական դիվանագիտության իրագործումը, որը խարսխված էր խաղաղության ձեռքբերման նոր մոտեցումների վրա: Ինթիֆադան առավել քան երբեք ամրապնդեց Արաֆարի դիրքերը ՊԱԿ-ում:

Այդ ժամանակահատվածում ԱՄՆ-ը հանդես եկավ առանձին քաղաքական նախաձեռնություններով, որոնցից առավել ճանաչում գտավ ԱՄՆ-ի պետքարտուղար Շուլցի՝ 17 կետից կազմված ծրագիրը³⁷⁵: Վերջինս 1988 թ. մարտին ներկայացրեց իր ծրագիրն Խրայելի, Հորդանանի, Եզիդուսուի և Սիրիայի կառավարություններին՝ անտեսելով ՊԱԿ-ին և մեղադրելով նրան անհեռատեսության մեջ: Բնականաբար ՊԱԿ-ը մերժեց Շուլցի ծրագիրը:

³⁷³ سالم النببي، الإنقاضة، بيروت، 1991، ص. 32.

³⁷⁴ Информационный отчет, N 18, Тунис, 1990, с. 12.

³⁷⁵ Пырлин Е.Д., Трудный и долгий путь к миру: Взгляд из Москвы на проблему ближневосточного урегулирования, М., 2002, с. 316.

1988 թ. հուլիսին Անվտանգության խորհուրդն ընդունեց 605-րդ բանաձևը, որում բռնազավթված Արևմտյան ափը և Գաղայի հատվածը հիշատակված էին որպես պաղեստինյան տարածքներ: Դրան հաջորդած 607-րդ և 608-րդ բանաձևերը ևս վերահաստատում էին այս փաստը:

1988 թ. հուլիսի 31-ին Հուսեյն բազավորը հայտարարեց, որ հրաժարվում է Արևմտյան ափից³⁷⁶: Հուսեյնի քայլը պայմանավորված էր ԱԽ-ի 605-րդ բանաձևով՝ համաձայն որի, ինչպես նշեցինք, ՄԱԿ-ը Արևմտյան ափը և Գաղան ճանաչում էր որպես պաղեստինյան բռնազավթված տարածքներ՝ այդպիսով ի չիք դարձնելով Շուշի ծրագիրը³⁷⁷:

Այս նոր իրավիճակում ՊԱԿ-ը, դառնալով պաղեստինյան տարածքների իրական պատասխանատուն, ստիպված էր փոփոխության ենթարկել իր քաղաքական հայեցակարգը³⁷⁸:

1988 թ. նոյեմբերի 12-15-ը Ալժիրում իրավիրվեց Պաղեստինի Ազգային խորհրդի 19-րդ արտահերթ նիստը, որտեղ ընդունվեց հոչակագիր Պաղեստինի արաբական անկախ պետության մասին՝ Արևելյան Երուսաղեմ մայրաքաղաքով, որում շեշտվում էին նաև Իսրայելի Պետության դե ֆակտո ճանաչումն ու վերջինիս հետ խաղաղ գրյակցության պատրաստակամությունը³⁷⁹: Հոչակագրում նշված էր, որ Պաղեստինի Ազգային խորհրդն ընդունում է 242-րդ և 338-րդ բանաձևերը՝ հաշվի առնելով Պաղեստինի ժողովրդի օրինական իրավունքների ապահովման առաջնահերթությունը³⁸⁰: Փաստորեն ՊԱԿ-ն ընդունեց

³⁷⁶ الرأي، عمان، 1988.

³⁷⁷ عبد الوهبي أبو طه، الإنفاضة، بيروت، 1989، ص. 58.

³⁷⁸ خالد الحسن، الإنفاضة، تونس، 1988، ص. 56.

³⁷⁹ Палестинская декларация национального совета Палестины, 19 сессия ~ "Сессия Итифады и национальной независимости", Алжир, 1988, с. 7-8.

³⁸⁰ Նոյն տեղում:

Իսրայելի Պետության գոյության իրավունքը³⁸¹: Ալժիրյան հոչակագրի հիմքում ընկած էին պաղեստինյան խնդրի կարգավորման նոր մոտեցումները: Պաղեստինի Ազգային խորհրդի հայտարարությունը ճանաչեցին միջազգային հանրության 115 անդամներ, դեմ արտահայտվեցին միայն ԱՄՆ-ը և Իսրայելը³⁸²: ՊԱԿ-ի կողմից 242-րդ և 338-րդ բանաձևերի ընդունումից հետո՝ 1988 թ. Դեկտեմբերին, Թունիսում ԱՄՆ-ի դեսպան Պելետրոյի և ՊԱԿ-ի գործկումի անդամ Արդ ալ-Ռաբբոյի միջև սկսվեց երկխոսություն, որը ՊԱԿ-ի և ԱՄՆ-ի միջև շփումների որոշակի ակտիվացման արդյունք էր³⁸³: Այս երկխոսությունը թեև որևէ հստակ արդյունք չարձանագրեց, սակայն վկայում էր այն մասին, որ Վաշինգտոնը գիտակցում էր ՊԱԿ-ի՝ Պաղեստինի արար ժողովրդի օրինական ներկայացուցիչը լինելու հանգամանքը:

Եզիպտոսը ողջունեց Պաղեստինի Ազգային խորհրդի ալժիրյան հանդիպման որոշումները: Արդ Ալ-Շագիթը հայտարարեց, որ որպես արարական պետություն՝ Եզիպտոսի համար պարտադիր են համարաբական որոշումները, ուրեմն և Ալժիրի որոշումը, թեպեսև Եզիպտոսը չէր մասնակցել այդ հանդիպմանը:

Կրկին անդրադառնալով ինթիֆադային՝ նշենք, որ այն հարաբերականորեն խաղաղ բնույթ էր կրում՝ դրանով իսկ արժանանալով միջազգային հանրության ուշադրությանը: Եզիպտոսն ինթիֆադայի առաջին ամիսներից արձագանքեց դրան ինչպես ժողովրդական, այնպես էլ պաշտոնական մակարդակներով: Եզիպտոսի հարյուրավոր քաղաքացիներ, ի պաշտպանություն ինթիֆադայի, ցույցեր կազմակերպեցին³⁸⁴: Հասկանալի

³⁸¹ Mufti M., Israel and the Arab States: The Long Road to Normalization, Israel's First Fifty Years, Florida, 2000, p. 88.

³⁸² Киселев В.И., Некоторые особенности структуры власти и социально-политических институтов в Палестине, Арабские страны Западной Азии и Северной Африки, вып 5, М., 2002, с. 119.

³⁸³ Пырлин Е. Д., 100 лет противоборства, նշվ. աշխ., էջ 276:

³⁸⁴ الوفد الجديد، القاهرة، 1988، عدد 734، ص. 3.

է, որ նման միջոցառումներն աջակցություն էին գտնում Երկրի իշխանությունների շրջանում: Եզիպտոսի Ազգային առաջադիմական կրուսակցության առաջնորդ Խալիդ Մուսի Ադ-Դինը հայտարարեց, որ Եզիպտական ընդդիմադիր շրջանակները ևս սատարում էին ինքիֆադային: Ինքիֆադայի սկսվելուց քառասում օր անց նախազահ Մութարաքը պահանջեց 6-ամսյա ժամկետում դադարեցնել բռնության բոլոր գործողություններն իսրայելցիների և պաղեստինցիների միջև, ինչպես նաև համապատասխան ջանքեր գործադրել խնդրի լրացման ուղղությամբ³⁸⁵: Մութարաքի հայտարարությունը միանշանակ շրնջունվեց, քանի որ այն տվյալ պահին համապատասխանում էր առաջին հերթին Իսրայելի ցանկությանը:

1988 թ. մարտին Կահիրեում գտնվող Մահմուդ Աբբասի (Աբու Մազեն) զլյավորած պաղեստինյան պատվիրակությունից Եզիպտոսի կառավարությունը պահանջեց, որպեսզի ՊԱԿ-ը ճանաչի Իսրայելի Պետության գոյության իրավունքը: Եզիպտոսը պահանջեց չեղյալ համարել պաղեստինյան ազգային կանոնադրության մեջ առկա Իսրայելի ոչնչացման կոչեր պարունակող դրույթը: Այդ քայլը Եզիպտոսի կառավարության կարծիքով դրական միտումներ կառաջացներ մերձավորարեկյան հակամարտության կարգավորման գործընթացում: Կահիրեում Աբու Մազենը Մութարաքին հայտնեց, թե նախ Վաշինգտոնը և Իսրայելը պետք է ճանաչեն պաղեստինյան ժողովրդի իրավունքները: ՊԱԿ-ի գործադիր կոմիտեի անդամ Աբու Մուսատաֆայի մեկնաբանությամբ Եզիպտոսի վարչակարգը կոչ է անում Պաղեստինին մտնել նոր Քեմփ-Դեկոդի մեջ³⁸⁶:

1988 թ. սկզբին Մութարաքը ԱՄՆ և Արևմտյան Եվրոպայի երկրներ կատարած այցերի ընթացքում կարևորեց ՊԱԿ-ի դերը՝ նշելով, որ այն լիարժեք իրավունք ունի ներկայանալու որպես բանակցող կողմ³⁸⁷: Եզիպտոսի նախազահը միջազգային ատյան-

³⁸⁵ الهدف، دمشق، 1989، عدد 942، ص. 36

³⁸⁶ فلسطين الثورة، نicosia، 1989، عدد 703، ص. 10

³⁸⁷ الأهرام، القاهرة، 25.05.1988

ներում զգալի ջանքեր գործադրեց՝ ուղղված ՊԱԿ-ի օրինակարգության ապահովմանը³⁸⁸: Առհասարակ Եզիպտոսը և Սաուսան Արաբիան պաղեստինա-ամերիկյան բանակցությունների սկզբնավորման մեջ մեծ դեր խաղացին:

1989 թ. սեպտեմբերի 26-ին Մութարաքը, հանդիպելով Մեծ Բրիտանիայի վարչապետ Մ. Թերզերին, հայտնեց, որ փորձում է ճնշում գործադրել Արաֆարի վրա, որպեսզի վերջինս հրաժարվի ահարեկչությունից և ճանաչի Խրայելի Պետությունը:

Նոյն շրջանում Մութարաքի հետ բանակցելով համար Կահիրե ժամանած Արաֆարի այցը մեծ աղմուկ բարձրացրեց, քանի որ համընկավ քեմփիդսիյյան համաձայնագրի ստորագրման տասներորդ տարելիցին և Եզիպտոսում Խրայելի նոր դեսպանի հավատարմագրերի հանձնման օրվան³⁸⁹: Եզիպտոսը հայտարեց, որ ճանաչում է ալժիրյան 19-րդ նիստի՝ Պաղեստինի արաբական անկախ պետության հոչակման փաստը, իսկ ՊԱԿ-ի դիվանագիտական ներկայացուցչին դեսպանի կարգավիճակ է շնորհում³⁹⁰:

Եզիպտոսի այդ քայլը մեծ դժգոհություն առաջացրեց Խրայելում, քանի որ խախտում էր քեմփիդսիյյան համաձայնագրերը՝ խոչընդոտելով խաղաղության գործընթացը³⁹¹:

1989 թ. մայիսի 2-ին Փարիզում հանդիպելով Ֆրանսիայի նախագահ Միտերանի հետ՝ Արաֆարը հայտարարեց, որ 1964 թ. ընդունված ՊԱԿ-ի կանոնադրությունը վերանայման կարիք ունի: Միտերանն առաջարկեց դրանում փոփոխել Խրայել Պետության ոչնչացմանը վերաբերող հատվածը, որին Արաֆարը դրականորեն արձագանքեց, ինչը պաղեստինյան մի շարք կազմակերպություններ ընկալեցին որպես դավաճանություն³⁹²:

³⁸⁸. الأهرام، القاهرة، 02.12.1988

³⁸⁹. الحرية، نicosia، 1988، عدد 279، ص. 16.

³⁹⁰. سعود البلاد، 1988، عدد 179، ص. 13.

³⁹¹. الدستور، عمان، 25.11.1988

³⁹². الجبهة، الجزائر، 1989، عدد 74، ص. 13.

1989 թ. սկզբին պաղեստինյան հարցի կարգավորման նոր նախաձեռնությամբ հանդես եկավ Իսրայելի վարչապետ Շամիրը, որն առաջարկեց պաղեստինյան տարածքներում ինքնակառավարման տեղական մարմիններ ձևավորել³⁹³: Միայն դրանից հետո Իսրայելը բանակցություններ կսկսեր այդ տարածքի ապագա կարգավիճակի մասին պաղեստինյան այն պատգամավորների հետ, որոնք կընտրվեին: Շամիրը բանակցությունները պայմանավորում էր միայն ինքնակառավարության պահանջի շրջանակներում³⁹⁴: Սակայն թե՝ ՊԱԿ-ը, թե՝ արաբական երկրների մեծ մասը մերժեցին Շամիրի նախագիծը՝ հանդես գալով միջազգային կոնֆերանսի հրավիրման առաջարկով:

1989 թ. սեպտեմբերի 14-ին նոր նախաձեռնությամբ հանդես եկավ Եզիպոսի նախագահը, որն անվանվեց Մուբարաքի նախագիծ, չնայած նախագահն այն անվանում էր առաջարկություն³⁹⁵: Նախագիծը բաղկացած էր հետևյալ դրույթներից:

1. Իսրայելը պարտավորվելու էր ճանաչել պաղեստինյան տարածքներում անցկացված ընտրությունների ցանկացած արդյունքները:
2. Քվեարկությանը հետևելու համար հարկավոր էր նշանակել միջազգային դիտորդների խոսմբ:
3. Բոլոր ընտրված պաղեստինյան ներկայացուցիչները պետք է օժտված լինեին անձեռնմխելության իրավունքով:
4. Ընտրությունների ընթացքում իսրայելական զորքերը պետք է հեռանային քվեարկության շրջաններից:
5. Իսրայելը պետք է պարտավորվեր վերջնական կարգավորման նպատակով 3-5 ամսվա ընթացքում բանակցություններ սկսել: Այդ շրջանը պետք է անցումային հայտարարվեր:

³⁹³ Նոյեմբերի 1:

³⁹⁴ الشروق، تونس، 15.09.1989

³⁹⁵ الوطن العربي، باريس، 1989، عدد 505، ص. 15

6. Իսրայելը պետք է դադարեցներ շինությունների կառուցումն արաբական տարածքներում:
7. Թեկնածուները պետք է արտահայտվելու իրավունքնենային:
8. Պետք է սահմանափակումներ մտցվեին գրավյալ տարածքներ մուտք գործող իսրայելցիների հանդեպ:
9. Արևելյան Երուսաղեմի պաղեստինցիները պետք է մասնակցեին ընտրություններին:
10. Իսրայելը պետք է ընդուներ «Հող խաղաղության դիմաց» սկզբունքը՝ որպես համապարփակ կարգավորման բաղադրամաս³⁹⁶:

Սուրբարարի ջանքերը, որոնք ճանապարհ էին հարթում դեպի մերձավորարեւելյան հակամարտության համապարփակ կարգավորում, դրական արձագանք գտան Եզիպտոսում³⁹⁷: 1989 թ. հոկտեմբերի 8-ին ԱՄՆ-ի նախագահ Բուշի հետ հանդիպելուց հետո Սուրբարարը հայտարարեց, որ իր ծրագիրը չի կարող դիտվել որպես այլընտրանքային³⁹⁸: Իր հերթին Բուշն ընդգծեց, որ ինսդրի կարգավորման հարցում եզիպտա-ամերիկյան տեսակետները բավական մոտ են: 1989 թ. ՄԱԿ-ի Գլխավոր ասամբլեայի 44-րդ նստաշրջանում Եզիպտոսի նախագահը շեշտեց, որ միջազգային հանրությունը պետք է ճանաչի ՊԱԿ-ը, որովհետև նրանից բացի ոչ մի այլ քաղաքական ուժ չի կարող պաղեստինցիների անկախության ձեռքբերման գործում տարածաշրջանում խաղաղություն ապահովել³⁹⁹:

Սուրբարարի ծրագրի հրապարակմանը հետևեց 1989 թ. սեպտեմբերի վերջին ՊԱԿ-ի նախագահ Յասեր Արաֆաթի այցելությունը Կահիրե, որի ընթացքում նա հայտարարեց, որ ամբող

³⁹⁶ Kriesberg L., International Conflict Resolution; The U.S. – USSR and Middle East Cases, L., 1992, p. 67.

³⁹⁷ 25.01.1988، الأهرام، القاهرة،

³⁹⁸ 27.10.1989، التضامن، لندن،

³⁹⁹ Ghali B. B., Egyption Diplomacy in 1989, Cairo, 1990, p. 48.

ջովին պաշտպանում է Սուրբարաքի մերձավորարևելյան խնդրի կարգավորման ծրագիրը⁴⁰⁰:

1989 թ. սեպտեմբերի 11-ին Արաֆաթի քաղաքական խորհրդական Բասամ Աբու Շարիֆը ֆրանսիական ռազմույթին տված հարցազրույցում հայտարարեց, որ «պատրաստ է ուղևորվել Երուսաղեմ կամ Թել Ավիվ, որպեսզի բանակցի իսրայելցիների հետ»: Նա նաև պատրաստակամություն հայտնեց հանդիպելու Իսրայելի Աշխատանքի կուսակցության անդամներից մեկի հետ, որպեսզի քննարկի Մուրարաքի նախագիծը⁴⁰¹:

Շարիֆի հայտարարությունը մեծ աղմուկ բարձրացրեց, որից հետո ՊԱԿ-ը հայտարարեց, որ Շարիֆը չի արտահայտել ՊԱԿ-ի իրական ցանկությունը: Իրականում Արաֆաթը տեղյակ էր եղել Շարիֆի հայտարարությանը, այլապես շատ թանկ կվճարեր դրա համար:

1989 թ. սեպտեմբերի 20-ին Թունիսում ՊԱԿ-ի գործկումի նիստին դարձյալ ոչ միանշանակ դիրքորոշում ձևավորվեց Մուրարաքի նախաձեռնության հարցում: Հնչեցին որոշ տեսակետներ, որոնք համաձայն էին ընտրությունների անցկացման դրույթի հետ⁴⁰²:

ՊԱԿ-ի վրա ճնշում գործադրելու նպատակով Եզիդոսուին միացավ նաև Սաուդյան Արաբիան: 1989 թ.-ից ի վեր Սաուդյան Արաբիան և Պարսից ծոցի արաբական երկրների մեծ մասը սկսեցին կրաստել ՊԱԿ-ին տրամադրվելիք ֆինանսական օգնությունը, որն ամբողջովին դադարեցվեց 1990 թ. իրաքա-քուվեյթյան գզնաժամի նկատմամբ ՊԱԿ-ի դիրքորոշման հետևանքով: Ամերիկա-պաղեստինյան բանակցությունների 9-րդ փուլի ժամանակ 1989 թ. Սեպտեմբերին, Թունիսում ԱՄՆ-ի դեսպան Պելետրիոն ՊԱԿ-ին հայտնեց, որ Վաշինգտոնը սատարում է Շամիրի նախաձեռնությունը և քաջալերում Մուրարաքի նախագիծը: Ամերիկյան կողմը հայտնեց, որ եթե ՊԱԿ-ը ցանկանում է շա-

⁴⁰⁰ ТАСС БПИ, N. 149, M., 10.02.1989, с. 24.

⁴⁰¹ الشعب، بغداد، 20.09.1989

⁴⁰² الوطن العربي، باريس، 21.09.1989

րունակել երկխոսությունը, ուրեմն պետք է ընդունի առաջարկ-ված նախաձեռնությունները⁴⁰³:

1989 թ. հոկտեմբերի 5-ին «Ախրար ալ-Յում» թերթին տված հարցազրույցում Մուբարաքն Արաֆաթին մեղադրեց պատասխանատվության բացակայության և բաղաքական նիհիլիզմի մեջ⁴⁰⁴: Սակայն, այդուամենայնիվ, Եզիպտոսի և ՊԱԿ-ի միջև բանակցությունները շարունակվում էին: Այդ շրջանում նույնիսկ լուրեր տարածվեցին Իսրայելի և ՊԱԿ-ի միջև Եզիպտոսի հովանավորությամբ սպասավոր գաղտնի բանակցությունների մասին: Կարծիք կար, որ պաղեստինյան պատվիրակությունը կձևավորվի բոնազավթված տարածքների պաղեստինցիներից⁴⁰⁵: Չնայած Եզիպտոսի նախագծի բոլոր գիշումներին՝ ի տարբերություն Ֆեսի, Իսրայելը մերժեց Մուբարաքի նախագիծը: 1989 թ. հոկտեմբերին Կահիրե կատարած իր այցելության ժամանակ պաշտպանության նախարար Իցխակ Ռարինը ձևակերպեց Մուբարաքի նախաձեռնությունից Իսրայելի հրաժարվելու հետևյալ պատճառները.

1. Իսրայելը մերժում է «հող խաղաղության դիմաց» սկզբունքը:
2. Իսրայելը հրաժարվում է վերացնել և դադարեցնել շինությունների կառուցումն արաբական տարածքներում:
3. Իսրայելը հրաժարվում է զորքերը դուրս բերել ավելի քան 1 կմ հեռավորության վրա այն վայրերից, որտեղ պետք է քվեարկություն կազմակերպի:
4. Իսրայելը համաձայն չէ միջազգային հսկողություն սահմանել ընտրությունների դեպքում:

Իսրայելի հետ ապագա բանակցությունների պատվիրակությունը պետք է կազմվեր նախքան Արևմտյան ափում և Գազայում ընտրություններ կազմակերպելը⁴⁰⁶: Մուբարաքը փորձում

⁴⁰³ السياسة، الكويت، 23.09.1989

⁴⁰⁴ TACC Атлас, N. 151, M., 07.09.1989, с. 26.

⁴⁰⁵ الوطن العربي، باريس، 18.03.1990

⁴⁰⁶ فلسطين الثورة، نيقوسيا، 1990، عدد 776، ص. 32.

Եր համոզել իսրայելական կողմին՝ չխոչընդոտել, որպեսզի ապագա պատվիրակության մեջ մտնեն երկու շափավոր պաղեստինցիներ ոչ բռնազավթված տարածքներից: Սակայն իսրայելցիները չհամաձայնեցին դրան, թեպետև Մուրարաքը հավատացնում էր, որ պատվիրակությունը լինելու է պաղեստինյան, այլ ոչ թե ՊԱԿ-ի⁴⁰⁷:

Եզիպտական դեկավարությունը համոզված էր, որ առանց իսրայելական զորքերի դուրսքերման հնարավոր չէ իրականացնել պաղեստինյան հարցին վերաբերող քեմփունիոյան կետերը: Ըսդհանուր առմամբ, հետևելով Քեմփ-Դիլիջի համաձայնազրերի դրույթներին, Մուրարաքը պաղեստինցիներին ինքնավարություն տրամադրելը համարում էր նախնական քայլ դեպի պաղեստինյան անկախ պետության հոչակումը: Նա բազմից նշել էր, որ Եզիպտոսը միակ երկիրն է, որի օգնությանը դժվարին պահին կարող էին դիմել ՊԱԿ-ը, Իսրայելը և ԱՄՆ-ը⁴⁰⁸:

Ի տարբերություն Սադաթի Մուրարաքն իր արտաքին քաղաքանության մեջ համարաբական շահերը հայտարարեց գերակայող: Կահիրեն հասկանում էր, որ առանց ՊԱԿ-ի մասնակցության Մերձավոր Արևելքում կայունություն հաստատելը գրեթե անհնար էր: Հենց այդ նպատակով էլ Եզիպտոսի դեկավարությունն ամեն կերպ փորձում էր պաղեստինա-իսրայելական բանակցությունները տեղից շարժել: Մուրարաքի կարծիքով Իսրայելի հրաժարվելը Արաֆաթի հետ բանակցելուց կհանգեցներ ՊԱԿ-ի նախագահի շուրջ պաղեստինյան ժողովրդի համախմբմանը և միջազգային մակարդակում նրա հեղինակության բարձրացմանը⁴⁰⁹: Բացի այդ, Եզիպտոսի նախագահը պաղեստինցիների և իսրայելցիների միջև խաղաղությունն անհնար էր համարում առանց Երուսաղեմի հարցի կարգավորման⁴¹⁰:

⁴⁰⁷ 23.03.1990، الهدف، دمشق

⁴⁰⁸ Перес Ш., Новый Ближний Восток, М., 1994, с. 145.

⁴⁰⁹ Washington Reports on Middle East Affairs, Middle East Conference Position, December-January, 1991-1992, p. 16.

⁴¹⁰ Նույն տեղում:

Ամփոփելով Եզիպտոսի դիրքորոշումը պաղեստինյան հարցի նկատմամբ՝ կարելի է հանգել հետևյալին.

1. Եզիպտական կողմը հավատացած էր, որ առանց Պաղեստինի արաք ժողովրդի ազգային օրինական իրավունքների վերականգնման անհնարին է հասնել մերձավորարևելյան խնդրի համապարփակ կարգավորման: -
2. Պաղեստինյան հարցը համարաբական խնդիր է, և Եզիպտոսը որպես արաբական, աֆրիկյան և Չմիացած երկրների շարժման կազմակերպության անդամ, առաքելություն ունի իրականացնելու պաղեստինյան խնդրի լուծումը, պաղեստինյան ժողովրդի արդար կամքի, համարաբական ատյանների որոշումների, ՄԱԿ-ի բանաձևերի հիման վրա:
3. Պաղեստինյան անկախ պետության հոչակումը դրական երևոյթ է ողջ տարածաշրջանի համար և որոշ չափով Եզիպտական դիվանագիտության արդյունք է, որ հնարավոր դարձավ շնորհիվ Եզիպտա-իսրայելական հաշտության պայմանագրի:
4. Եզիպտոսը, սկսած 1981 թ., ողջունել և քաջալերել է պաղեստինյան հարցի կարգավորմանն ուղղված թե՛ արաբական և թե՛ այլ նախաձեռնություններն ու ծրագրերը, որոնց թվին են պատկանում Ֆահդի, Ռեյզանի, Ֆեսի և Բրեժենևի ծրագրերը:
5. Չնայած այն հանգամանքին, որ Եզիպտոսը գործում էր Իսրայելի հետ կնքած հաշտության պայմանագրի շրջանակներում, այդուամենայնիվ, Կահիրեն արձագանքում էր Իսրայելի կողմից համարաբական շահերի ուժնահարման անխստիր բոլոր փաստերին:
6. 1981-1991 թթ. ընթացքում Եզիպտոսը ձգտում էր Մերձավոր Արևելքում հասնել արդար և տևական խաղաղության:

Ինչ վերաբերում է Երուսաղեմի խնդրին, ապա 1991թ. հոկտեմբերին մերձավորարևելյան խաղաղության կոնֆերանսում

Եզիպտոսի ԱԳ նախարար Ամր Մուսան, անդրադառնալով Երուսաղեմի խնդրին, հայտարարեց, որ սրբազան քաղաքը պետք է ունենա հատուկ կարգավիճակ: Քաղաքը պետք է բաց լինի բոլորի համար: Կողմերից ոչ մեկն իրավունք չունի միանձնյա հսկողություն սահմանելու այնտեղ⁴¹¹:

⁴¹¹ www.mfa.gov.eg, Statement by H.E.Amre Moussa, Minister for Foreign Affairs of the Arab Republic of Egypt Delivered at the Closing of the Madrid Conference, Madrid, 1, November, 1991, p. 6.

ԳԼՈՒԽ ԵՐՐՈՐԴ

ԵԳԻՊՏՈՍԸ ԵՎ ԻՐԱՔԱ-ՔՈՒԿԵՅԹՅԱՆ ՃԳՆԱԺԱՄԸ (1990-1991 թթ.)

3.1. ԵԳԻՊՏԱ-ԱՐԱԲԱԿԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐՆ ԻՐԱՔԱ- ՔՈՒԿԵՅԹՅԱՆ ՃԳՆԱԺԱՄԻ ՆԱԽՕՐԵՒՆ

1980-ականների վերջին արաբական աշխարհում ձևավորվել էր ուժերի նոր հարաբերակցություն: Այն անմիջականորեն պայմանավորված էր Եգիպտոսի արաբական ընտանիք վերադարձով, ինչպես նաև տարածաշրջանում ընթացող քաղաքական մի շարք գործընթացներով: Արաբական տարածաշրջանի վրա անմիջականորեն ազդում էր նաև միջազգային ընդհանուր լարվածության թոքափումը՝ կապված ԽՍՀՄ-ԱՄՆ-ի միջև զրբարկակայության ապալարման, «սառը» պատերազմի ավարտի մոտալուս ակնկալիքների հետ:

1980-ականների վերջին արաբական աշխարհում ձևավորվել էին տարածաշրջանային երկու խոշոր միություններ, որոնք մեծ հաշվով դարձյալ ընդգծում էին առկա սոցիալ-դասակարգային, ինչպես նաև քաղաքական քենուացումը:

1981 թ. մարտին Սաուդյան Արաբիայի գլխավորությամբ կազմավորվեց Ծոցի արաբական երկրների համագործակցության դաշինքը (ԾԱԵՀԴ), որի մեջ մտան Պարսից ծոցի բոլոր վեց միապետությունները⁴¹²: Կազմակերպության հիմնական նպատակն անվտանգության ապահովումն էր, ինչպես նաև անդամերկրների միջև տարրեր ոլորտներում ինտեգրացիոն գործընթացների խորացումը⁴¹³: Ստեղծվել էին նաև միջարաբական զինված ուժեր, որոնք մի կողմից պետք է ծառայեին անդամ-

⁴¹² Александров И.А., նշվ. աշխ., էջ 279:

الصالح بن عبد الله الراجحي، علاقات المملكة العربية السعودية بدول الخليج، الرياض، 1991، ص. 23-22.

Երկրների վարչակարգերի պահպանմանը, մյուս կողմից՝ օտար մարտահրավերների դիմակայմանը:

Իրաք-իրանյան պատերազմի ավարտից հետո ռազմական և քաղաքական նոր դեմքով էր ներկայացել Իրաքը, տիրապետելով մարտերում կոփկած խոշոր բանակի և վիթխարի քանակության ռազմական տեխնիկայի՝ Սաղդամը ձգտում էր տիրապետող դիրք գրադեցնել տարածաշրջանում:

1989 թ. փետրվարի 16-ին Բաղդադի անմիջական նախաձեռնությամբ հիմնվեց արարական համագործակցության դաշինքը՝ Եգիպտոսի, Իրաքի, Հորդանանի և Եմենի Արաբական Հանրապետության (ԵԱՀ) կազմով⁴¹⁴: Եգիպտոսի համար, որը դեռ վերջերս էր մուտք գործել «արարական ընտանիք», ԱՀԴ-ին անդամակցելը չափազանց կարևոր էր և կարող էր նպաստել Կահիրեի դիրքերի ամրապնդմանը:

1989 թ. մայիսին Կասարլանկայում տեղի ունեցած ԱՊԼ-անդամ-երկրների գազարնաժողովին Իրաքն առաջ քաշեց Լիբանանում Սիրիայի ներկայությունը դատապարտող բանաձեռը: Իրաքը ձգտում էր սիրիական զորքերը Լիբանանում փոխարինել ԱՊԼ-ի զորամիավորումներով⁴¹⁵: Նախապես համաձայնության գալով Եգիպտոսի և Եմենի հետ՝ Սիրիայի նախագահ Հաֆեզ Ասադին հաջողվեց չեղյալ հայտարարել Իրաքի նախաձեռնությունը, որին, ի դեպ, ԱՀԴ-ի անդամ-պետություններից սատարեց Միայն Հորդանանը: Հաֆեզ Ասադը, համաձայնության գալով Լիբիայի հետ, խոստացել էր չառարկել Եգիպտոսի անդամակցության վերականգնմանը ԱՊԼ-ում:

Իր հերթին Սաուդյան Արաբիան, գիտակցելով Իրաքի ազեցության աճի վտանգավորությունը տարածաշրջանում, Արաբական պետությունների լիգայի շրջանակներում (որին իր անդամակցությունը Եգիպտոսը վերականգնեց 1989 թ. մայիսին) ջանքեր էր գործադրում եգիպտա-սիրիական հարաբերությունների կանոնավորմանն աջակցելու ուղղությամբ: Կահիրեն էլ այս

⁴¹⁴ خبراء الأسبوع، القاهرة، 17 آذار، 1989.

⁴¹⁵ Апдайк Р.Дж., 388.

ամենն օգտագործում էր իր ծրագրերի իրականացման նպատակով՝ խուսանավելու հնարավորություն ստեղծելով Եզիդոսուհամար⁴¹⁶:

Իրաքի թվայալ հզորությունն իրականում պարփակված էր տնտեսական բավականին լուրջ ճգնաժամով⁴¹⁷: Իրաք-իրանյան պատերազմից հետո արաբական երկրներին Բաղդադի պարտքն արդեն կազմում էր մոտ 80 մլրդ դոլար⁴¹⁸, որից 14 մլրդ պարտքը Քուվեյթինն էր, թեպետև վերջինս չէր շտապում այն հետ պահանջել⁴¹⁹:

1990 թ.՝ Ամմանում ԱՀԴ-ի անդամ-երկրների ղեկավարների հանդիպմանը, Սադրամը խնդրեց Հորդանանի թագավոր Հուսեյնին և Եզիդոսուի նախագահ Մութարաքին տեղյակ պահել Ծոցի երկրներին, որ Իրաքին շտապ հարկավոր է 30 մլրդ դոլար՝ տնտեսական վիճակը բարելավելու նպատակով: Այնուհետև Սարրամն ավելացրել էր, որ եթե նրանք այդ գումարը չսորամադրեն, ապա ինքը գիտի ինչպես այն ձեռք բերել⁴²⁰: Իրաքի նախագահի այդ հայտարարությունները գուզորդվում էին իրայան գորքերի մաներներով իրաք-Քուվեյթյան սահմանին:

Երկու ամիս անց, երբ Մութարաքը պաշտոնական այցելությամբ գտնվում էր Իրաքում, Սադրամը դարձյալ նշել էր, որ իրեն գումար է հարկավոր, իսկ Ծոցի երկրները համառորեն խոյս են տալիս հարցը լուծելուց⁴²¹: Եզիդոսուի նախագահին Սադրամը մի շարք մեղադրանքներ ներկայացրեց՝ կապված Ծոցի երկրնե-

⁴¹⁶ ТАСС БПИ, N 139, М., 19.07.1989, с. 38.

⁴¹⁷ Kimche D., The Last Option After Nasser, Arafat and Hussein, The Quest for Peace in the Middle East, London., 1991, p. 225.

⁴¹⁸ Шахбазян Г.С., Экономические и социальные последствия для Ирака вооруженного конфликта с Ираном (1980-1988), Арабские страны Западной Азии и Северной Африки, М., 1997, с. 151.

⁴¹⁹ The Iraqi Aggression on Kuwait, the Truth and the Tragedy, Center for Research and Studies in Kuwait, London, 1994, p. 56.

⁴²⁰ Նոյն տեղում:

⁴²¹ Апдайк Р.Дж., նշվ. աշխ., էջ 370:

րի՝ Իրաքի հանդեպ անարդար վերաբերմունքի հետ: Սաղդամը նշում էր, որ եթե Ծոցի երկրները ժամանակին համապատասխան գումարներ հատկացնեին, ապա Իրանի հետ պատերազմը շուտ կավարտվեր:

Իրաքա-իրանյան պատերազմից հետո Իրանն Իրաքի հետ համատեղ Նավթ արդյունահանող երկրների կազմակերպությունից՝ ՕՊԵԿ, պահանջեց իշեցնել նավթի արդյունահանման նկատմամբ ունեցած իրենց չափարաժինները⁴²², ինչին հակառակ նավթարդյունաբերող արարական մի շարք երկրներ, մասնավորապես Քուվեյթը և ԱՄԷ-ը, շարունակում էին իրենց չափարաժինները բարձրացնել ի վնաս Բաղդադի և Թեհրանի: 1990 թ. վետրվարի վերջին Քուվեյթ կատարած իր այցելության ժամանակ իրաքյան նավթային արդյունաբերության նախարար Ռահիմ Ալ-Հալաբին փորձեց համոզել Քուվեյթի իշխանություններին չբարձրացնել նավթի արդյունահանման չափարաժինները:

Մերձավորարեսեյյան խնդիրների քննարկման նպատակով Սաղդամը և Արաֆաթը պահանջեցին իրավիրել արարական զագարնաժողով, որը գումարվեց 1990 թ. մայիսի 28-31-ը Բաղդադում⁴²³:

Այդ հանդիպման ընթացքում մի շարք ընթացիկ հարցերի քննարկումից հետո Իրաքը կարողացավ այնպիսի տպավորություն ստեղծել, որ իրաքա-իրանյան պատերազմի ավարտից հետո Բաղդադի հիմնական նպատակն էր պահեստինյան խնդրի կարգավորումը և Խորայելին դիմակայելը⁴²⁴: Հանդիպմանը Սաղդամը հայտարարեց նաև, որ տնտեսական պատերազմը, որն Իրաքին հայտարարել էին ԾԱԵՀԴ-ի անդամ-երկրները, անտանելի էր դարձել: Յուրաքանչյուր մեկ բարել նավթի դիմաց սահմանված գնաշափում մեկ դոլարի իշեցումն Իրաքի համար նշանակում էր 1 մլրդ դոլարի կորուստ:

⁴²² Комсомольская правда, М., 05.08.1990.

⁴²³ 22.04.1990، الجمهورية، بغداد

⁴²⁴ Сербиненко Д.В., Предпосылки кризиса и войны в Заливе, Арабский сборник, вып. 3, М., 2000, с. 90.

Գագաթնաժողովի ավարտին Մուբարաքը ողջունեց Սահդամի՝ արարական համերաշխության հասնելու պատրաստակամությունը, սակայն իր ելույթի վերջում շեշտեց, որ արարական առաքելությունը պետք է լինի հումանիտարական, տրամաբանական և իրատեսական։ Սահդամի համար հասկանալի էր, թե Մուբարաքի խոսքերն ում էին ուղղված⁴²⁵։

Արարական զագաթնաժողովից հետո Բաղդադն արհեստականորեն սկսեց սրել Քուվեյթի հետ հարաբերությունները, որն աստիճանաբար ճգնաժամային բնույթ էր ստանում։ Իրաքը պահանջում էր չեղյալ հայտարարել Ծոցի արարական երկրներին ունեցած իր պարտը (մասնավորապես Իրաքի պարտը Քուվեյթին) և Մարշալի ծրագրի օրինակով մի ծրագիր մշակել, որով կփոխի հատուցվեին Իրաքի կորուստները⁴²⁶։

Հուլիսի 17-ին Իրաքն արդեն անսիջական մեղադրանք ներկայացրեց Քուվեյթին՝ Բաղդադի դեմ տնտեսական պատերազմ հրահրելու համար և պահանջեց սկզբից 2,4 մլրդ դոլար, այնուհետև այդ գումարը հասցվեց 10 մլրդ դոլարի⁴²⁷։ Իր հերթին Քուվեյթի արտաքին գործերի նախագահ շեյխ Սարահ Ալ-Սիմադ Ալ-Սարահն ԱՊԼ-ի քարտուղարին ուղարձ նամակում, նախապես իր համար ապահովելով ԾԱԵՀԴ-ի անդամ-երկրների պաշտպանությունը, գրում էր, որ Իրաքի հայտարարությունն ընդամենը սահրանք էր և չեր համապատասխանում երկու երկրների միջև գոյություն ունեցող եղբայրական հարաբերությունների համատեքստին⁴²⁸։ Քուվեյթն առաջարկում էր Իրաքին տրամադրել 9 մլրդ դոլարի վարկ և քննարկել Իրաքի առաջադրած ծրագրի իրականացման հնարավոր ուղիները, որը սակայն Սահ-

⁴²⁵ Сейранян Б., Звезда и жизнь диктатора, Азия и Африка сегодня, М., 1994, N 4, с. 9.

⁴²⁶ العراق، بغداد، 20.07.1990

⁴²⁷ Современные международные отношения, նշվ. աշխ., էջ 400:

⁴²⁸ The Message of the Minister of Foreign Affairs of the State of Kuwait to the Secretary Arab League Gazili Qusebi, 18, July 1990, Ei-Kuwait, p. 7.; .السياسة، الكويت، 22.07.1990

դամը մերժում էր⁴²⁹: Քուվեյթն առաջարկում էր նաև ԱՊԼ-ի շրջանակներում իրաքա-քուվեյթյան հակասությունները հարթելու նպատակով հանձնաժողով ստեղծել, որը պետք է քայլեր ձեռնարկեր այդ ուղղությամբ⁴³⁰:

1990 թ. հուլիսի 21-ին Իրաքի արտաքին գործերի նախագահ Տարիկ Ազիզը դարձյալ նաև ուղարկեց ԱՊԼ-ի գլխավոր քարտուղարին, որտեղ կրկին մեղադրանքներ էր ներկայացնում Քուվեյթին⁴³¹: Ի պատասխան՝ Քուվեյթը հատուկ ուղերձով դիմեց ՄԱԿ-ի գլխավոր քարտուղար Պերես Ռե Կույելերին՝ խնդրելով միջամտություն ցուցաբերել՝ Իրաքի մեղադրանքների տարափը դադարեցնելու նպատակով: Քուվեյթի այդ քայլից հետո Իրաքը մեղադրեց նրան խնդիրը միջազգայնացնելու մեջ վկայակոչելով այն հանգամանքը, որ դեռ մեկ ամիս առաջ Քուվեյթը պահանջում էր հակասությունները լուծել ԱՊԼ-ի շրջանակներում հատուկ հանձնաժողովի ստեղծման միջոցով⁴³²:

Նպատակ ունենալով կանխել հատունացող ռազմական բախման վտանգը՝ Մութարաքը 1990 թ. հուլիսի 17-ին այցելեց Քաղաքացի, Քուվեյթ և Միջադար, որոնց ընթացքում որոշում ընդունվեց հուլիսի 20-ին Զիդդայում իրաքա-քուվեյթյան հանդիպում կազմակերպելու մասին: Միևնույն ժամանակ Սադրամը հավատացրեց Մութարաքին, որ չի հարձակվելու Քուվեյթի վրա:

Նշենք, որ Մութարաքը մինչև վերջին պահն էլ համոզված էր, որ Սադրամն ընդառաջ կգնա իր առաջարկին: Բանակցելու նպատակով Սադրամը Զիդդայում ուղարկեց Իրաքի Հեղափոխական հրամանատարության խորհրդի նախագահի տեղակալ Իզզաք Իբրահիմ աղ-Դուրսիին: Վերջինս հուլիսի 31-ին ժամանեց Զիդ-

⁴²⁹ The Memorandum of the Deputy Prime Minister and Minister of Foreign Affairs of Iraq Tariq Aziz to the Secretary General of the Arab League, Documents of Foreign Policy of Iraq, Baghdad, 1990, p. 12.

⁴³⁰ .22.07.1990 *السياسة، الكويت*

⁴³¹ .26.07.1990 *الشعب، بغداد*

⁴³² .26.07.1990 *الشعب، بغداد*

դա, որպեսզի հավաստիացնի, թե որքանով էին օրինական Իրարի առաջ քաշած պահանջները⁴³³:

Իրարի պատվիրակը՝ վերջնագիր ներկայացրեց, որով պահանջեց չեղյալ հայտարարել Իրարի պարտքը Քուվեյթին և 10 մլրդ դրամ փարկ հատկացնել Իրարին, ինչպես նաև Բաղդադին հանձնել Պարսից ծոցի Վարրա և Բուրիյան կղզիներին տիրելու իրավունքը⁴³⁴: Օգոստոսի 1-ին Իրարի և Քուվեյթի պատվիրակները միմյանց մի շարք մեղադրանքներ ներկայացնելուց հետո հեռացան նիստից⁴³⁵:

Քուվեյթի վրա Իրարի հարձակումից առաջ Մութարաքը հուլիսի 30-ին ևս մեկ անգամ այցելեց Բաղդադ, այս անգամ անձամբ Սաղդամից բացատրություն խնդրեց իրարա-քուվեյթյան սահմանի երկայնքով իրարյան գորքերի խոշոր կուտակումների մասին, ինչին Սաղդամը պատասխանել էր, որ դա ընդամենը նախազգուշական քայլ է, որպեսզի Քուվեյթը վճարի Իրարին պահանջված գումարը: Նոյն օրը Մութարաքը Քուվեյթին հայտնեց, որ Իրարը չի հարձակվի, քանի որ իրեն անձամբ խոստացել է Սաղդամը, սակայն փոխարենը Քուվեյթը պետք է մի քանի մլրդ դրամ վճարի Բաղդադին⁴³⁶:

Ծագած հակասությունները բանակցությունների միջոցով կարգավորելու Եգիպտոսի նախագահ Մութարաքի միջնորդությունը դատապարտված էր ձախողման, քանի որ Սաղդամն արդեն իսկ վճռել էր զավթել Քուվեյթը: Մութարաքը միայն 1990 թ. հունիս-հուլիս ամիսներին իրարյան դեկավարությանը 33 ուղերձ է հղել՝ փորձելով ազդել Իրարի դիրքորոշման վրա⁴³⁷:

⁴³³ Сербиненко Д.В., նշվ. աշխ., էջ 94:

⁴³⁴ The Iraqi Aggression on Kuwait, նշվ. աշխ., էջ 56; Республика Ирак в системе международных отношений, նշվ. աշխ., էջ 190:

⁴³⁵ ТАСС БПИ, N 203, М., 17.10.1990, с. 20.

⁴³⁶ Млечин Л., Шок и трепет: Кто следующий? М., 2003, с. 165.

⁴³⁷ 09.02.2003 الجمهوريه، بغداد،

Իրաքի պատվիրակ Իզզաք Իբրահիմի՝ Զիդդա կատարած այցելության օրը իրաքյան 30-հազարանոց զորամիավորումը շարժվեց դեպի իրաքա-քուվեյթյան սահմանը⁴³⁸:

Հարկ է նշել, որ Քուվեյթը բռնակցելու Իրաքի նշված փորձը երրորդն էր՝ 1961 թ. և 1973 թ. անհաջող փորձերից հետո⁴³⁹:

Քուվեյթի վրա հարձակվելու Սադդամի պատրաստակամության հարցում ոչ պակաս նշանակություն ունեցավ Իրաքում ԱՄՆ-ի դեսպան տիկին Էյֆրիլ Գլասպիի հետ 1991 թ. հուլիսի 25-ին Իրաքի նախագահի գրույցը: Սադդամը դեսպանին ներկայացրեց Իրաքի տնտեսական ծանր վիճակը՝ փաստելով, որ թեև ԱՄՆ-ը սատարում է Ծոցի երկրներին, սակայն վերջիններս տնտեսական պատերազմ են հայտարարել Իրաքին: Գլասպին համաձայնեց Իրաքի պահանջների հետ և շեշտեց, որ Քուվեյթը չպետք է խախտի նավթային շափաբաժինները: Այնուհետև տիկին Գլասպին ավելացրեց. «25 տարի այս տարածաշրջանում ծառայելուց հետո ես գտնում եմ, որ Ձեր նպատակները պետք է աջակցություն գտնեն Ձեր եղբայր արաբների մոտ: Դա այն հարցն է, որն արաբներն իրենք պետք է լուծեն: Իսկ ինչ վերաբերում է Միացյալ Նահանգների դիրքորոշմանը, ապա մենք կոնկրետ կարծիք չունենք միջարաբական հակասությունների, այդ թվում նաև Քուվեյթի հետ Ձեր սահմանային տարածայնությունների վերաբերյալ: ԱՄՆ-ի պետքարտուղար Ջեյմս Ֆեյքը կահանգ է տվել մեր պաշտոնական ներկայացուցիչն հայտնել Ձեզ այս տեսակետը»⁴⁴⁰: Գլասպին գրույցի վերջում հարցրեց Սադդամին, թե վերջնական ինչ որոշում է կայացրել Քուվեյթի վերաբերյալ, Սադդամը պատասխանեց, որ մենք (իրաքցիները - Գ.Գ.) փորձում ենք խնդիրը լուծել խաղաղ ճանապարհով, բայց կարող է ստացվել նաև հակառակը: Գլասպիի լուրջունը համաձայնության նշան էր. ԱՄՆ-ը դեմ չէր, որ Իրաքը

⁴³⁸ New York Times, N.Y., 02.08.1990.

⁴³⁹ Սանրաման տես Նовейшая история арабских стран, նշվ. աշխ., էջ 327:

⁴⁴⁰ Апдайк Р.Дж., նշվ. աշխ., էջ 389:

բռնազավթի Քուվեյթը⁴⁴¹: Իրաքին վստահություն ներշնչեց նաև այն հանգամանքը, որ Գլասպիի հետ ունեցած գրույցից հետո՝ հուլիսի 28-ին, Բուշի Սադրամին հղած նամակում Միացյալ Նահանգների նախազահը հույս էր հայտնում, որ իրաք-ամերիկյան հարաբերությունները պետք է ավելի բազմակողմ դառնաշխին⁴⁴²: Ֆրանսիական հետազոտող Է.Լորանը գրում էր, որ նախազահ Սադրամն ընդիուպ մինչև 1990 թ. օգոստոսի 2-ը ամերիկացիներից ճշգրիտ տվյալներ էր ստանում Սաուդյան Արարիայի և Քուվեյթի ռազմական կարողությունների մասին: Տեղեկությունները փոխանցվում էին ԱՄՆ-ի Կենտրոնական հետախուզական վարչության (ԿՀՎ) բաղդայան գրասենյակից⁴⁴³:

Հուլիսի 31-ին Սադրամն ԱՄՆ-ի նախազահին ուղղված պատասխան նամակում հավատացնում էր, որ իրաք-քուվեյթյան հակասությունները լուծվելու են խաղաղ ճանապարհով: Նույն հավաստիացումները ստացավ նաև Եգիպտոսի նախազահ Մուբարաքը:

Համոզված լինելով ամերիկյան չեղորդության մեջ և հույս տածելով, որ արաբական երկրների մեծ մասը մեղմ կեցվածք կդրսնորի իր քայլի հանդեպ՝ 1990 թ. օգոստոսի 1-ին Սադրամը հրամայեց իր զորքերին ներխուժել Քուվեյթ:

3.2. ԻՐԱՔԻ ՀԱՐՉԱԿՈՒՄԸ ՔՈՒՎԵՅԹԻ ՎՐԱ. «ՓՈԹՈՐԻԿ ԱՆՍՊԱՏՈՒՄ» ՌԱԶՄԱԿԱՆ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԵԳԻՊՏՈՍԸ

1990 թ. օգոստոսի 1-ի լույս 2-ի գիշերն իրաքյան բանակի ընտիր զորամիավորումները՝ 120-hազարանոց կորպուս, 1300

⁴⁴¹ ТАСС БПИ, N 203, М., 17.10.1990, с. 20.

⁴⁴² Նույն տեղում:

⁴⁴³ Laurent E., Tempete du desert. Les secrets de la Maison Blanche, P., 1991, p. 350, ըստ՝ Шарипов У.З., Персидский Залив: нефть - политика и войны, М., с. 91.

տանկեր, 14 հազար զրահամեքնաներ, հարյուրավոր հրետանային և հրթիռային միավորումների, ավիացիայի և ուղարիոների օժանդակությամբ ներխուժեցին Քուվեյթ և զրավեցին այն⁴⁴⁴: Քուվեյթյան կառավարությունը ապաստանեց Սաուդյան Արաբիայում⁴⁴⁵:

Նոյն օրը գումարվեց ԱՊԼ-ի անդամ-երկրների արտահերթ նիստը, որտեղ մասնակից 22 պետություններից Իրաքին դատապարտեցին միայն 14-ը, իսկ ձեռնպահ մնացին Սուլանը, Եմենը, Հորդանանը, Մավրիտանիան և ՊԱԿ-ը: Լիբանանի պատվիրակությունը հետացավ նիստից: Իրաքի հարձակման նկատմամբ միասնական դիրքորոշում չունենալու պատճառով՝ ԱՊԼ-ի հանդիպումը ձախողվեց, և շնաջողվեց կոնկրետ որոշում ընդունել: Քուվեյթի վրա հարձակվելուց հետո Բուշն Իրաքի նկատմամբ տնտեսական պատժամիջոց հայտարարեց և սառեցրեց ամերիկյան բանկերում պահպող իրաքյան և քուվեյթյան ակտիվները⁴⁴⁶: Իրաքից դուրս եկող և մուտք գործող ապրանքների, ինչպես նաև մարդկանց շարժը կանգնեցվեց:

Իրաքի հարձակումը Քուվեյթի վրա դատապարտեց միջազգային ողջ հանրությունը: Օգոստոսի 2-ի առավոտյան ՄԱԿ-ի ԱԽ-ն ընդունեց 660-րդ բանաձևը, որով դատապարտում էր իրաքյան գործողությունները և պահանջում գորքերն անհապաղ

⁴⁴⁴ .02.08.1998 الشرق الأوسط; Бордунов М.В., Зона Персидского Залива: особое направление в региональной политике Ирака, Востоковедный сборник, вып. 3, М., 2002, с. 6.

⁴⁴⁵ Данилов Л.И., Армия и власть, общество в современном Ираке, Աշխարհ, էջ 60:

⁴⁴⁶ U.S. Polisy in the Persian Gulf. Hearing the Committee on Foreign Relations U.S. Senate. 102nd Congress, 1st Session. January 8, 1991, Wash.: U.S. GPO, 1991: Consideration on Draft Resolution "The Situation in the Persian Gulf". Making before the Committee on Foreign Affairs. House of Representatives, 102nd Congress, 1st Session. On the Committee, Resolution 1, January 9, 1991, Wash.: GPO: 1991, p. 64.

դուրս բերել Քուվեյթից⁴⁴⁷: ՍԱԿ-ի ԱԽ-ն նույնպես տնտեսական մի շարք պատճամիջոցներ կիրառելու որոշումներ ընդունեց, որոնց իրազրծումը վերահսկելու նպատակով ստեղծվեց UNSCOM՝ հատուկ հանձնաժողով⁴⁴⁸: ՍԱԿ-ի ԱԽ-ի 15 անդամներից 13-ը միացան 660-րդ բանաձևին, ձեռնպահ մնացին Եմենը և Կուբան⁴⁴⁹: Տնտեսական պատճամիջոցներ սահմանեցին նաև մի շարք եվրոպական պետություններ և Ճապոնիան, իսկ ԽՍՀՄ և Չինաստանը դադարեցին գենք տրամադրել Իրաքին⁴⁵⁰:

Օգոստոսի 6-ին ԱԽ-ն ընդունեց ևս մեկ՝ 661-րդ բանաձևը, որը հաստատում էր 660-րդ բանաձևը և Իրաքի հանդեպ նոր պատճամիջոցներ սահմանում⁴⁵¹:

Ի պատասխան Սաուդյան Արաբիայի և Քուվեյթի խնդրանքն՝ օգոստոսի 7-ին Վաշինգտոնը կարգադրեց Սաուդյան Արաբիայի արևելյան նահանգ ամերիկյան զորամիավորումներ տեղափոխելու մասին⁴⁵²: Միացյալ զորքերի հրամանատար էր Աշա-

⁴⁴⁷ The UN Security Council and Iraq, Why it Succeeded in 1990, Why it didn't in 2003, and Why the United States should Reddem it, by James M. and O'Sullivan D., www.americandiplomacy.org

⁴⁴⁸ The UN Security Council and Iraq, Why it Succeeded in 1990, Why it didn't in 2003, and Why the United States should Reddem it, by James M. and O'Sullivan D., www.americandiplomacy.org

⁴⁴⁹ Matteus K., The Gulf Conflict and International Relations, L., N.Y., 1993, p. 309. Աշխատության մեջ տե՛ս նաև 1990-1991 թթ. ՍԱԿ-ի ԱԽ հակաբարյան բոլոր բանաձևերը: Советская Россия, М., 04.08.1990.

⁴⁵⁰ TACC, М., 03.08.1990.

⁴⁵¹ The UN Security Council and Iraq, Why it Succeeded in 1990, Why it didn't in 2003, and Why the United States should Reddem it, by James M. and O'Sullivan D., www.americandiplomacy.org

⁴⁵² Зейналов Мир Паша, В блокадном Ираке, М., 2001, с. 17; The UN Security Council and Iraq, Why it Succeeded in 1990, Why it didn't in 2003, and Why the United States should Reddem it, by James M. and O'Sullivan D., www.americandiplomacy.org

նակվել Սաուդյան Արաբիայից գեներալ Խալեդ իբն Սաուդը⁴⁵³: Իրարա-քուվեյթյան ճգնաժամի հանդեպ զործնական և ընդհանուր որոշումներ կայացնելու նպատակով 1990 թ. օգոստոսի 10-ին ԱՊԼ անդամ-պետությունների արտահերթ գագաթնաժողովին Մութարաքի անմիջական նախաձեռնությամբ կոչ արվեց միանալու Իրաքին դատապարտող Եզիջտա-սաուդական բանաձեկին և մասնակցելու Իրաքի դեմ ակնկալվող միջազգային կոալիցիայի ուղմական զործողություններին: ԱՊԼ-ի 22 անդամներից (ՊԱԿ-ի հետ միասին) միայն մի քանիսը միացան Եզիջտոսի կողմից առաջ քաշված բանաձեկին, համաձայն որի պետք է դատապարտել իրաքյան ազրեսիան և վերականգնել Քուվեյթի օրինական իշխանությունը, ճանաչել Սաուդյան Արաբիայի ինքնապաշտպանության իրավունքը և արարական զորքեր ուղարկել այդ երկիր⁴⁵⁴:

Իրաքի զործողությունների հանդեպ ընդհանուր որոշում չունենալու հետևանքով արարական աշխարհը տրոհվեց մի քանի քետոր.

1. Եզիջտոսը, Սիրիան, Լիբանանը, Մարոկկոն, Ջիբութին և Ծոցի արարական երկրները դատապարտեցին Իրաքին և պաշտպանեցին Քուվեյթին:

⁴⁵³ Сауд Ҳалед ибн, Вонн пустыни, М., 1996, с. 176. Ուշագրավ ենք համարում նշել, որ Իրաքի դեմ ակնկալվող պատերազմում Է-Ռիյադին իր ուղմական օգնությունն էր առաջարկել նաև 1990 թվականի օգոստոսի 3-ին Սաուդյան Արաբիա ժամանած Ուսամա բեն Լադենը: Վերջինս Ֆահդ թագավորին առաջարկել էր Աֆղանստանից Սաուդյան Արաբիա տեղափոխել մոջահենների մարտունակ գումարտակներ: Բեն Լադեն-Ֆահդ «բանակցություններից» քաջատեղյակ էր Վաշինգտոնը: Սանրաման տե՛ս Յունաստանի Ամերիկայի պատերազմը՝ առաջարկելու մասին աշխարհագործությունը: Սանրաման տե՛ս Յունաստանի Ամերիկայի պատերազմը՝ առաջարկելու մասին աշխարհագործությունը:

⁴⁵⁴ Каражас О., Кризис в Персидском Заливе и перспективы социально-экономического развития АРЕ, Восток и современность, N 3, M., 1991, с. 19.

2. Հորդանանը, ՊԱԿ-ը⁴⁵⁵, Սուլանը և Մավրիտանիան հանդես եկան Իրաքի պաշտպանությամբ՝ կոչ անելով Բաղդադին Քուվեյթի հարատությունը բաժանել արաբական պետությունների միջև:
3. Մաղրիբի երկրները՝ Թունիսը, Ալժիրը և Լիբիան, կոչ արեցին ճզնաժամը լուծել արաբական ուժերով և թույլ չտալ օտարերկրյա միջամտություն⁴⁵⁶:

Արաբական զագարնաժողովի ավարտից հետո Ալեքսանդրիայում հանդիպեցին Եգիպտոսի, Սիրիայի, Լիբիայի և Ալժիրի նախագահները, որոնք քննարկեցին միջազգային կոալիցիայում արաբական գորքերի մասնակցության հարցը և Իրաքի ճակատագրի հետ կապված մի շարք որոշումներ ընդունեցին⁴⁵⁷: Միջազգային կոալիցիային միանալու նպատակով գորքեր ուղարկեցին Եգիպտոսը, Սիրիան, ԱՍԷ-ն, Բահրեյնը, Օմանը, Կատարը, հետո նաև Սարոկվոն⁴⁵⁸: Սպիտակ տանը սկզբից չէին պատկերացնում, որ Եգիպտոսը և Սիրիան կդատապարտեն

⁴⁵⁵ Պաղեստինցիները Սադրամի հետ մեծ հովսեր էին կապում՝ ակնկալելով պաղեստինյան ինորի մոտալուս լուծումը: Օրինակ՝ Քուվեյթի վրա հարձակումից հետո Գազայում ծնված երեխաներին անվանում էին Սադրամ Հուսեյն: Արաֆաթի կարծիքով Սադրամի շնորհիվ առաջին անգամ 40 տարիների ընթացքում Մերձավոր Արևելքում պաղեստինյան հարցի լուծման իրական հնարավորություններ էին ստեղծվել: Տե՛ս Կомпоненты арабо-израильского мира в 1990-е годы, Нижний Новгород, 1992, с. 28; Макарычев А.В., Динамика арабо-израильского конфликта, Восток, афро-азиатские общества: история и современность, № 3, М., 1991, с. 119.

⁴⁵⁶ Գևորգյան Գ., Եգիպտոսի դիրքորոշումը իրաքա-քուվեյթյան ճզնաժամի հանդեպ, Մերձավոր Արևելք, Եր., 2002, էջ 71; Правда, М., 13.08.1990; Ibrahim I., The Gulf Crisis: Background and consequences, Wash., 1992, p. 320; Жегалов В., Грозовые тучи над Заливом, Азия и Африка сегодня, N 1, М., 1991, с. 3.

⁴⁵⁷ Известия, М., 13.08.1990.

⁴⁵⁸ Сауд Халед ибн, նշվ. աշխ., էջ 176; The Politics of Change in the Middle East, Wash., 1993, p. 203.

Իրաքին և կկանգնեն ԱՄՆ-ի կողքին⁴⁵⁹: Միևնույն ժամանակ բազմահազարանոց ցույցեր էին տեղի ունենում Լիբիայում, Հորդանանում, Եմենում, Մավրիտանիայում և արաբական բունագավթված տարածքներում՝ ի պաշտպանություն Սադամի⁴⁶⁰: Թուրքիան ամբողջովին պաշտպանեց ԱՄՆ-ի դիրքորոշումը, իսկ Իրանը, որը սկզբից հայտարարել էր իր չեզոքության մասին, օգոստոսի 15-ից հետո հանդես եկավ Իրաքի պաշտպանությամբ⁴⁶¹:

Հետագայում Իրաքի դեմ պատերազմական գործողություններին արաբական երկրներից անմիջական մասնակցություն ունեցան միայն Եգիպտոսի⁴⁶², Սիրիայի և Սաուդյան Արաբիայի գորամիավորումները: Օգոստոսի 12-ին Սադամը հայտարարեց, որ զորքերը դուրս կբերի Քուվեյթից միայն այն դեպքում, եթե խրայելական զորքերը դուրս գան արաբական բունազավթված տարածքներից: Իրաքի համար խիստ անհրաժեշտ էր իրաքաբուվեյթյան ճգնաժամը կապել պաղեստինյան հարցի հետ, քանի որ ինքնաբերաբար ձեռք էր բերում դաշնակիցներ՝ ի դեմս արաբական ժողովուրդների, այդ թվում և պաղեստինցիների:

⁴⁵⁹ Примаков Е., Война которой могло не быть, М., 1991, с. 8.

⁴⁶⁰ Примаков Е., նշվ. աշխ., էջ 8:

⁴⁶¹ Իրանը պատրաստակամություն էր հայտնել պաշտպանել Իրաքին այն բանից հետո միայն, եթե վերջինս խոստացել էր Թեհրանին 136 մլրդ դոլար վճարել որպես իրաքա-իրանյան պատերազմի ռազմատուգանք: Իրականում սա քաղաքական մաներ էր, քանի որ Սադամը չուներ այդ խոստացած գումարը: Տե՛ս Շարիպօվ Յ.Յ., Политика Ирана и Ирака в Персидском Заливе (начало 90-х годов), Постконфронтационная модель международных отношений Азии, М., 1992, с. 91. Իրաքը համաձայնել էր նաև իրաքա-իրանյան սահմանների հարցում առաջնորդվել 1975թ. ալժիրյան հոչակագրությունը: Տե՛ս Կрасная Звезда, М., 17.08.1990.

⁴⁶² Եգիպտոսի դեկավարությունը հասուլ կ հաշվարկել էր ուժերի հարաբերակցությունը Ծոցում և, բացի այդ, ԱՄՆ-ը և ԵՏՀ-ն խոստացել էին մարել Եգիպտոսի պարտքերի զգալի մասը: Տիտօրենկո Վ.Բ., նշվ. աշխ., էջ 231:

Եզիպտոսը, որը վերականգնում էր արաբական աշխարհում առաջնորդի իր երեմնի դիրքերը, Սաղդամին դիտում էր որպես մրցակցի և բնականաբար չէր կարող հաշտվել Իրաքի գործողությունների հետ, թեև վերջինիս հետ անդամակցում էր ԱՀԴ-ին: Եզիպտոսի քաղաքական շահերին ավելի համապատասխանում էր ոչ թե արաբական մի պետության կանումը մյուսի կողմից, այլ գոյություն ունեցող Status quo-ի պահպանումը⁴⁶³:

Իրաքի՝ Քուվեյթ ներխուժման հանդեպ Հորդանանի առանձնահատուկ դիրքորոշումը, իսկ հետագայում նաև իր տարածքով Իրաքին մթերք, դեղորայք մաստակարարելը պետք է բացատրել այն հանգամանքով, որ Հորդանանում 1 մլն-ից ավելի պաղեստինցի էր բնակվում, որոնք պատրաստ էին գենքը ձեռքին կովելու Սաղդամի կողքին⁴⁶⁴: Հուսեյն թագավորի համար խիստ վտանգավոր էր հզոր հարևանին բացահայտ հակադրվելը:

Եզիպտոսի կողմից առաջ քաշված բանաձևին դեմ էր ըվեարկել նաև ՊԱԿ-ը: Արաֆաթը կոչ արեց ԾԱԵՀԴ-ի անդամերկրների բնակչությանն ապստամբել իրենց կառավարությունների դեմ⁴⁶⁵: ՊԱԿ-ի այս կոչին արձագանքեցին նաև պաղեստինյան շարժման մնացած ակնառու գործիչները: Այդ ընթացքում մերձեցում էր տեղի ունենում Իրաքի և ՊԱԿ-ի միջև, որի արդյունքում Բաղդադը դարձավ ՊԱԿ-ի երկրորդ նախավայրը:

Արաբական մի շարք երկրների կողմից Իրաքին ցուցաբերած աջակցության հարցում պետք է նկատի ունենալ այն հանգամանքը, որ Իրաքը զգալի ֆինանսական օգնություն էր տրամադրում ՊԱԿ-ին, Եմենին և Սուլանին: Իրաքա-քուվեյթյան հակամարտության կարգավորման իր ծրագիրն էր ներկայացրել Արաֆաթը, համաձայն որի սկզբում պետք է լուծվեր քուվեյթյան ճգնաժամը, իսկ հաջորդ փուլում՝ նաև մերձավորարևելյան հա-

⁴⁶³ Hinnebusch R., Ehteshami A., The Foreign Policy of Egypt, The Foreign Policy of Middle East States, L., 2002, p. 110.

⁴⁶⁴ Жегалов В., Грозовые тучи над Заливом, Азия и Африка сегодня, N 1, М., 1991, с. 3.

⁴⁶⁵ Hinnebusch R., Ehteshami A., Աշվ. աշխ., էջ 124:

կամարտությունը: Մեծ նշանակություն ուներ նաև այն հանգամանքը, որ Քուվեյթան խնդիրը Սաղդամը փորձում էր կապել պաղեստինյան հարցի հետ: Ավելին, Քուվեյթի բռնակցումը որակվում էր որպես սիոնիզմի դեմ պայքարում արաբական ազգի ներուժը համախմբելու անհրաժեշտ միջոց⁴⁶⁶:

Իրաքի կողմից Քուվեյթի բռնազավթման ընթացքում էլ ավելի ուժգին էր հնչում Արաֆաթի հայտարարությունն այն մասին, որ եթե պաղեստինցիները չունենան իրենց պետությունը, ապա տարածաշրջանում խաղաղություն չի հաստատվի: Այս փաստն օգտագործվում էր Սաղդամի կողմից⁴⁶⁷: Այդ համատերսում Սաղդամը հանդես էր գալիս որպես համարաբական շահերի և մուսուլմանների պաշտպան, որպես համաշխարհային հակակայսերապաշտական առաջնորդ:

Արաբական մի քանի երկրներ գտնում էին, որ Իրաքի ներխուժումը Քուվեյթ արաբական աշխարհի ներքին հարցն էր: Այս համատերսում եզիպտական զորամիավորումները, որոնք գրադեցնում էին քանակությամբ 4-րդ տեղը միջազգային հակաիրայան դաշինքում, նպատակ ունեին ապահովելու արաբական տարրը օտարերկրյա զորքերում:

Բուշի՝ զորամիավորումները տեղափոխելու հրամանի նախօրեին Արաֆաթն այցելեց Եզիպտոս և փորձեց համոզել Սուրբարաքին կանխել ամերիկյան զորքերի՝ Իրաքի դեմ ձեռնարկվող գործողությունները: Սակայն Սուրբարաքը հայտնեց, որ Սաղդամը չափից ավելի մեծ հարված է հասցրել արաբների հեղինակությանը⁴⁶⁸:

Օգոստոսի 8-ին Իրաքի Հեղափոխական հրամանատարության խորհուրդը հայուարարեց Իրաքի և Քուվեյթի միավորման մասին: Երեք շաբաթ անց՝ օգոստոսի 28-ին, Քուվեյթը պաշտո-

⁴⁶⁶ Рубби А., Палестинский марафон, М., 2001, с. 264.

⁴⁶⁷ Арафат Я., Без независимого палестинского государства не будет мира на Ближнем Востоке, Будущее европейской социал-демократии, М., 1998, с. 420.

⁴⁶⁸ Апдейк Р.Дж., Աշվ. աշխ., էջ 403:

նապես հոչակվեց Իրաքի 19-րդ մարզը և ի պատիվ Սաղդամի՝ կոչվեց «Ալ-Սաղդամիա»⁴⁶⁹: Սաղդամի այս քայլը, ինչպես նաև արաբական երկրների դատապարտող մի շարք որոշումներ էլ ավելի խորացրին ճգնաժամը:

Օգոստոսի 25-ին ՄԱԿ-ի ԱԽ-ն ընդունեց 665-րդ բանաձեռ, որով իրավունք էր վերապահում Ծոցում տեղակայված միջազգային կուալիցիայի ռազմական նավերին հսկել դեպի Իրաք և Իրաքից դուրս եկող ջրային փոխադրամիջոցները⁴⁷⁰:

Եզիջտոսի նախագահը Սաղդամին մեղադրեց ստախոսության մեջ, որին ի պատասխան ստացվեց Սաղդամի արհամարհական նամակը, որտեղ Սաղդամը, գովարանելով սեփական արժանիքները, ծաղրում էր Եզիջտոսի նախագահի հասարակ ծագումը:

Օգոստոսի 12-ին Սաղդամը ճգնաժամի լուծումը կապեց պաղեստինյան խնդրի հետ և հայտարարեց, որ Խարայելը պետք է հեռանա արաբական բոլոր գրավված տարածքներից⁴⁷¹: Թագավոր Ֆահդը և Մութարաքը կոչ արեցին արաբներին չգայթակղվել Սաղդամի անլուրը նախաձեռնություններով⁴⁷²: Արևմտյան բոլոր երկրները մերժեցին Սաղդամի առաջարկը: Եզիջտոսը ևս հանդես եկավ Սաղդամի առաջարկի դատապարտող հայտարարությամբ նշելով, որ նման ձևով հնարավոր չէ տարածաշրջանում հասնել իրական խաղաղության:

Օգոստոսի 19-ին, նպատակ ունենալով ապահովել իրեն միջազգային կուալիցիայի մարտական գործողություններից, Սաղդամն Իրաքում և Քուվեյթում գտնվող օտարերկրյա քաղաքացիներին հայտարարել էր պատանդ՝ նրանց տեղաբաշխելով բոլոր ռազմավարական շրջաններում: Օտարերկրյա բոլոր քա-

⁴⁶⁹ Жегалов В., Грозовые тучи над Заливом, նշվ. աշխ., էջ 5:

⁴⁷⁰ Резолюции СБ ООН по Ираку, принятые в период с 1990 г. по 2002 г. Սանкրաման տե՛ս և Республика Ирак в системе международных отношений, նշվ. աշխ., էջ 232:

⁴⁷¹ Апдайк Р.Дж., նշվ. աշխ., էջ 405:

⁴⁷² Известия, М., 15.08.1990.

դարացիների ելքն Իրաքից և Քուվեյթից արգելվել էր դեռ օգոստոսի 9-ին⁴⁷³: Եզիջտացիների թիվը Քուվեյթում կազմում էր 150 հազար, իսկ Իրաքում՝ 1 մինչև 600 հազար: Այդ հանգամանքը ևս առիթ էր տալիս Կահիրեին եռանդուն միջամտել իրաքա-քուվեյթյան հակամարտությանը:

Սաղդամը հայտարարեց, որ օտարերկրյա քաղաքացիներն Իրաքից և Քուվեյթից դուրս կցան միայն այն դեպքում, եթե հակահրաբրյան կոալիցիայի մասնակից երկրները պարտավորվեին շարձակվել Իրաքի վրա:

1990 թ. նոյեմբերի 29-ին ՄԱԿ-ի ԱԽ-ի 15 անդամ-պետությունների արտաքին գործերի նախարարների նիստին ընդունվեց 678-րդ բանաձևը, որին կողմ էին քվեարկել մասնակիցներից 12-ը, Եմենը և Կուրան քվեարկել էին դեմ, իսկ Չինաստանը մնացել էր ձեռնպահ: ԱԽ-ի 678-րդ բանաձևը վերջին նախազգուշացումն էր ուղղված Իրաքին, համաձայն որի, եթե Իրաքը մինչև 1991 թ. հունվարը չընդուներ ԱԽ-ի 660-րդ և 661-րդ բանաձևները և շենուանար Քուվեյթից, ապա ԱԽ-ն կհանձնարարեր իր անդամ-պետություններին ձեռնարկել բոլոր անհրաժեշտ միջոցները՝ վերոնշյալ բանաձևները կյանքի կոչելու համար⁴⁷⁴: ՄԱԿ-ի ԱԽ-ի այս բանաձևը փաստորեն վերջնագիր էր՝ ուղղված Իրաքին, և թույլ էր տալիս ԱՄՆ-ին և նրա դաշնակիցներին Իրաքի դեմ պատերազմ սկսել⁴⁷⁵:

Դեկտեմբերի 6-ին Սաղդամը հայտարարեց, որ պատրաստ էր ազատ արձակելու բոլոր պատանիներին: Սակայն Իրաքը համառորեն շարունակում էր Քուվեյթի բռնազավթումը: 1991 թ. հունվարի 16-ին Իրաքի դեմ ուղղված գործողությունների

⁴⁷³ Егорин А.З., Абдель Хамид Х.А., Война за ближневосточный мир, М., 1998, с. 77.

⁴⁷⁴ Resolutions of the United Nations Security Council and statements by its president concerning the situation between Iraq and Kuwait (2, August, 1990 – 16, November, 1994), - N.Y.: UN, 1994, p. 1-24.

⁴⁷⁵ Сафончук В.С., Дипломатическая история “Бури в пустыне”, Международная жизнь, N 10-12, М., 1996, с. 125.

նախօրեին Մուրարաքը կրկին դիմեց Հուսեյնին՝ կոչ անելով փորձել շնկել ստեղծված իրավիճակը⁴⁷⁶:

Զախոռվեցին նաև ԽՍՀՄ-ի փորձերը թույլ չտալ ամերիկյան «ուժի քաղաքականության» իրազործումը: Գորբաշովի հատուկ ներկայացուցիչ Պրիմակովի մաքրային չվերթները Բաղդադ, Էո-Ռիյադ և Դամասկոս, ինչպես նաև արևմտյան երկրներ չհանգեցրեցին հակամարտության խաղաղ կարգավորմանը⁴⁷⁷:

Իրաքի դեմ պատերազմը՝ «Փոթորիկ անապատում» ծածկանուվ, սկսվեց 1991թ. հունվարի 17-ին, ըստ Գրինվիչի, 00:00 ժամին (Իրաքի ժամանակով առավոտյան 5:00-ին)⁴⁷⁸:

Գրեթե վեց ամիս տևած քուվեյթի բռնազավթման ընթացքում իրարյան վարչակարգը մերժում էր խնդիրը խաղաղ ճանապարհով լուծելու բոլոր փորձերն ու նախաձեռնությունները: «Փոթորիկ անապատում» ռազմական գործողությունը տևեց 42 օր (հրթիռային հարվածներ), որից հարյուր ժամը հրթիռային հարվածներով ուղեկցվող ցամաքային հարձակում էր, որն ավարտվեց Իրաքի կատարյալ պարտությամբ: Իրաքը կորցրեց ռազմական ներուժի 70-80%-ը և երկրի արդյունաբերական ռազմավարական կարևորություն ունեցող կենտրոնները շահագործելու հնարավորությունից: Միջազգային գնահատականների համաձայն՝ «Փոթորիկ անապատում» ռազմական գործողության ընթացքում Իրաքում զոհվել էին ավելի քան 200 հազար զինվորականներ և խաղաղ բնակիչներ⁴⁷⁹, իսկ երկրին հասցված վնասը կազմում էր մոտ 200 մլրդ դոլար⁴⁸⁰:

⁴⁷⁶ Mayu, Cairo, 01.03. 1991.

⁴⁷⁷ Сафрончук В.С., Աշվ. աշխ., էջ 125; Рубби А., Աշվ. աշխ., էջ 272:

⁴⁷⁸ Апдайк Р.Дж., Աշվ. աշխ., էջ 440:

⁴⁷⁹ Емельянова Г.М., Влияние ирако-кувейтского кризиса на региональный баланс сил, Последствия войны в Персидском Заливе и ситуация в регионе, М., 1992, с. 52.

⁴⁸⁰ Mirza Tahir Ahmad Hazrat, The Gulf Crisis and the New World Order, International Publications Limited Islamabad, Sheephatch Lane, Tilford, Surrey, UK, 1992, p. 53; Ibrahim M.O., The Economic Impact of the War – in:

1991 թ. փետրվարի 15-ին Իրաքի ՀՀՆ-ն հայտարարեց, որ պատրաստ է քննարկելու ՄԱԿ-ի 660-րդ բանաձևը: Իրաքի նախագահի հայտարարությունը ցնցող էր, քանի որ օգոստոսի 5-ից սկսած՝ Սադրամն առաջին անգամ էր պատրաստակամություն հայտնում հեռանալու Քուվեյթից: Միևնույն ժամանակ ՄԱԿ-ում Իրաքի ներկայացուցիչ Աբդալ Ամիր Անբաթին հայտարարեց, որ եթե Իրաքի ուժքահարումը չդադարեցվեր, ապա Բաղդադը զանգվածային ոչնչացման գենը կօգտագործեր: 1991 թ. փետրվարի 18-ին Տարիկ Ազիզը ժամանեց Մուսկվա, որտեղ նրան ներկայացրին կրակի դադարեցման խորհրդային ծրագիրը: Երեք օր անց Տարիկ Ազիզը Մուսկվա հասցրեց Սադրամի պատախանը, համաձայն որի վերջինս պատրաստ էր դուրս գալ Քուվեյթից և ընդունել ՄԱԿ-ի 660-րդ և իրաքա-քուվեյթյան ճգնաժամի ընթացքում ՄԱԿ-ի կողմից ընդունված բոլոր բանաձևերը⁴⁸¹: Փետրվարի 23-ին (շաբաթ օրը իրաքյան ժամանակով 20:00-ին) Սադրամը հայտարարեց իր կապիտուլյացիայի մասին: Փետրվարի 24-ին Բուշը իրաման տվեց սկսել ցամաքային գործողությունը՝ նպատակ ունենալով ջախջախել իրաքյան զորքի մնացորդները և հնարավորության դեպքում տապալել Սադրամի իշխանությունը: Միայն փետրվարի 26-ի վաղ առավոտյան Սադրամը հայտարարեց իր ժողովրդին, որ դուրս է գալիս Քուվեյթից: Իրաքն ընդունեց ՄԱԿ-ի բոլոր 12 բանաձևերը⁴⁸²:

Փետրվարի 28-ի առավոտյան 5:00-ին Բուշը հայտարարեց, որ 6 շաբաթ տևած «Օռթորիկ անապատում» ռազմական գործողությունն ավարտված է: 1991 թ. փետրվարի վերջին Քուվեյթում գտնվող իրաքյան զորքերի մնացած մասը դուրս բերվեց երկրից: Բաղդադը պարտավորվեց փոխհատուցել Քուվեյթին հասցրած վնասը և ազատ արձակել միջազգային հակաիրաքյան կոպա-

The Gulf Crisis: Background and consequences, Wash., 1994, pp. 293-294; Исаев В., После "бури в пустыне": цена агрессии, Азия и Африка сегодня, N. 6, M., 1991, с. 9.

⁴⁸¹ Առաջին պատերազմի առաջնաշահությունը:

⁴⁸² Նույն տեղում, էջ 474:

ցիայի անդամ-պետությունների քաղաքացիներին, որոնք իբրև պատանդ մնացել էին Իրաքում⁴⁸³:

Թեև «Փոթորիկ անապատում» ուազմական գործողությունն ավարտվել էր, և Բաղդադը պարտավորվել էր կատարել 1991 թ. մարտի 2-ին ընդունված 686-րդ բանաձևը, որով Իրաքը պետք է իրականացներ Բաղդադին վերաբերող ԱԽ-ի բոլոր 12 բանաձևերը և միջոցներ ձեռնարկեր՝ համոզելու միջազգային հանրությանը, որ ինքը (Իրաքը - Գ.Գ.) այլևս սպառնալիք չէ: Սակայն Իրաքը փորձում էր խոյս տալ վերոնշյալ բանաձևերի կատարումից: Այդ նպատակով ՄԱԿ-ի ԱԽ-ն 1991 թ. ապրիլի 3-ին ընդունեց նաև 687-րդ բանաձևը (այն 14-րդն էր՝ սկսած 1990 թ. օգոստոսի 2-ից): Ապրիլի 6-ին Իրաքը պաշտոնապես հայտարարեց, որ այլ տարբերակ չունի և ստիպված է ընդունել 687-րդ բանաձևը, որը պարունակում էր հետևյալ դրույթները.

1. ՄԱԿ-ի շրջանակներում ստեղծվում էր առաքելություն՝ UNICOM իրաքա-քուվեյթյան սահմանային կարգավիճակը հսկելու նպատակով⁴⁸⁴:
2. Հատուկ կոմիտեն ՄԱԿ-ի շրջանակներում պետք է հետաքրներ և ի հայտ բերեր Իրաքում առկա բոլոր բալիստիկ հրթիռները (150 կմ-ից ավելի հեռահարություն ունեցող), քիմիական և այլ կարգի զենքերի առկայությունը;
3. Հատուկ հանձնաժողովը պետք է հսկեր իրաքա-քուվեյթյան 1963 թվականի մայիսի 20-ին ընդունված իրաքա-քուվեյթյան սահմանի մասին դեմքարակցիոն որոշումների կիրարկումը:

⁴⁸³ Кислов А., Фролов А., Ограничения гонки вооружений на Ближнем Востоке, Международная жизнь, N 2, М., 1992, с. 96.

⁴⁸⁴ Սամվելյան Վ., ՄԱԿ-ի սանկցիաները Իրաքի նկատմամբ, Մերձավոր և Միջին Արևելքի երկրներ և ժողովուրդներ, հ. 21, Եր., 2002, էջ 140, նույնի ՄԱԿ-ը և Իրաքի դեմ ԱՍԽ-ի ուազմական գործողությունների հարցը, նույն տեղում, հ. 22, Եր., 2003, էջ 119:

4. ՄԱԿ-ի շրջանակներում ստեղծված փոխհատուցման հանձնաժողովը պետք է որոշեր և վճարեր բոլոր ֆիզիկական և իրավաբանական անձանց, ովքեր տուժել էին Իրաքի ազրեսիայից⁴⁸⁵:

1992 թ. հունվարին Իրաքի դեմ պատերազմի տարեղարձի կապակցությամբ Սադրամը հայտարարեց, որ ռազմական առումով միգուցե իր զորքը պարտվել էր, բայց մնացած բոլոր տեսանկյուններից Իրաքը հաղթանակ տարած պետություն է, քանի որ կովում էր գրեթե ողջ աշխարհի դեմ:

3.3. ԵԳԻԴՏՈՒԾ ԵՎ ՈՒԺԵՐԻ ՆՈՐ ՀԱՐԱԲԵՐԱԿՑՈՒԹՅՈՒՆ ԱՐԱԲԱԿԱՆ ԱՇԽԱՐՀՈՒՄ ԻՐԱՔԻ ԴԵՄ 1991 Թ. ՊԱՏԵՐԱԶՄԻ ԱՎԱՐՏԻՑ ՀԵՏՈ

Ճգնաժամը լուրջ փորձություն էր ոչ միայն Եգիպտա-արաբական, այլ նաև Եգիպտա-ամերիկյան հարաբերությունների համար: Եգիպտոսի համար ստեղծված բարդ իրավիճակի մասին վկայում էր նախագահ Մութարաքի 1991 թ. պատերազմից հետո արած այն հայտարարությունը, որ Պարսից ծոցի ճգնաժամն իր նախազահության ամենաղծվար շրջանն էր⁴⁸⁶: Միևնույն ժամանակ պատերազմից արաբական ոչ մի պետություն այդքան ձեռքբերումներ չունեցավ, որքան Եգիպտոսը⁴⁸⁷: 1992 թ. սեպտեմբերին Մութարաքը հայտարարեց, որ միջազգային դաշինքի մասնակցությունը թույլ տվեց Եգիպտոսին երկրի տնտեսության զարգացումը խթանող անհրաժեշտ ներդրումներ ձեռք բերել⁴⁸⁸:

⁴⁸⁵ Kuwait: Statehood and Boundaries, Kuwait, 1992, p. 25.

⁴⁸⁶ Концельман Г., Арафат: От террориста к человеку мира, Ростов-на-Дону, 1997, с. 448-449.

⁴⁸⁷ Գևորգյան Գ., Եգիպտոսի դիրքորոշումը 1990-1991թթ. իրաք-բուվեյթյան ճգնաժամի հանդեպ, նշվ. աշխ., էջ 73, Լևин Օ., После войны в Заливе, Азия и Африка сегодня, N 2, M., 1992, с. 91.

⁴⁸⁸ Clawson P., Satloff R., Table of Contents Two Articles on US-Egypt

Պատերազմի հանդեպ Եգիպտոսի ձկուն դիրքորոշման արդյունքում տարածաշրջանում ձևավորվեց ուժերի նոր հարաբերակցություն, որը փորձում էր զլսավորել Կահիրեն: Ճգնաժամի ընթացքում Եգիպտոսի համար ամենակարևոր նպատակներից մեկն էր թույլ չուալ խնդրի միջազգայնացումը, ինչը, սակայն, անհնարին դարձավ՝ կապված Սաուդյան Արաբիայի և Քուվեյթի ԱՄՆ-ից օգնություն խնդրելուց հետո: Այդուհանդերձ Կահիրեն մնաց իրադարձությունների կենտրոնում՝ սատարելու համար արաբական շահերը⁴⁸⁹: Թերևս սրանով էր բացատրվում Եգիպտական 30-հազարանոց զորքի առկայությունը հակաիրաքյան միջազգային դաշինքում⁴⁹⁰: Սուլարաքին ի սկզբանե հաջողվեց հայտնվել հաղթողների շարքում, ինչը բարձրացրեց նրա հեղինակությունը Եգիպտական հասարակության շրջանում:

1991 թ. զարնանն ԱՊԼ-ի նստավայր գրասենյակը կրկին տեղափոխվեց Կահիրե, իսկ Եգիպտոսի արտաքին գործերի նախարար Խամատ Աբդ Ալ-Մագիդը նշանակվեց ԱՊԼ-ի զլսավոր քարտուղարի պաշտոնում, ինչը Եգիպտոսի ակտիվ արտաքին, մասնավորապես արաբական քաղաքականության արյունք էր⁴⁹¹: Նոյն թվականին Եգիպտոսի վարչապետի տեղակալ Բուտրուս Բուտրուս Ղալին ընտրվեց ՍԱԿ-ի զլսավոր քարտուղար, ինչը վկայում էր, որ Եգիպտոսի դերը կարևորվում էր ոչ միայն տարածաշրջանային, այլ նաև միջազգային գործընթացներում:

1991 թ. օգոստոսին ԻԿԿ-ի արտգործնախարարների՝ Ստամբուլի կոնֆերանսում ունեցած ելույթում Եգիպտոսի արտաքին գործերի նախարար Ամր Սուսան նշեց, որ Իրաքի կողմից Քուվեյթի բռնազավթումն անակնկալ էր իսլամական պետությունների համար, և այն սպառնում էր տարածաշրջանում ան-

Relations, vol. 11, July, 1998, www.meria.com, International Affairs, L., 27.10.1992, p. 24.

⁴⁸⁹ The Politics of Change in the Middle East, էջ 209-210:

⁴⁹⁰ Кини А.Г., Внешняя политика арабских стран и Израиля, М., 1999, с. 55-56.

⁴⁹¹ International Affairs, 27.03.1991.

վտանգությանը, կայունությանն ու համերաշխությանը⁴⁹²: Միջազգային կոալիցիային մասնակցությամբ Եգիպտոսը հաջողեց իր համար ապահովել մի շարք տնտեսական ձեռքբերումներ: ԱՄՆ-ը մարեց Եգիպտոսի ուազմական պարտի 6,7 մլրդ դոլար գումարը⁴⁹³: 1979 թ.-ից Եգիպտոսին ԱՄՆ-ի անվերադարձ տրամադրած գումարի ընդհանուր չափը 1998 թ. հասավ 22 մլրդ դոլարի⁴⁹⁴: Վարկեր տրամադրող Փարիզյան ակումբը մարեց Եգիպտոսի 50 մլրդ արտաքին պարտի 50%-ը, իսկ Միջազգային արժութային հիմնադրամը մշակեց Եգիպտոսին վարկերի տրամադրման հատուկ ծրագիր, որը պետք է նպաստեր երկրի տնտեսական վերակառուցմանը և արագ զարգացմանը⁴⁹⁵:

Միանալով միջազգային հակաֆրաքյան կոալիցիային՝ Եգիպտոսը ոչ միայն պահպանեց, այլ նաև ամրապնդեց երկկողմ հարաբերությունները ԱՄՆ-ի հետ, որն իր արտացոլումը գտավ Եգիպտա-ամերիկյան համագործակցության և համընդհանուր շահերի պահպանման մասին 1998 թ. հուլիսին հրապարակված ամերիկա-Եգիպտական հոչակագրում⁴⁹⁶:

Արևելագետ Դ. Կլարկը գտնում է, որ Ծոցի երկրորդ պատերազմից հետո Եգիպտոսի դերը չափազանց կարևոր էր ԱՄՆ-ի քաղաքականության մեջ, իսկ ամերիկյան դեկավար շրջանները որոշում ընդունեցին Եգիպտոսի հետ հարաբերությունների ել ավելի ընդարձակման և ամրապնդման վերաբերյալ⁴⁹⁷:

Հարկավոր է փաստել, որ առանց Եգիպտոսի աջակցության ԱՄՆ-ի զիսավորած միջազգային հակաֆրաքյան դաշինքի ուազ-

⁴⁹² Final Communique of the 20th ICFM <http://www.oic-un.org>.

⁴⁹³ Al-Ahram Weekly, Cairo, 17.09.1992.

⁴⁹⁴ Նոյն տեղում:

⁴⁹⁵ Clawson P., Satloff R., նշվ. աշխ., էջ 25:

⁴⁹⁶ Agreed Joint Statement of U.S.-Egyptian Strategic Dialog, Wash., D.C., Julay, 15.1998, <http://www.meria.com>

⁴⁹⁷ Clarke D., U.S. Security Assistance to Egypt and Israel: Political Untouchable? Middle East Journal, N 51, Sping, 1997, p. 203, www.meria.com.

մական գործողությունները կդժվարանային, քանի որ վերջինս համարվում էր արաբական երկրներից առավել ազդեցիկը: Եզիջտոսը, իրեն համարելով պաղեստինյան խնդրի լուծմանը կոչված տարածաշրջանի հիմնական պետություններից մեկը, կարողացավ առավելագույնս աջակցել նաև պաղեստինա-իսրայելական խաղաղության գործընթացին, որի անմիջական արդյունքը եղավ 1991 թ. հոկտեմբերի 30-ին ԱՄՆ-ի նախաձեռնությամբ մեկնարկած Մադրիդի խաղաղության կոնֆերանսը:

Պարսից ծոցի պատերազմի ավարտից հետո ԱՄՆ-ի նախազահ Ջ. Բուշը 1991 թ. մարտի 6-ին, ելույթ ունենալով ամերիկյան կոնգրեսի առջև, նշեց, որ ժամանակն է վերջ դնել արաբ-իսրայելական հակամարտությանը և լրջորեն զբաղվել Մերձավոր Արևելքում խնդիրների կարգավորմամբ⁴⁹⁸: Ի վերջո, ութ ամիս անց նաև պետքարտուղար Ջեյմս Բեյքերի անմիջական ջանքերով 1991 թ. հոկտեմբերին տեղի ունեցավ Մադրիդի խաղաղության կոնֆերանսը, որի համանախազահող երկրներն էին ԱՄՆ-ը ի դեմս նախազահ Ջ. Բուշի և ԽՍՀՄ-ը ի դեմս նախազահ Մ. Գորբաչովի: Հանդիպմանը մասնակցում էին Իսրայելի, Եզիջտոսի, Լիբանանի և Սիրիայի պատվիրակությունները, իսկ պաղեստինցիները ներկայացված էին հորդանանա-պաղեստինյան համատեղ պատվիրակության կազմում: Հանդիպումը բացառիկ էր, քանի որ դրան մասնակցում էին արաբ-իսրայելական հակամարտության բոլոր կողմերը, որոնք առաջին անգամ նստեցին բանակցությունների սեղանի շորջ: Եզիջտական պատվիրակությունը դեկապարում էր արտգործնախարար Ամր Մուսան: Վերջինս իր ելույթի մեջ մեծապես կարևորեց Մերձավոր Արևելքում վերջնական ու կայուն խաղաղության հասնելու, միմյանց իրավունքներն ու ինքնիշխանությունը հարգելու, հակամարտության վերաբերյալ միջազգային որոշումներն ի կատար ածելու, հանդուրժողականություն հաստատելու և վերջապես «հող՝ խաղաղության դիմաց» սկզբունքները: Կոնֆերանսի մասնակիցնե-

⁴⁹⁸ Letter of Invitation to Madrid Peace Conference, October, 30.1991. <http://www.leb.net.com>.

